

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ  
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ  
2010

ՀՏԴ 941(479.25):070:323  
ԳՄԴ 63.3 (2Հ)+76.12+66.3  
Հ 253

Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության  
Հ 253 խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները . -Եր.: Նորավանք, 2010. - 252  
էջ + Ներդիր 4 էջ:

Գրքում ներկայացվել և վերլուծվել են հետխորհրդային երկրների հայերի համայնքային ինքնության և ինքնակազմակերպման խնդիրները հիմնականում ՌԴ-ում բնակվող հայերի տասարդների հետ հեռակա հարցման արդյունքների հիման վրա: Հետազոտությունը ներառում է հետխորհրդային երկրներում հայկական համայնքների և ԶԼՄ-ի վերաբերյալ պատմական և արդի տվյալներ, ինչպես նաև տեղեկություններ վիրտուալ ցանցերում հայերի դերակատարման մասին:

Գիրքն ուղղված է ինչպես Հայության հարցերով զբաղվող փորձագիտական հանրությանը, այնպես էլ ընթերցողների լայն շրջանակներին:

ՀՏԴ 941(479.25):070:323  
ԳՄԴ 63.3 (2Հ)+76.12+66.3

ISBN 978-9939-825-04-5

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2010  
© Նորավանք, 2010

Գիրքը հրատարակվում է

ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,  
«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի  
փորձագիտական խորհրդի որոշման հիման վրա

Հետխորհրդային տարածքի հայկական  
համայնքներում տեղեկատվական և  
մշակութային ռեսուրսների  
ուսումնասիրություն

Հեղինակային խմբի ղեկավար

**Աննա Ժամակոչյան**

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական  
հետազոտությունների կենտրոնի ղեկավարի  
տեղակալ, ավագ փորձագետ

Հեղինակային խումբ

**Դիանա Գալստյան**

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական  
հետազոտությունների կենտրոնի փորձագետ

**Սամվել Մարտիրոսյան**

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական  
հետազոտությունների կենտրոնի փորձագետ

**Սոնա Մանուսյան**

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական  
հետազոտությունների կենտրոնի փորձագետ

**Վահրամ Հովյան**

«Նորավանք» ԳԿՀ Հայագիտության  
կենտրոնի փորձագետ

# Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....6

## 1. ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՈՄԱՆ ՀԱՐՑԵՐ

<i>1.1. Հայության խնդիրները հետխորհրդային տարածքում. իրավիճակի ընդհանուր նկարագրություն.....</i>	<i>10</i>
<i>1.2. Հետխորհրդային հայ համայնքների ընդհանուր և տարբերակիչ բնութագրերը.....</i>	<i>16</i>
<i>1.3. Հայ երիտասարդությունը հետխորհրդային երկրներում. սոցիալ-հոգեբանական հետազոտության որոշ արդյունքներ.....</i>	<i>25</i>
<i>1.4. Հիմնական եզրահանգումներ և առաջարկներ. հետխորհրդային երկրների հայության կազմակերպման ուղիները.....</i>	<i>62</i>

## 2. ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԵՐԻ ԳՈՐԾՈՆԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ.....71

<i>2.1. Հաղորդակցման լեզուն.....</i>	<i>72</i>
<i>2.2. Տեղակայման հարցերը.....</i>	<i>74</i>
<i>2.3. Ֆորումներ և ծանոթության կայքեր.....</i>	<i>75</i>
<i>2.4. Բլոգներ.....</i>	<i>79</i>
<i>2.5. Վիրտուալ սոցիալական ցանցեր.....</i>	<i>81</i>
<i>Եզրահանգումներ և առաջարկներ.....</i>	<i>92</i>

**3. ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ,  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ.....96**

3.1 ԲԵԼԱՌՈՒՄ.....97  
3.2 ԷՍՏՈՆԻԱ.....104  
3.3 ԹՈՒՐԹՄԵՆՍՏԱՆ.....114  
3.4 ԼԱՏՎԻԱ.....119  
3.5 ԼԻՏՎԱ.....129  
3.6 ՂԱԶԱԽՍՏԱՆ.....134  
3.7 ՂՂԸԶՍՏԱՆ.....145  
3.8 ՄՈՒԴՈՎԱ.....148  
3.9 ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ.....156  
3.10 ՎՐԱՍՏԱՆ.....184  
3.11 ՏԱԶԻԿՍՏԱՆ.....210  
3.12 ՈՒԶԲԵԿՍՏԱՆ.....216  
13.3 ՈՒԿՐԱԻՆԱ.....222

**ՀԱՎԵԼՎԱԾ**

Աղյուսակ Ա  
Հետխորհրդային տարածքի հայ բնակչությունը.....236  
  
Աղյուսակ Բ  
Հայաշատ երկրները և քաղաքները հետխորհրդային տարածքում.....238  
  
Աղյուսակ Գ  
Հայկական մշակութային-ժամանցային կայքեր.....242  
  
Աղյուսակ Դ  
«Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ)  
կառույցի մասնաճյուղերը.....245

---

## ՆԱԽԱԲԱՆ

Արդի դարաշրջանում հանրությունների անվտանգությունը և մրցակցությունը գլխավորապես պայմանավորված են նրանց ունեցած տեղեկատվական և կազմակերպչական ռեսուրսներով: Այդ համատեքստում առաջնահերթ և հրատապ խնդիրներ պետք է համարել Հայության ռեսուրսների հաշվառումը և դրանց ներուժի գնահատումը: ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և հովանավորությամբ «Նորավանք» ԳԿՀ-ն 2009թ. ձեռնարկել էր «Հայկական տեղեկատվական համայնքային ռեսուրսները հետխորհրդային երկրներում» ուսումնասիրությունը: Այս գիրքն այդ ուսումնասիրության շարունակությունն է՝ խորացնելով և թարմացնելով հետխորհրդային երկրների համայնքների մասին գիտելիքները:

Հետազոտությունում փորձ է արվել ընդհանրական պատկերացումներ ձևավորել հետխորհրդային երկրների հայկական համայնքների և տարաբնույթ լրատվամիջոցների հնարավորությունների վերաբերյալ:

Այս շարունակվող հետազոտությունը թույլ տվեց համեմատություն անցկացնել նախորդ տարվա իրողությունների հետ և պարզել, որ հետխորհրդային որոշ երկրների համայնքներում նոր թափ են ստացել ինքնակազմակերպման գործընթացները, ինչը պետք է պայմանավորել նաև ՀՀ Սփյուռքի նախարարության գործունեությամբ:

Նկատենք նաև, որ այս կամ այն պատճառներով առանձին խմբեր և անհատներ դուրս են գտնվում համայնքային ձևա-

չափերից, և ներկայումս այդ միտումը սաստկանում է: Բոլոր պարագաներում, ակնհայտ է, որ Հայությունը քաղաքակրթական ընդհանրություն հանդիսացող բարդ համակարգ է, որի հատվածների սոցիալ-հոգեբանական, ինչպես նաև աշխարհաքաղաքական կողմնորոշումները կարող են և էապես տարբերվել: Այս խնդիրների դիտարկմանն է նվիրված հետազոտության առաջին բաժինը, որը հանդիսանում է հետխորհրդային երկրների երիտասարդների շրջանում սոցիալ-հոգեբանական մեթոդաբանությամբ անցկացված հարցումների ամփոփումը:

Տեղեկատվական ռեսուրսներն ուսումնասիրելիս հաշվի է առնվել այն, որ դրանք այսօր ներառված են ոչ միայն ավանդական ՋԼՄ-ում և ինտերնետ կայքերում, այլև մեծ տարածում գտած ինտերնետային սոցիալական ցանցերում, որտեղ մեր հայրենակիցները հանդես են գալիս անհատապես կամ խմբերով: Համեմատաբար նոր այս ոլորտն ազգային տեսանկյունից ուսումնասիրելու գործը ևս շարունակություն է գտել այս գրքում:

Հետազոտության երրորդ բաժնում ներկայացված է համառոտ տեղեկատվություն հետխորհրդային համայնքների պատմության և ներկայի վերաբերյալ: Այդ բաժինը կազմելիս հեղինակների խումբը լայնորեն օգտվել է ՀՀ Մփյուռքի նախարարության ԱՊՀ հայ համայնքների և Եվրոպայի հայ համայնքների վարչությունների կողմից տրամադրված տեղեկատվական շտեմարաններից, ինչպես նաև «Հայերն աշխարհում», Երևան, 1995 (Ա.Պետրոսյան, Ա.Իսոյան, Կ.Խուդավերդյան), «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003 (գլխավոր խմբագիր – տնօրեն Հովհաննես Այվազյան) և «Հայերն աշխարհում», Երևան, 2007թ. (Միքայել Մալխասյան) արժեքավոր աշխատություններից:

---

Շեշտենք, որ տեքստում դրանց վերաբերյալ հիշատակումների բացակայությունը պայմանավորված է բացառապես բազմաթիվ հղումային կրկնություններից խուսափելու տեխնիկական նկատառումներով: Լրատվական ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը ձեռք է բերվել գլխավորապես ինտերնետային «հայկական» կայքերից՝ օգտագործելով նաև առկա բավական սակավ տպագիր աղբյուրները: Միևնույն ժամանակ, հայկական ՋԼՄ որոշ ներկայացուցիչներ (Գ.Անիսոնյան՝ «*Ноев Ковчег*», Ա.Բալայան՝ *Acher.ru*, Ա.Գիվարգիզյան՝ «*Жам*», Ա.Դավոյան՝ *ararat-online.ru*, Գ.Ղասաբով՝ *miasin.ru*, Գ.Մելքոնյան՝ *armenia.ru*, Գ.Քոչարյան՝ «*Звартноц*», Մ.Գրիգորյան՝ *diaspora.by*, Մ.Հակոբյան՝ *Analitika.at.ua*, Ս.Ստեփանյան՝ *karabah88.ru*, Տ.Թավադյան՝ «*Еркрамас*», Բ.Մխիթարյան՝ «*Хачкар*») պատրաստակամորեն արձագանքել են «Նորավանք» հիմնադրամի փորձագետների կողմից կատարված հարցումներին: Դա մեծապես նպաստել է տվյալների հավաստիության բարձրացմանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում նրանց: Համոզված ենք, որ հետագա նմանատիպ հարցումներին կարձագանքեն ավելի մեծ թվով կազմակերպություններ և անհատներ: Աշխատանքի ընթացքն իր արժեքավոր խորհուրդներով ուղղորդել է «Նորավանք» ԳԿՀ տնօրեն Գագիկ Հարությունյանը, ում ևս հեղինակային խումբը շնորհակալություն է հայտնում:

Անշուշտ, տարբեր երկրների հայ համայնքների և նրանց տեղեկատվական ռեսուրսների մասին սպառոյշ տեղեկատվություն ձեռք բերելը դժվարին խնդիր է: Պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ գլոբալ զարգացումների և հայերիս բնորոշ դինամիզմի հետևանքով հաշվառման արդյունքները ենթադրում

են շարունակական վերախմբագրումներ ու լրացումներ: Կարծում ենք, որ ստացված արդյունքները հիմք կձառայեն Հայության տարբեր խմբերի միջև գործակցող կապերի հաստատման, ինչպես նաև հետագա ուսումնասիրությունների համար, որոնք և թույլ կտան ամբողջացնել մեր պատկերացումները հայկական համայնքների վերաբերյալ և մշակել համագործակցության առավել արդյունավետ մեխանիզմներ:

**Աննա Ժամակոչյան**

---

# 1. ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐ

## *1.1. Հայության խնդիրները հետխորհրդային տարածքում. Իրավիճակի ընդհանուր նկարագրություն*

Վերջին տարիներին ակտիվացել են Հայության խնդիրների շուրջ քննարկումները թե՛ հայ հասարակագիտության մեջ, թե՛ ազգային հարցերի շուրջ խորհող անհատների շրջանում: Ամենևին ոչ պատահաբար այս հարցերը տեղափոխվել են նաև պետական հոգածության դաշտ՝ պահանջելով հատուկ, թիրախային սցենարների և մեխանիզմների մշակում: Մտահոգությունները հիմնականում վերաբերում են հայ ինքնության պահպանմանը, Հայության զարգացմանը և կազմակերպմանը, նշված հարթություններում առկա սպառնալիքներին և հնարավորություններին: Մտահոգության ավելացմանը համաչափ ծավալով չի հասցնում ավելանալ Հայության տարբեր հատվածների խնդիրների և ռեսուրսների վերաբերյալ կոնկրետ իմացությունը, և իրավիճակը հիմնականում մնում է խնդիրների գոյության փաստն արձանագրելու շրջանակում: Ի հավելումն, չնայած Հայության մեծ աշխարհագրությանը, հիմնադրված բազմաթիվ համայնքային, հասարակական և քաղաքական կառույցներին՝ Հայության կազմակերպչական ռեսուրսներն առավելապես շարունակում են մնալ որպես չօգտագործվող պոտենցիալ, քան նպատակային համատեղ գործողությունների պլատֆորմ, և ինքնին Հայությունը նման միտումների պահպանման պարագայում սպառնում է դառնալ ավելի շատ մտավոր ընդհանրացում,

քան իրական խումբ՝ իրական կոորդինատներով: Այս համատեքստում առավել քան արդիական է դառնում սփյուռքի տարբեր հատվածների իրավիճակի, ներքին բնութագրերի մասին խորքային տեղեկատվության տիրապետումը, առանց որի կազմակերպման արդյունավետ ուղիների մշակումը դժվար է պատկերացնել:

Հայության հարցերի բազմաշերտությունը պայմանավորված է ոչ միայն տարբեր համայնքների առկայությամբ և Հայաստանից հեռավորությամբ, այլև արտաքին՝ գլոբալ կարգի մի շարք գործոններով: Խնդիրները մեկուսացված չեն համաշխարհային զարգացումներից, գտնվում են դրանց համատեքստում և զգայուն են դրանց հանդեպ: Վերջին շրջանում Հայության հարցերին առնչվող քաղաքական մի շարք իրադարձություններ առաջացրին բուռն արձագանք և ներքին գործընթացներ Հայության շրջանում՝ յուրովի չափելով այդ «զգայունակությունը»: Այդպիսին էին, օրինակ, հայ-թուրքական հարաբերությունների շուրջ քննարկումների թեպետ ոչ միանշանակ, սակայն ուժեղ հակադրումները Հայության տարբեր հատվածներից: Իհարկե, արձագանքները հազեցած էին հուզականությամբ, Հայաստան-Սփյուռք փոխադարձ ընկալումների լարումով և ոչ միանշանակ իմաստավորումներով, և այս առումով խնդրահարույց էին: Մյուս կողմից, հենց այս զգայուն արձագանքի մեջ կար հայտանիշն այն բանի, որ Հայության հարցերի նշանակալիությունը, հետևաբար նաև համախմբման սաղմերը պահպանված են և ուղղորդման են «սպասում»:

Նման արտաքին և ներքին ազդեցություններից շատերն ինչ-որ ուղղությամբ կարող են ազդել տարբեր համայնքների հայերի

---

զգացողությունների և մտահոգությունների վրա, ամրության տեսակետից ստուգել Հայությանը: Անգամ անուղղակիորեն առնչվելով Հայությանը՝ այդ գործընթացներից շատերը կարող են լինել կազմակերպման համար յուրահատուկ մարտահրավեր՝ վերջինիս տակ նկատի ունենալով և՛ բացասական, և՛ դրական հնարավորությունների համադրությունը:

Հայության համախմբման և համագործակցության հարցերի համատեքստում կարևոր է երկու ընդհանուր նկատառում ևս անել.

1. Մի կողմից՝ հայի ինքնավերագրումներում, նրա սոցիալ-հոգեբանական «ինքնանկարում» բավական տարածված է պատկերացումը հայի անհատապաշտական գծի մասին, որը նրան, որպես անհատ, դարձնում է գործուկյա, նախաձեռնող, ադապտիվ և կենսունակ՝ փոխարենը խոչընդոտելով հնարավորությունների միավորմանն ու կոլեկտիվ արդյունավետությամբ գործելուն: Թեև այս պատկերացումը հաճախ հանիրավի գերընդհանրացվում է, վերածվում «կլիշեի» և դառնում հայերի կոլեկտիվ վարքի գրեթե ցանկացած վերլուծության կամ հոռետեսական կանխատեսման հիմք, այն որոշակի ճշմարտություն է պարունակում և անտեսվել չի կարող: Խնդիրն այստեղ իրական վտանգը չհիմնավորված մտայնություններից և չափազանցումներից զատորոշելն է:

2. Մյուս կողմից՝ Հայությունը սփյուռքյան երկարամյա կեցության հաշվին ունի հեռավորության վրա համագործակցելու հարուստ փորձ և լուրջ հմտություններ: Ցանցեր ստեղծելու և երևակայական պատկանելություն կառուցելու երկարամյա սփյուռքյան փորձը ներկայիս

անդրազգային գործընթացների, ցանցակենտրոն հաղորդակցման հետզհետե ահագնացող անհրաժեշտության ժամանակաշրջանում մեծ պահանջարկ ունեցող ունակություն է: Հետևաբար, այն կարող է, համապատասխան ուղղորդման դեպքում, լինել ռեսուրսային կողմ՝ դառնալով վերոհիշյալ «կոլեկտիվ ծուլության» հաղթահարման միջոցը: Առավել ևս այն դեպքում, երբ ժամանակակից տեխնոլոգիական հնարավորությունները դա լիովին թույլ են տալիս: Այժմյան սոցիալական ցանցերում Հայության, հատկապես՝ նրա երիտասարդ հատվածի ինտենսիվ հաղորդակցությունը և, մասնավորապես, այդ ցանցերի ներքո *նպատակային խմբերի* ստեղծման, դրանցում ակտիվ տեղեկատվության փոխանակման երևույթները վերոհիշյալ հմտությունների կիրառության ձևերն են, ինչը լավատեսության հիմք է տալիս<sup>1</sup>: Այդ ցանցերի աշխատանքը հուշում է, որ որևէ գործի շուրջ տեղեկատվության փոխանակումը, խմբային նպատակային գործունեության մասնակցությունը *հաջողվում է*:

Այսպիսով, «կենցաղային ինդիվիդուալիզմի» ու «վիրտուալ կոլեկտիվիզմի» այս յուրահատուկ համադրությունը թերությունից կարող է վերածվել առավելության և հակառակը: Նրանց դրական կամ բացասական ներուժը չարժե գերազնահատել կամ թերազնահատել, քանի որ դա կարող է ազդել արդյունավետ

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս «Հետխորհրդային երկրների հայերը վիրտուալ ցանցերում» բաժնում:

---

համագործակցության մեթոդաբանական մշակումների որակի վրա: Թերևս, այստեղ էական է մեկի շտկման կամ մյուսի զարգացման ուղղությամբ մշակումներ սկսելը:

Կազմակերպման հարցերն օրակարգում ունենալու հանգամանքը մի կողմից արտացոլում է այն իրողությունը, որ Հայությունը պատմության նոր փուլում աշխարհագրորեն տարաբնակեցված ազգ է, որը համախմբման կարիք ունի: Ազգային լինելիության հարցերով մտահոգ յուրաքանչյուր հայ, գիտակցելով հավաքականության անհրաժեշտությունը, միաժամանակ զգում է այդ գաղափարի իրագործման, առօրյա կյանքի հետ համատեղելու դժվարությունը, հատկապես արտերկրում բնակվելու պարագայում: Մյուս կողմից՝ Հայության շրջանում այսօրինակ հարցերի մշտական բարձրաձայնումը, դրանց քննարկումը հուշում են միավորման *պոտենցիալի* և դրա *իրականացման հնարավորության* գաղափարը: Այդպիսի հնարավորության ընդհանուր հիմքն աշխարհի տարբեր մասերում ապրող հայերի միևնույն՝ *հայկական քաղաքակրթությանը* պատկանելու, վերջինիս հոգևոր-մշակութային յուրատիպությունը կրելու ընդհանրությունն է: Այս ընդհանրության գիտակցումը և դրա կիրառումը ծրագրերի իրագործման մակարդակում Հայության կազմակերպման կարևոր հենակետ են: Բացի այդ, հայ սփյուռքի պարագան վերլուծելիս և՛ արտերկրյա, և՛ հայազգի մասնագետները նշում են նրա կայացած լինելը՝ իր տեսակային ինքնուրույնությամբ: Ուստի, համապատասխան հետազոտական խնդիր առաջ քաշելու դեպքում Հայության տարբեր հատվածների սոցիալ-հոգեբանական յուրահատկությունները՝ իրենց էական ընդհանրություններով ու տարբերություններով, կարող են

հեռանկարում միավորված-կազմակերպված գործունեության առավել արդյունավետ ուղիների մշակման հիմք դառնալ:

Այսպիսով, Հայությունը կարելի է դիտարկել որպես ընդհանրությունների և տարբերությունների բազմաբարդ ամբողջություն, որը դժվար է նկարագրել հայի կերպարի մասին տիպականացված ու կարծրացած պատկերացումներով, տալ միատարր սոցիալ-հոգեբանական նկարագիր: Տարաբնույթ է ինչպես հայության քաղաքակրթական, քաղաքական և մշակութային աշխարհագրությունը, այնպես էլ այդ տարբեր հանրույթների խնդիրները: Անշուշտ, մի շարք միտումներ և խնդիրներ ընդհանուր են գրեթե բոլոր համայնքների համար՝ պայմանավորված այլ երկրում ապրելու փաստով (օրինակ՝ ասիմիլյացիայի միտումներ, մայրենի լեզվի ուսուցման, օգտագործման և պահպանման խնդիր, մշտական բնակության երկրում սոցիալական կարգավիճակի խնդիրներ և այլն): Էական ընդհանրությունների շարքում են ոչ միայն խնդիրներ, այլև ռեսուրսային կողմեր, սակայն դրանք ոչ պակաս հստակեցման կարիք ունեն:

---

## **1.2. Հետխորհրդային հայ համայնքների<sup>1</sup> ընդհանուր և տարբերակիչ բնութագրերը**

Հետխորհրդային երկրների Հայության համար էական ընդհանրություններից մեկը, ի լրումն նույն քաղաքակրթական և էթնիկ հիմքի, նաև նախկին խորհրդային տարածքում ապրելու հանգամանքն է: Այս գործոնը կոլեկտիվ հիշողության որոշակի ընդհանուր դաշտ է ստեղծում, ինչպես նաև թելադրում վարքի և մտածողության մոդելներ, հաղորդակցման ընդհանուր տարածք և այլն: ՀՀ և հետխորհրդային մյուս երկրների հայության միջև հիմնարար ընդհանրություն է պատկանելությունը հայկական քաղաքակրթությանը և մշակույթին, այդ պատկանելության սուբյեկտիվ ապրումը, դրա հիմնական բաղադրիչները կրելու զգացումը: Բացի այդ, համայնքները բնութագրվում են հենց համատեղ խորհրդային անցյալով, ռուսալեզու մշակույթի ազդեցությամբ և խորհրդային մշակութային շերտի առկայությամբ՝ ինչպես սոցիալ-տնտեսական կյանքում, այնպես էլ հանրության սոցիալ-հոգեբանական նկարագրում: Չնայած խորհրդային անցյալին բնորոշ առանձնահատկություններին՝ այն այս դեպքում, առաջին հերթին, ընդհանուր պլատֆորմ է, ուստի մինչ օրս գործոն է ընդհանրության զգացումի համար և ընդհանրության գաղափարը կառուցելու գործում: Հետխորհրդային հայկական

---

<sup>1</sup> Սույն գլխի հետագա շարադրանքում *համայնք* հասկացությունն առավելապես կկիրառվի ոչ թե որպես ինստիտուտ, այլ վերապահումով՝ որպես ընդհանրացված հասկացություն տվյալ երկրում ներկայացված հայերի համար, քանի որ վերջիններս հաճախ դուրս են բուն համայնքային ձևաչափից:

համայնքներից ամենամեծը՝ ռուսականը, այս ընդհանրության շնորհիվ, ինչպես նաև հին ու նոր արտագաղթածների առավել մոբիլության, ՀՀ-ի հետ ֆիզիկական կապի պահպանման հաշվին հայաստանաբնակներին պատմական այս հատվածում այդքան դիստանցված չի թվում, որքան, ասենք, հայկական համայնքները սահմանակից Իրանում կամ Լիբանանում: Ելնելով համայնքների և տեղեկատվական աղբյուրների գործունեության հիմնական ուղղություններից և նպատակների ինքնաներկայացումից՝ հետխորհրդային սփյուռքի գրեթե բոլոր համայնքներն ունեն մի շարք ընդհանուր գերակայություններ (ազգապահպանում, մշակութային ինքնաներկայացում, կապ Հայաստանի հետ, Ցեղասպանության ճանաչում, ԼՂՀ խնդիր):

Գրեթե բոլոր համայնքների դեպքում նկատելի է նաև ինքնության պահպանման հիմնական կառույցներն ու ատրիբուտները պահպանելու ջանքերի դժվարությունը: Օրինակ՝ կիրակնօրյա հայկական դպրոցների սահմանափակ ազդեցությունը նոր սերնդի վրա, վերջին ճիգերով դրանց գոյատևումը, հայերենի ուսուցանման օրակարգային հարցը:

Որոշ դեպքերում սոցիալական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ գործոնների առումով բավական տարբեր երկրների հայ համայնքները որևէ կոնկրետ ոլորտում ընդհանուր խնդիրներ ունեն: Օրինակ՝ ինքնության այնպիսի առանցքային բաղադրիչի պահպանման համար, ինչպիսին լեզուն է, անբարենպաստ պայմանների առումով խնդիր ունեն և՛ Ջավախքում, և՛ Թուրքմենստանում բնակվող հայերը:

Հետխորհրդային տարածքի հայ համայնքները, ինչպես նաև նրանց կողմից գործարկվող տեղեկատվական աղբյուրները

---

բնորոշվում են նաև *ընդհանուր թեմաներով և մտահոգություններով*, որոնք տեսանելի են ինչպես հայկական տեղեկատվական կայքերի, այնպես էլ հայ համայնքների նպատակների ձևակերպման մեջ: Այդ թեմաներից են ՀՀ ներքաղաքական և արտաքին քաղաքական կյանքը, Ցեղասպանությունը, ԼՂՀ խնդիրը, հայ ինքնության պահպանումը, հայրենիքի ինքնաներկայացումը բնակության երկրին, տոները և հիշատակի օրերը, հայերի մշակութային յուրահատկության ատրիբուտները (խոհանոց, հումոր և այլն): Այս թեմաների շնորհիվ նրանք պահպանում են հաղորդակից լինելու զգացումը, հայկականության անհրաժեշտ «ֆոնը», սակայն դժվար է դրանք գնահատել որպես համատեղ նախագծերի բավարար հիմք:

Հայաստանից դուրս հաստատված համայնքներն այլ մշակույթում ապրելու և կենսագործելու, փոքրամասնություն լինելու հաշվին արդեն իսկ ունեն մի շարք սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ. նրանք, ի տարբերություն հայրենաբնակ հայերի, երկմշակութային իրադրության մեջ են և ունեն առնվազն երկու խնդիր-առաջադրանք.

1. ինտեգրվել բնակության երկրի սոցիալական ու մշակութային իրականությանը,

2. նույնականանալ սեփական էթնիկ հանրայթին, պահպանել այդ ինքնությունը:

Այդպիսով, նրանց խնդիրն է ինքնագիտակցության մեջ համադրել իրենց երկու՝ հաճախ խիստ տարբերվող պատկանելությունները: Երկմշակութային լինելը դրական ռեսուրս է համարվում, քանի որ հարստացնում է տվյալ անձին, նրա աշխարհայացքը, ոմանց անգամ դարձնում է կապող օղակ երկու

մշակույթների երկխոսության համար: Սակայն երբ չի հաջողվում ինտեգրել այս երկու ինքնությունները, գործ ենք ունենում ոչ թե երկմշակութային, այլ մարզինալ անձի հետ, որն ունի ինքնության շփոթ, «ոչ այստեղ է, ոչ այնտեղ», դառնում է սոցիալապես, հոգեբանորեն և մշակութապես խոցելի և չի կարողանում արդյունավետ գործել խմբերից որևէ մեկի անունից: Չհաջողված համադրման մյուս հնարավոր զարգացումը ձուլումն է, երբ անհատն այս կամ այն պատճառներով նախընտրում է չտարբերվելու, դոմինանտ մշակույթին ձուլվելու տարբերակը:

Այսպիսով, հետխորհրդային տարածքի հայ համայնքների խնդիրն առնչվում է նաև մշակութային ասիմիլյացիայի խնդրին, որն, ինչպես վկայում են տարբեր հասարակագիտական աղբյուրներ, Արևմուտքի կամ իսլամական երկրների հայ համայնքների համեմատ, հետխորհրդային երկրներում ավելի արագ է ընթանում: Մա կարող է պայմանավորված լինել մի քանի գործոններով: Մասնավորապես, օրինակ, ռուսերենը շատ հայերի կողմից չի դիտվում որպես օտար լեզու, ինչն արագ հանգեցում է համատարած ռուսախոսության և հայերենի արտամղման: Այս հանգամանքին նպաստում է այն, որ ռուսական միջավայրը մի շարք քաղաքակրթական ընդհանրությունների, և ընդհանուր անցյալի հաշվին հակադիր մշակույթ չի ընկալվում, և դրա հաշվին ձուլվելուն դիմադրելու հստակ մեխանիզմներ և սահմանագծեր չեն հաստատվում, էթնոտարբերակիչ հատկանիշներ չեն ընդգծվում: Բացի այդ, Ռուսաստանի պարագայում ոչ ռուս անբարենպաստ դիրքորոշումը, չտարբերվելու և ռուսականանալու արտոնությունները բերում են նրան, որ կաշկանդվածի, խտրականություն զգացողի կարգավիճակից խուսափելու համար արտագաղթած

---

հայերն արագ կոնֆորմացվում են բնակության երկրին: Խնդրի դրսևորման օրինակ է այն, որ նույնիսկ նոր արտագաղթած հայ երիտասարդները փորձում են ընդառաջ գնալ «լավ» ռուսաստանցի լինելու տարբերակին՝ արագ արտամղելով հայերենը: Ուշագրավ է, սակայն, որ նույն ռուսախոսությունը միջինասիական ու Կենտրոնական Ասիայի երկրների պարագայում գործում է որպես էթնոտարբերակիչ հատկանիշ, որով տեղի հայերը, ունենալով այլընտրանք բնակության երկրի լեզվին, իրենց կարողանում են առանձնացնել դոմինանտ մշակույթից և այդպիսով չասիմիլացվել: Ռուսերենի կիրառումը համանման նշանակություն ունի նաև թբիլիսահայերի շրջանում:

Մինևույն ժամանակ, ասիմիլյացիայի խնդիրներ քննարկելիս հարկ է այն իմաստային առումով տարանջատել ակուլտուրացիայի հասկացությունից: 1. Ակուլտուրացիան չպետք է նույնացնել ասիմիլյացիայի՝ ուծացման հետ, վերջինս ակուլտուրացիայի հնարավոր հետևանքներից մեկն է միայն, 2. ակուլտուրացիայի գործընթացները մեքենայաբար չեն բերում սեփական մշակույթի կորստին կամ օտարի ընդունմանը, այլ կարող են ձուլման կամ երկմշակութային տարրերի համադրման միջոցով բերել միանգամայն նոր մշակութային ձևերի, և սա վերաբերում է հատկապես սփյուռքյան խմբերի ինքնություններին, 3. ակուլտուրացիայի գործընթացը պարտադիր չէ, որ անընդհատ առաջ ընթանա, այլ դիմադրող շարժումների միջոցով կարող է դանդաղել, կանգնեցվել կամ այլ հունի մեջ դրվել: Դոմինանտ մշակույթում ապրող էթնիկ մշակույթը կարող է ասիմիլյացիային զգալի չափով արդյունավետ դիմակայել, և սրա հիմքում ընկած է ձգտումը՝ իրենց մշակութապես և էթնիկապես տարանջատել, պահպանել սահմանագիծը: Ընդ

որում, սա չի ենթադրում մեկուսացում և փոխգործողության քացակայություն երկրի հիմնական ազգության քաղաքացիների հետ: Պատահական չէ, որ «մշակութային դիմակայություն», «դիմադրող ինքնություն» հասկացությունների կողքին ինքնության պահպանման համար նշանակալի դրական գործոն է համարվում հենց ակտիվ ինտերակցիան սոցիումի հետ:

Թեպետ ընդհանուր գծերով շատ խնդիրներ նմանատիպ են, հետխորհրդային տարբեր երկրների հայ համայնքների տարբերություններն էապես պայմանավորված են ընդունող երկրի սոցիալական, կրոնական, տնտեսական և այլ առանձնահատկություններով: Հետխորհրդային տարածքը չափազանց մեծ աշխարհագրություն է՝ բոլոր համայնքների համար կիրառելի քանաձևեր կազմելու համար: Կոնկրետ խնդիրների հարթությունում այս երկրների հայության մեջ կարելի է ամրագրել որքան ընդհանրություններ, նույնքան էլ անհամասեռություն: Տարբեր է ամեն երկրի կամ տարածաշրջանի մշակութային և քաղաքական համատեքստը, ուստի տարբեր են նաև այն գործոնները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են տվյալ երկրում համայնքի հայկական ինքնատիպության պահպանմանը, ներքին կազմակերպմանը, ինչպես նաև հայկական քաղաքակրթությանը պատկանելության և Հայաստանի (ՀՀ, ԼՂՀ և այս համատեքստում՝ Ջավախք) հետ կապվածության զգացմանը: Տարբեր են, օրինակ, մայրենի լեզվի օգտագործման հնարավորությունները, ինչպես նաև այն պահպանելու ներքին մոտիվացիայի աստիճանը: Ի հավելումն, կարող է տարբերվել խնդիրների առաջնահերթությունը՝ սկսած ընդունող երկրի զբաղվածության ոլորտում ինտեգրվելուց մինչև հայկական դպրոց հիմնադրելու իրավունք

---

ստանալու հարցեր:

Լայն ընդգրկում ունի նաև հետխորհրդային երկրների հայ համայնքների սոցիալ-հոգեբանական նկարագիրը. այն ներառում է տնտեսական ազդեցիկ ռեսուրսների տիրապետող և Հայաստանի հետ ակտիվ կապեր ունեցող ռուսահայ որոշ համայնքներ, բայց և ցածր սոցիալական «նիշա» զբաղեցնող և մշակութային անհանդուրժողականության ներքո իրենց ինքնությունը հատվածաբար պահպանող, Հայաստանի հետ թույլ կապով և նվազ մոբիլությամբ բնութագրվող հայկական համայնքներ, ինչպես որոշ միջինասիական երկրներում:

Հետխորհրդային երկրների հայերի իրավիճակը մանրամասնելուց առաջ տեղին է նախնական վերապահումներ անել՝ ցանկացած գործոն դիտարկելիս.

1. Նմանություններն ու տարբերությունները համայնքների կամ տեղեկատվական ռեսուրսների բնութագրիչների միջև ուղղակիորեն չեն կարող դիտվել որպես համապատասխանաբար միավորող կամ տարամիտող գործոններ:

2. Տարբերությունները ոչ պակաս, քան ընդհանրությունները, բազմազանության և փոփոխացման շնորհիվ կարող են հանդես գալ իրենց ուժեղ կողմով՝ որպես հավաքականության և համագործակցության հիմք: Անգամ ընդգծված տարբերությունների ու տարբեր տեսլականների հետ աշխատանքը չպետք է հանգեցվի դրանք համահարթեցնելու ջանքերի:

Այսպիսով, ՀՀ և հետխորհրդային մյուս երկրների հայության յուրահասկություններից յուրաքանչյուրը դիտարկելիս կարող ենք շարժվել և՛ խոչընդոտող գործոններ, և՛ ներուժ տեսնելու տրամաբանությամբ՝ կանխավ չբացառելով դրանցից ոչ մեկը: Անշուշտ, համայնքներից յուրաքանչյուրի *սպեցիֆիկ խնդիրները և ռեսուրսները* հնարավոր է երևան բերել միայն առանձին համայնքների խոր ուսումնասիրությունների շնորհիվ:

**Հայ համայնքային ռեսուրսի կազմակերպման խոչընդոտների կամ տարամիտող գործոնների** շարքում կարելի է դիտարկել հետևյալ առանձնահատկությունները.

- Հայաստանի և Հայաստանից դուրս բնակվող հայության նկատելի տարբերությունները հայրենիքի վերաբերյալ ունեցած տեսլականների, ներդրվող ջանքերի ուղղվածության առումով:

- Բնակչության երկրում մարզինալությունը հաղթահարելու, լիարժեք ինտեգրվելու նկատառումներով դրսևորվող որոշակի զգուշավորություն և պասիվություն՝ հայրենիքի իրադարձություններին գործողությունների մակարդակում մասնակից լինելու առումով:

- Բնակչության երկրում առօրեական խնդիրների լուծման անհրաժեշտությունը, որը նվազեցնում է ավելի լայն, համազգային հարցերում ներգրավվելու օբյեկտիվ հնարավորությունը և այդպիսի ներգրավման սուբյեկտիվ կարևորումը:

- Ձևավորված որոշակի հոգեբանական «հեռավորությունը» հայաստանաբնակ հայերի հետ, փոխադարձ թերահավատ դիրքորոշումներն ու բացասական վերագրումները, փոխադարձ

---

վստահության պակասը՝ լայն իմաստով:

- Հայաստանի երիտասարդների՝ ռուսերենի իմացության և կիրառության հետզհետե արտամղումը, ինչը որոշակի խոչընդոտ է դառնում հետխորհրդային տարածքի ռուսախոս հայերի հետ կապի տեսանկյունից (այս խոչընդոտը ներկա միտումների պահպանման պարագայում պետք է որ ավելի ուժգնանա):

- Որոշ դեպքերում՝ հնարավոր տարաձայնություններ, ներքին անհամերաշխություն կամ թույլ կապեր տեղի հայության շրջանում, ինչպես նաև ստեղծվող համայնքային և մշակութային կառույցների կարճատև կամ ժամանակի ընթացքում ֆորմալ դարձած բնույթը:

- Իդեալականացված դրական ինքնավերագրումները հայ ազգի գորեղության, թաքնված առաքելություն ունենալու, վաղ թե ուշ հզորանալու վերաբերյալ, որոնք անգործունության մղելու վտանգ են պարունակում՝ իրական գործողության փոխարեն անհատին տեղափոխելով պասիվ երևակայության հարթություն: Այսպիսի պատկերացումներին զուգահեռ ԱՊՀ տարածքի հայերի մեջ նկատելի է նաև հակադիր, բայց դարձյալ վտանգավոր միտումը՝ սեփական պետության և ազգի վերաբերյալ թերահավատություն պարունակող դիրքորոշումներ:

- Համայնքների կարիքների և նրանց տրամադրած տեղեկատվության հանդեպ ոչ բավարար զգայունակությունը Հայաստանում:

- Այն հանգամանքը, որ ՀՀ և սփյուռքի հայերի շրջանում ազգային ինքնության ընդհանրությունները խարսխված են ավելի շատ անցյալի վրա՝ պատմականության, մշակութային հարուստ ժառանգություն կրելու, չլուծված պատմական հարցերը

կարևորելու առումով: Փոխարենը, ինքնության ներկա կամ ապառնի բնութագրերը, այն է՝ ինչպիսին է կամ պետք է լինի և գործի հայր, երկու խմբերում էլ բավարար հստակ ձևակերպված չեն, մինչդեռ համատեղ նպատակային գործունեությունը կառուցվում է հենց այս բաղադրիչների շուրջ:

### ***1.3. Հայ երիտասարդությունը հետխորհրդային երկրներում. սոցիալ-հոգեբանական հետազոտության որոշ արդյունքներ***

#### **Համայնքի արդի սոցիալ-հոգեբանական ըմբռնումը**

Ավանդաբար «համայնք» հասկացությունը նշանակում է ընդհանուր տեղանքում բնակվող, փոխգործակցող մարդկանց խումբ: Հասկացությունը հաճախ կիրառվում է նաև այնպիսի խմբի վերաբերյալ, որը կազմակերպված է ընդհանուր արժեքների շուրջ և բնութագրվում է սոցիալական համերաշխությամբ: Համացանցի ի հայտ գալուց ի վեր համայնքի կոնցեպցիան այլևս չի ենթադրում աշխարհագրորեն գծված սահմանների առկայություն, քանի որ մարդիկ այժմ կարող են վիրտուալ կերպով «հավաքվել», կիսել ընդհանուր շահեր և գործել դրանց իրականացմանը հետամուտ՝ անկախ ֆիզիկական տեղակայումից: Հայության տարբեր համայնքների միջև հաղորդակցումն այսօր մեծ չափով իրականացվում է սոցիալական ցանցերում ներգրավման շնորհիվ. ցանցերն, ի թիվս այլ նպատակների, դիտվում են որպես քաղաքական համախմբման և ազդեցության աղբյուր: Պատահական չէ, որ ողջ սոցիալ-տեգորիան, Բ.Անդերսոնի ձևակերպմամբ, դառնում է

---

երևակայական համայնք՝ հանրություն, որի անդամները կառուցում են իրենց պատկանելությունը<sup>1</sup>: Տեղայնացված համայնքներից աստիճանական անցումը «երևակայված» համայնքների, պատկանելությունների վիրտուալ կառուցումը, մի կողմից, վկայում է իրական ընդհանուր «հողի» պակասի մասին, սակայն մյուս կողմից ուղենշում է իրականություն կառուցելու և այն ցանկալի բովանդակությամբ հագեցնելու պոտենցիալը: Բացի այդ, վերջին շրջանում արտերկրում բնակություն հաստատող հայերի շրջանում համայնքային կյանքի դասական կենսաձևին հետզհետե փոխարինելու են եկել այլընտրանքային, ավելի անհատականացված ձևեր, ուստի համայնք հասկացությունն առավելապես կիրառում ենք որպես տվյալ բնակության վայրի քիչ թե շատ ակտիվ ներքին կապերով և հայրենիքի հետ կապերով բնութագրվող մարդկանց հավաքական խումբը, որի «անդամներն» իրականում կարող են և ոչ մի անգամ հանդիպած չլինել: Այս իմաստով թույլ համայնքային կապերը կնշանակեն առաջին տեղեկատվության փոխանակման և համատեղ գործողությունների ցածր մակարդակ և ոչ թե հաճախակի հանդիպումների բացակայություն: Այս վերապահումը կարևոր ենք համարում այն առումով, որ շարադրանքում համայնք հասկացությունը հաճախ կարող է հանդիպել հենց այս և ոչ թե կառույցների իմաստով:

Համայնքների, համայնքային ինքնության, պատկանելության հետ կապված զգացումների և ներգրավվածության խնդիրների

---

<sup>1</sup> Տե՛ս *Benedict Anderson, "Imagined Communities: Reflection on the origin and spread of nationalism"*, Verso, 2006.

հոգեբանական ուսումնասիրման շրջանակներում օգտակար է դիմել *McMillan*-ի ու *Chavis*-ի մոտեցմանը: Մասնավորապես, այդ մոտեցման շրջանակներում նրանք առաջ են քաշում *համայնքի հոգեբանական զգացում*<sup>1</sup> հասկացությունը, որը ներառում է 4 հիմնական բաղադրիչ.

*Անդամություն*, որը ենթադրում է պատկանելության զգացում/նույնականացում, սահմանների առկայություն, ընդհանուր խորհրդանշական համակարգ:

*Ազդեցություն*. համայնքի անդամներն իրենց որոշակի ազդեցությունը խմբում և խմբի համար զգալու կարիք ունեն, ինչպես նաև խումբը պետք է իր որոշակի ազդեցությունն ունենա անդամների վրա:

*Ներգրավվածություն և պահանջունքների իրագործում*. համայնքային զգացումի համար էական է անդամների մասնակցային դիրքորոշումը, և այդ մասնակցության համար անդամներն իրենց որևէ կերպ *պարզևատրված* զգալու կարիք ունեն<sup>2</sup>:

*Հուզական կսպ* համայնքի հետ և անդամների միջև. սա համայնքի արդյունավետ գործառության համար վճռորոշ տարր է համարվում:

---

<sup>1</sup> Համայնքի զգացումի ինդեքսը՝ *SCI* կոչվածը, մշակվել, լրամշակվել և ադապտացվել է *Chavis*-ի և այլոց կողմից: Չնայած այն ի սկզբանե նախատեսված է եղել հարևան համայնքների մոտ համայնքի զգացումը գնահատելու նպատակով, ինդեքսն ադապտացված է և կիրառելի նաև դպրոցներում, էթնիկ և կրոնական համայնքներում, աշխատավայրում համանման զգացումը դուրս բերելու համար:

<sup>2</sup> Այս և նախորդ գործոնին բավական համահունչ են ՀՀ Սփյուռքի նախարարության՝ սփյուռքի հայ համայնքների տարբեր գործիչներին (օրինակ՝ մանկավարժներ) հայապահպանման մեջ իրենց ավանդի համար պարզևատրելու կարևոր նախաձեռնությունները:

---

Ընդ որում, հուզական կապի համար անհրաժեշտ է արդյունավետ փոխգործակցություն: Վերջինս առավել հաջողված է, եթե անդամները զգում են իրենց մասնակցությունն իրենց համար հասկանալի, քիչ թե շատ կանխատեսելի արդյունք ունեցող իրադարձությունների, մինչդեռ անորոշ հիմքով փոխգործակցությունը խոչընդոտում է խմբային համախմբվածությանը: Բացի այդ, իրադարձությունը պետք է նշանակալի լինի անդամների համար, որպեսզի միավորի խմբի անդամներին և նպաստի կապերի ամրապնդմանը (մեր համայնքների դեպքում նման նշանակալի իրադարձության տիպական օրինակ է ցեղասպանության հիշատակի օրը և այդ օրվան մոտ շրջանում համատեղ միջոցառումների իրականացումը): Հուզական կապի առումով կարևոր է նաև *անձնական ներդրումը*, համայնքն ավելի կարևոր է այն անհատի համար, ով ավելի շատ ներդրում է ունեցել դրա համար:

Այսպիսով, համայնքային զգացումը ենթադրում է համայնքի այլ անդամների հետ փոխադարձ կապ, այդ կապը պահպանելու պատրաստակամություն, ինչպես նաև անհատի այն զգացումը, որ ինքը մասն է ավելի մեծ, հուսալի և կայուն կառուցվածքի, և որ առանձին անդամների պահանջմունքները բավարարվելու են համայնքին պատկանելու, այսինքն՝ միմյանց հետ լինելու շնորհիվ և միջոցով:

Համայնքների աջակցման և զորեղացման համապատասխան ծրագրերին անհրաժեշտաբար պետք է նախորդի 1. համայնքի այս ներքին օրինաչափությունների մասին ընդհանուր բավարար իմացությունը, 2. այնպիսի հետազոտությունները, որոնք թույլ կտան նախնական, բայց առավել որոշակի պատկերացում ունենալ նրանց ներկայիս նկարագրի, կազմակերպման խնդիրների և

հնարավորությունների մասին: Նշվածն ուղղակիորեն կապված է այդ հայ համայնքները ներկայացնող առանձին անհատների ինքնության, ազգային պատկանելության և բնակության երկրում ապրելու հետ կապված զգացողությունների, պատկերացումների, տեսլականների, ներգրավվելու պատրաստականության պարզաբանման հետ: Այսինքն՝ հոգեբանական տեսանկյունից հետխորհրդային տարածքի հայության հարցերի ուղղությամբ աշխատելը ենթադրում է համայնքները ներկայացնող կոնկրետ անհատի՝ որպես այդ համայնքի միավորի ուսումնասիրություն, քանի որ կրողը ցանկացած ինքնության, որը կարիք ունի պահպանման և զարգացման, դրսում, սփյուռքյան համայնքում ապրող անհատն է՝ իր ակտիվությամբ, ներգրավվածությամբ, իր ինքնության համար դիմադրությամբ կամ դրա բացակայությամբ: Նրանում են «տեղակայված», և ոչ թե վերացականորեն հայությանն են բնորոշ, և՛ դժվարությունները, և՛ ռեսուրսները:

Այսպիսով, սույն աշխատանքի շրջանակներում իրականացվել է հետխորհրդային երկրների հայության սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով ակտիվ հայ երիտասարդների շրջանում անցկացված հարցումների միջոցով առավել ճշգրիտ տվյալներ ստանալ վերոհիշյալ ասպեկտների շուրջ:

---

## Հետազոտության մեթոդները և կազմակերպումը

Ելնելով հետազոտության նպատակից ու յուրահատուկ խնդիրներից՝ մշակվել և կիրառվել են հետևյալ մեթոդները.

- մշակվել է մի շարք ոլորտների բացահայտմանն ուղղված համակցված սոցիալ-հոգեբանական հարցաթերթ: Հարցաթերթի մշակման համար մասամբ հիմք է ծառայել վերը նշված՝ համայնքային զգացումի հոգեբանական ուսումնասիրման «Համայնքի զգացումի ինդեքս» մեթոդը (*McMillan-ի* և *Chavis-ի* հեղինակմամբ): Այդ մասով հարցաթերթը ներառել է հարցեր ըստ նշված մեթոդիկայի կառուցվածքի 4 հիմնական բաղադրիչների (*անդամություն/նույնականացում, ազդեցություն, ներգրավվածություն, հուզական կապ*)՝ ձևափոխված և հարմարեցված հայության և հայ համայնքների համատեքստին: Հարցաթերթը համալրվել է Հայաստանի, ինչպես նաև բնակության երկրի հետ առնչություններին՝ հուզական կապերի և իրական փոխգործողությունների մակարդակին, ինչպես նաև տեղեկատվական ակտիվությանը վերաբերող հարցերով:

- Ուսումնասիրվող խմբում ազգային ինքնության միտումներն ավելի հստակ պատկերացնելու նպատակով կիրառվել է «Էթնիկ նույնականացման տիպեր» հոգեբանական թեսթային մեթոդիկան (հեղինակ՝ Գ.Ու. Սոլդատովա), որն ավելի մանրամասն կներկայացնենք վերլուծության վերջին հատվածում:

Հարցմանը մասնակցած՝ հետխորհրդային տարածքի հայ երիտասարդների խումբը ներառել է Հայաստանում հետխորհրդային երկրներից ժամանած ուսանողների, ինչպես նաև երիտասարդների, ովքեր լրացրել են համացանցի (սոցիալական

ցանցերի և էլփոստերի) միջոցով տարածված հարցաթերթերի էլեկտրոնային տարբերակները: Հետազոտությանը մասնակից հարցվողների խումբն են կազմել 18-35 տարեկան 31 հայ երիտասարդ (18 արական և 13՝ իգական սեռի) Ռուսաստանից (23 հոգի), Վրաստանից (6 հոգի), մեկական հոգի Ուկրաինայից և Մոլդովայից: Հաշվի առնելով հարցվողների խմբի հիմնական կազմը՝ ՌԴ-ում (հիմնականում՝ մայրաքաղաք Մոսկվայում) ապրող հայ երիտասարդները, հետազոտության արդյունքները և դրանց հիման վրա արվող մեկնաբանությունները կոնկրետ իմաստով վերաբերում են այդ երկրի հայությանը, սակայն միտումներ արձանագրելու մակարդակում կիրառելի են նաև հետխորհրդային այլ երկրների հայ երիտասարդության մասին պատկերացումներ կազմելու համար:

### **Հետազոտվող խմբի ընդհանուր նկարագիրը**

Հետազոտվողների մեծ մասը հայկական ուղղվածության սոցիալական ցանցերում և բլոգներում ակտիվ երիտասարդներն են: Հաշվի առնելով հարցվողների խմբի՝ արձագանքների հիման վրա ձևավորված լինելը, կարելի է նշել, որ հետազոտության արդյունքներն առաջին հերթին ներկայացնում են երիտասարդների այն հատվածը, ովքեր որոշակիորեն զգայուն են Հայության հարցերի հանդեպ: Նրանք հետևում են Հայությանն առնչվող զարգացումներին և տեղեկատվական հոսքերին, ինչպես նաև ակտիվության և տեղեկացվածության ընդհանուր առմամբ բարձր մակարդակի հաշվին ինֆորմատիվ են՝ տեղի հայության խնդիրները փոխանցելու առումով: Հարկ է նշել նաև,

---

որ հարցվողների մեծ մասն ինտելեկտուալ ոլորտում աշխատող մասնագետներ են՝ համակարգչային մասնագետներ, տնտեսագետներ, իրավաբաններ, լեզվաբաններ, արվեստագետներ, ովքեր աշխատում են հիմնականում բիզնեսի, լրագրության, տեղեկատվական տեխնոլոգիաների և արվեստի ոլորտներում: Այս առումով ևս նրանք Հայության ռեսուրս են իրենց բնակության երկրներում, ում հետ իմաստ ունի որոնել օպտիմալ համագործակցային կապերի հաստատման ուղիներ: Հարցվողների խմբում քանակապես փոքր-ինչ գերակշռել են տղամարդիկ, ինչը վկայում է տղամարդկանց առավել մեծ ակտիվությունը հայկական ուղղվածության սոցիալական ցանցերում: Հետազոտվողների գերակշռող մասը, հատկապես Ռուսաստանում բնակվողները, ծնվել և մի քանի տարի անցկացրել է Հայաստանում, իրենց ներկայիս բնակության երկրում են ծնվել Վրաստանից մասնակցածները և ռուսաստանաբնակ հարցվողների փոքր մասը: Մասնակիցների մեծ մասը բնակության երկրներում ապրում է 10-ից ավելի տարի, այսինքն՝ գիտակցական կյանքի հիմնական մասն անցկացրել է այնտեղ և մեծ հավանականությամբ արդեն ինտեգրված է տվյալ երկրի սոցիալական միջավայրին ավելի, քան հայաստանյան հասարակությանը:

Տեղի հայության հետ հարաբերությունների, Հայաստանի հետ առնչությունների և ինքնության հետ կապված կոնկրետ հարցերի պարզաբանումն անհրաժեշտ է դարձնում նաև մշտական բնակության երկրում առկա գործոնների, այդ երկրի մասին նրանց պատկերացումների և զգացումների պարզաբանում, քանի որ վերջիններս ևս որոշակի համատեքստ են, որում ձևավորվում և պահպանվում են հայրենակիցների և հայրենիքի հետ հարաբերությունները: Ուստի, հարցաթերթը ներառել է հարցեր բնակության

Երկրում ապրելու դրական և բացասական գործոնների, բնակության երկրին կապվածության, հիմնական ազգության հետ շփումների, վստահության և մի շարք այլ ոլորտների վերաբերյալ:

### **Առնչությունները մշտական բնակության երկրի հետ**

Բնակության երկրում ապրելու տեսակետից դրական գործոնների շարքում նշվել են առաջին հերթին *աշխատանքի տեղավորման հնարավորությունները, մասնագիտական և անձնային աճի* հնարավորությունները, և հարազատներին ու բարեկամներին մոտ լինելու հանգամանքը: Նշանակությամբ երկրորդ տեղում են *կյանքի որակը և սոցիալական ապահովվածությունը*, ինչպես նաև *անձնային ազատության* գործոնները:

Ուշագրավ է, որ նշված ոլորտները Հայաստանում ապրելու տեսակետից մատնանշվել են որպես խնդիրներ. այդպիսիք են, մասնավորապես, աշխատանքի տեղավորման հարցերը, կյանքի որակը, նյութական/սոցիալական անապահովությունը, ինչպես նաև մասնագիտական և անձնային աճի, անձնային ազատության սահմանափակումները: Այս տեսակետից կարելի է նկատել, որ բնակության երկրում հայերին «պահող» գործոնները միաժամանակ Հայաստանից «հետ պահող» գործոններ են: Ի լրումն, այդ գործոնների հիմքում ընկած են ոչ միայն նյութական, այլև սոցիալ-հոգեբանական, առավելապես ներքին պայմանավորվածություն ունեցող պահանջումներ, մասնավորապես՝ հաղորդակցման, աճի և զարգացման պահանջումների բավարարումը կամ չբավարարումը:

Բնակության երկրում ապրելու տեսակետից առկա խնդիրների

հարցին ամենահաճախ հնչած պատասխաններն են՝ *Հայաստանից հեռու լինելը*, Հայաստանի հետ ոչ բավարար կապերը և հայերեն կրթության/դպրոցների սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև տվյալ երկրի հիմնական բնակչության անբարեհաճ վերաբերմունքը: Պատասխանների այսպիսի ուղղվածությունը մատնանշում է, որ Հայաստանը՝ որպես գործոն, պահպանում է իր նշանակալիությունը: Պատասխանները նաև հուշում են, որ հայերենից դուրս ապրելու խնդիրներն առաջին հերթին գիտակցվում են որպես ինքնության և դրա պահպանման հարցեր:

**Աղյուսակ 1.1**

***Բնակության երկրում ապրելու տեսակետից նշվող դրական գործոնները***

	<b>թիվը</b>	<b>տոկոսը<sup>1</sup></b>
1 Աշխատանք գտնելու հնարավորությունները	15	48.4%
2 Մասնագիտական աճի հնարավորությունները	15	48.4%
3 Սոս լինելը հարազատներին/ընտանիքին/ընկերներին	15	48.4%
4 Կյանքի որակը/կենսամակարդակը	10	32.3%
5 Սոց. ապահովվածությունը, տնտես. հնարավորությունները	10	32.3%
6 Անձնային ազատությունը	9	29.0%
7 Կրթություն ստանալու հնարավորությունները	6	19.4%
8 Բնակության վայրում հայրենակիցների մեծ քանակը	6	19.4%
9 Բնակության երկրի մշակույթը և մարդիկ	5	16.1%
10 Անվտանգության զգացումը	1	3.2%
11 Այլ պատասխաններ	1	3.2%

<sup>1</sup> Այս և մյուս աստղանիշով աղյուսակներում ներկայացված են բազմակի ընտրությամբ տվյալներ, երբ հարցվողներին հնարավորություն է տրվում պատասխանների ցանկից ընտրել ոչ թե 1, այլ մինչև 3 պատասխան: Հետևաբար, այդպիսի պատասխանների հանրագումարն այստեղ և մյուս աստղանիշով աղյուսակներում տատանվում է 100%-300%-ը:

**Աղյուսակ 1.2**

***Բնակության երկրում ապրելու տեսակետից  
նշվող բացասական գործոնները***

	<b>թիվը</b>	<b>տոկոսը*</b>
1	Հայկական կրթության/դպրոցում ուսման սահմանափակ հնարավորությունները	12 42.9%
2	Հեռու լինելը Հայաստանից	12 42.9%
3	Հայաստանի հետ ոչ բավարար կապերը	10 35.7%
4	Բնակության երկրի մարդկանց անբարեհաճ/նեզատիվ վերաբերմունքը	8 28.6%
5	Հեռավորությունն ընտանիքից/ընկերներից	6 21.4%
6	Մասնագիտական աճի և ինքնաիրականացման սահմանափակ հնարավորությունները	6 21.4%
7	Սոցիալական և տնտեսական խնդիրները	5 17.9%
8	Անվտանգության հարցերը	4 14.3%
9	Հեռանկարային աշխատանք գտնելու սահմանափակ հնարավորությունները (տիտղոսակիր ազգի ներկայացուցիչների համեմատ)	4 14.3%
10	Անձնային ազատության սահմանափակումները	1 3.6%
11	Հասարակության մեջ անբավարար սոցիալական կարգավիճակը	1 3.6%
12	Տեղի հայերը, նրանց հետ հարաբերությունները	0 0%
13	Այլ պատասխաններ	3 10.7%

---

Հատուկ ուշադրության արժանի հանգամանք է այն, որ բնակության երկրում ապրելու դրական գործոնները զգալիորեն ավելի մեծ թվով են նշվել, քան խոչընդոտող գործոնները<sup>1</sup>: Սա հուշում է, որ շարունակում են գերակշռել բնակության երկրում «պահող» գործոնները: Այսպիսի եզրահանգմանն օգնում է նաև այն, որ հարցվածների մեծ մասը՝ մոտ 75%-ը, հակված է հաստատական պատասխանել «բնակության երկրում՝ ինչպես տանը» պնդմանը: Պատահական չէ, որ բնակության երկրում անբավարար սոցիալական կարգավիճակը որպես խնդիր նվազագույն տեղն է զբաղեցնում ցանկում (այդ խնդիրը նշել է ընդամենը 1 հոգի), ինչը դրական պատկեր է՝ բնակության երկրում ինտեգրված լինելու և մարզինալ չլինելու առումով: Սա նաև տվյալ երկրում բնակությունը շարունակելն ավելի հավանական դարձնող գործոն է: Միևնույն ժամանակ, չարժե անտեսել, որ բնակության երկրում ապրելու դրական գործոնների շարքում անվտանգության զգացումը ևս նվազագույն տեղ է զբաղեցնում, և նշվել է ընդամենը 1 հոգու կողմից (տե՛ս *Աղյուսակ 1.1*): Այսինքն՝ բնակության երկրում ապահովվածության զգացումն առավելապես նյութական և ոչ թե ներքին վստահության մակարդակում է:

Բացասական գործոնների վերաբերյալ առավել հաճախ նշված պատասխաններին ավելի հանգամանորեն կարելի է ծանոթանալ *Աղյուսակ 1.2-ում*:

---

<sup>1</sup> Այսպես, օրինակ, հարցվողներն օգտագործել են բոլոր 3 պատասխանի տարբերակ ընտրելու հնարավորությունը դրական գործոններ նշելիս, մինչդեռ բացասական գործոնների դեպքում երրորդ պատասխանի հնարավորությունը հաճախ մնացել է չօգտագործված:

Բնակության վայրից տեսանելի ապագայում տեղափոխվելու մտադրության մասին նշել է հարցվածների մոտավորապես կեսը:

Ինչպես երևում է *Պատկեր 1.1-ում*<sup>1</sup>, տեղափոխվելու դեպքում որպես նպատակակետ երկրներ գրեթե նույն քանակով նշվում են ն՝ Արևմուտքի՝ ԱՄՆ կամ Եվրամիության երկրները, ն՝ Հայաստանը (ՀՀ կամ Արցախ՝ որպես վերադարձի բնօրրաններ): Այնուհանդերձ, Հայաստանը շատ դեպքերում նշվել է վերապահումներով՝ «հեռավոր պլաններում», «հեռանկարում», «ոչ հիմա, բայց մի օր»<sup>2</sup>, ինչը հուշում է, որ հարցին նման պատասխանն առավելապես ցանկալի պատկերների, քան մտադրության մակարդակում է և բխում է կապվածության զգացումից: Միևնույն ժամանակ, տվյալ երկրում պահող գործոններն այս փուլում առավել արդիական են, և Հայաստան գալը, փաստորեն, մտովի հետաձգված է անորոշ կետի, ուստի և կարող է իրականում տեղ չգտնել:

Ավելացնենք նաև, որ հարցվածների շրջանում ընդհանուր առմամբ բավական բարձր են բնակության երկրի հիմնական քաղաքացիների հետ շփման և հարաբերությունների մակարդակի, նրանց հանդեպ վստահության աստիճանի ցուցանիշները (տե՛ս *Պատկեր 1.3*, *Պատկեր 1.5*): Հարցման մասնակիցների գերակշիռ մասը նշել է բնակության երկրի տիտղոսակիր ազգի

---


<sup>1</sup> Պատկերները տե՛ս *Ներդիրում*:

<sup>2</sup> Ի լրումն տեղափոխելու մտադրության վերաբերյալ «այո/ոչ» փակ երկրնորական հարցի, հարցաթերթը ներառել է լրացուցիչ բաց՝ բովանդակային հարցեր, որտեղ հարցվողները մանրամասնել են տեղափոխվելու նախընտրելի ուղղությունները, տեղափոխվելու կամ երկրում մնալու շարժառիթները և այլն:

Պատկեր 1.1

Բնակչության երկրից տեղափոխման նպատակակետ երկրները


Բնակչության երկրից տեղափոխվելու հնարավոր ուղղությունները



Պատկեր 1.2

Կապվածության գագառումի համեմատական ներկայացում


Կապվածության գագառումը



Պատկեր 1.3


Եզման և հարաբերությունների մակարդակի համեմատական տվյալներ

Եվրոպա, Հարավային Ասիա, և Արևելյան Ասիայի և Եվրոպայի կրկնված արժեքներ




Օգնության դիմելու նախընտրությունները

Ում կդիմելին օգնության համար




Վստահությունը տեղաբնակների, տեղի հայերի և Հայաստանի հայերի հանդեպ

Վստահության աստիճանը




*«Ինչպես տանը» գգալու սուբյեկտիվ ընկալման համեմատական ներկայացում*

**«Ինչպես տանը» գգալու սուբյեկտիվ ընկալումը**



*Ռեզիդենտների լուծման համար անձնական ներգրավման պատրաստականությունը*

**Անձնական ներգրավման պատրաստականությունը**




Պատկեր 1.8

**Հայաստանի/Հայության և համայնքի լուրերին  
հետևելու համադրված տվյալներ**

**Հետաքրքրությունը լրատվության նկատմամբ**


■ Հայաստանի և հայության լուրերին    ■ Համայնքի լուրերին



Պատկեր 1.9

**Էթնիկական ինքնության գերակա տիպը**

**Էթնիկ նույնականացման գերակա տիպը**



---

քաղաքացիների հետ կապերի և շփումների միջին կամ բարձր մակարդակ: Հաղորդակցման, վստահության, գործակցության և մի շարք այլ ասպեկտներին կանդրադառնանք նաև հետագա շարադրանքում՝ նույն ցուցանիշների տեսակետից համեմատություններ անցկացնելով հայ համայնքի և Հայաստանի հայերի առնչությունների հետ:

**Ներհամայնքային առնչություններ. համայնքի զգացում, մասնակցություն, փոխգործողություն, հաղորդակցում**

Ինչպես արդեն նշվել է, համայնքի հոգեբանական զգացումը պատկանելության (անդամության) զգացումի, ներգրավվածության, ազդեցության և հուզական կապի (կապվածության զգացումի) հանրագումարային նկարագիրն է: Հետխորհրդային տարածքի հայերի տասարդների շրջանում տեղի հայության հանդեպ համայնքի զգացումի մակարդակը դուրս բերելու համար նշված ասպեկտների շուրջ մի շարք ուղղակի և անուղղակի հարցեր են ներկայացվել հարցման մասնակիցներին, ովքեր հիմնականում ռուսաստանաբնակներ են:

Համայնքում ներգրավվածության տեսակետից սկզբից ևեթ նշենք, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը չի հանդիսանում հայ համայնքային կառույցի կամ հայկական այլ հասարակական-մշակութային որևէ կազմակերպության անդամ և չի մասնակցում բնակավայրի հայ համայնքի կազմակերպած միջոցառումներին: Ինչպես ավելի պարզ կդառնա հետագա շարադրանքում, ներգրավվածությունը Հայության խնդիրներում

այս դեպքում ստանում է այլ՝ համայնքային ֆորմատից դուրս ձևեր՝ առավելապես իրականանալով Հայաստանի և Հայության հետ տեղեկատվության փոխանակմամբ և Հայության իրադարձություններին ցանցային մասնակցությամբ:

Համեմատելով մի քանի տարի առաջ եղած իրավիճակի հետ՝ իրենց բնակության երկրում հայերի ներկայիս վիճակը հարցվածների մեծ մասի սուբյեկտիվ գնահատմամբ կա՛մ անփոփոխ է, կա՛մ բարելավված: Հարցված երիտասարդների մոտ 35%-ը հակված է եղել տեղի հայերի իրավիճակը գնահատել բարելավված (փոքր-ինչ կամ զգալիորեն), ևս նույն թվով հարցվողներ նշել են իրավիճակի անփոփոխության մասին: Վատթարացման մասին նշել է հարցվողների փոքր մասը, մի մասը չի պատասխանել այս հարցին:

Չնայած իրավիճակի այսպիսի ընդհանուր դրական գնահատականին, տեղի հայերի իրավիճակի համար մտահոգվածության վերաբերյալ հարցին պատասխանները կիսվել են. երիտասարդների մոտ 45%-ն արտահայտել է խիստ կամ որոշակի մտահոգվածություն այդ իրավիճակի համար: Նշվել են նաև հարցի հանդեպ անտարբեր վերաբերմունքի պատասխաններ (մոտ 11%):

Բնակության երկրներում հայ համայնքի խնդիրների պարզաբանման համար տրվել են ոչ թե պատասխանի տարբերակներ, այլ բաց հարցեր, այսինքն՝ հարցվողներին խնդրվել է ինքնուրույնաբար նշել այդպիսի խնդիրները: Խմբավորելով այդ պատասխանները՝ կարող ենք նշել, որ գերակա են համարվում *ազգայնականության/էթնիկ հիմքով խտրականության/քսենոֆոբիայի* դրսևորումները ընդունող երկրի բնակիչների կողմից (այդպիսի խնդիր է մատնանշել հարցվածների մոտ 35%-ը), *սոցիալական և բնակարանային*

---

պայմանները (24%), սոցիալական և իրավական կարգավիճակի խնդիրները, ընդունող պետության միգրացիոն քաղաքականությունն ու վերաբերմունքը, հայկական դպրոցի և հայերենի պահպանման խնդիրները: Հատուկ ուշադրության են արժանի նաև առանձին դեպքերում մատնանշված՝ հայերի մեկուսացվածության (ոչ թե բնակության երկրի հանրությունից, այլ՝ առաջին հերթին միմյանցից), համայնքային կազմակերպման պակասը մատնանշող պատասխանները, ինչպես նաև տեղի հայության չափազանց կենտրոնացումը նյութական արժեքների, դրանց ցուցադրման վրա, գրագիտության պակասը, սահմանափակությունը և զարգանալու ձգտման բացակայությունը, այսինքն՝ հոգևոր և ինտելեկտուալ ոլորտի հիմնախնդիրներ:

Չնայած նման բազմաթիվ խնդիրների գոյությունը նշելուն՝ տեղի հայ համայնքի խնդիրների համար անձնական ներգրավման պատրաստակամությունը շատ ավելի համեստ է դրսևորվել: Այսպես, հարցվածների մոտ 33%-ը հետաքրքրված չէ անձնական ներդրում ունենալ նշված խնդիրների լուծման համար:

Ինչպես նշել ենք, համայնքը բնութագրող կարևոր բաղադրիչներից մեկը դրա հետ անդամների հուզական կապն է: Հարցվածներին խնդրվել է գնահատել ոչ միայն տեղի հայ համայնքին, այլև բնակության վայրին և Հայաստանին իրենց կապվածությունը: Այդ գնահատականները համեմատության մեջ ներկայացված են Պատկեր 1.2-ում և արտացոլում են այն իրողությունը, որ տեղի հայ համայնքին կապվածության զգացումը ցածր է, և ընդհանուր առմամբ զգալիորեն զիջում է ն՝ Հայաստանին, և՛ առհասարակ բնակության երկրին կապվածության զգացումին: Պատասխանողների կեսից ավելին՝ մոտ 55%–

ը, նշել է համայնքին կապված չլինելու մասին (բոլորովին կամ գրեթե), իսկ լիակատար կապվածության զգացումի մասին նշել է հարցվածների միայն փոքր մասը՝ 10,3%: Համեմատելու համար կարող ենք նկատել, որ ն՝ հայրենիքի, ն՝ բնակության վայրի հանդեպ մասնակի կամ լիակատար կապվածության մասին նշել է հարցվածների գերակշիռ մասը. 79,3%-ը նշել է հայրենիքին և 86,2%-ը՝ տեղի բնակավայրին մասամբ կամ լիովին կապված լինելու մասին: Ուշագրավ է նաև, որ բնակության վայրին բարձր կապվածություն են նշում ն՝ համայնքին կապվածություն ունեցողները, ն՝ չունեցողները: Կարելի է ասել, որ հայ համայնքին կապված զգալը կամ չզգալը ո՛չ դրական, ո՛չ բացասական առումով գործոն չէ բնակության վայրին հարմարվելուն նպաստելու կամ խոչընդոտելու առումով: Գրեթե նույն պատկերն է Հայաստանին և տեղի հայ համայնքին կապվածության զգացումի համադրված տվյալները դիտարկելիս. հայրենիքի հետ կապի սուբյեկտիվ զգացումը համայնքի համեմատ շատ ավելի բարձր է գնահատվում:

Հուզական կապի գնահատականն ունենալը կարևոր է նրանով, որ այդպիսի կապի գոյությունը ենթադրում է արդյունավետ գործակցություն և փոխգործողություն՝ ինտերակցիա, հետևաբար՝ կապի բացակայությունը որոշակի ցուցանիշ է նաև այդ գործակցության պակասի կամ բացակայության: Տվյալ դեպքում տեղի հայ համայնքին իրենց թույլ կապվածության գնահատականներն անուղղակիորեն վկայում են թույլ կապերի մասին նաև գործողությունների մակարդակում: Ընդ որում, արդյունավետ փոխգործողություն և ներխմբային կապերի ամրապնդում տեղի է ունենում այն դեպքում, երբ համայնքի կամ խմբի անդամները մասնակցում են իրենց համար նշանակալի և հասկանալի

---

իրադարձությունների ու համատեղ գործերի:

Դիտարկելով շփումների և հարաբերությունների վերաբերյալ համադրված տվյալները (տե՛ս *Պատկեր 1.3*)՝ նշենք, որ տեղի հայության հետ շփումների և կապերի մակարդակն ընդհանուր առմամբ բարձր է, հարցվածների մեծ մասը՝ 76,7%-ը, նշում է տեղաբնակ հայերի հետ միջին կամ լայն շփումների մասին: Այսպիսով, կարելի է ասել, որ տեղի հայության հետ կապն ակտիվ է, սակայն հիմնականում գուտ հաղորդակցական մակարդակում, և չի շաղկապվում համայնքին կապվածության զգացումի հետ՝ գուցե այն պատճառով, որ այդ շփումները տեղի են ունենում ավելի շատ անհատականացված ձևերով, քան համայնքային համախմբման մակարդակում:

Համայնքի իմաստավորումը և դրա դերի գնահատումն էլ ավելի անմիջականորեն դուրս են բերվում ազդեցությանը վերաբերող հարցերի միջոցով: Ազդեցության գործոնը ներառում է մի քանի ասպեկտ. անդամի ազդեցությունը համայնքի վրա, համայնքի ազդեցությունն անդամի վրա և համայնքի ազդեցությունն ավելի լայն հանրության, տվյալ երկրում՝ բնակչության երկրի/շրջանի վրա: Այս առումով արձանագրվել են ցածր ցուցանիշներ: Այսպես, համայնքն ունի զրոյական ազդեցություն հարցվողների մոտ 58%-ի համար և մասնակի ազդեցություն՝ միայն 16%-ի համար: Սեփական ազդեցությունը համայնքի վրա զրոյական է գնահատել հարցվածների 61%-ը, իրենց մասնակի ազդեցության մասին նշել է հարցվածների մոտ 19%-ը, մեծ ազդեցություն չի նշել ոչ ոք: Փոքր-ինչ ավելի բարձր է գնահատվել համայնքի դերն ու կշիռը բնակչության երկրում/քաղաքում (ազդեցության վերաբերյալ գնահատականները մանրամասն տե՛ս *Աղյուսակ 1.3-ում*):

*Աղյուսակ 1.3*

**Համայնքի ազդեցության և համայնքի վրա սեփական ազդեցության գնահատումը**

Ազդեցության աստիճանը	Համայնքի ազդեցությունը բնակչության երկրի վրա	Համայնքի ազդեցությունը հարցվողի վրա	Սեփական ազդեցությունը համայնքի վրա
Չի ազդում	35.5%	58%	61,3%
Նվազագույն ազդունի	32.3%	16,1%	13%
Որոշ չափով ազդում է	19.3%	16,1%	19,4%
Ունի մեծ ազդեցություն	9.7%	3,2%	0%
Չպատասխ. թիվը	3,25%	6.5%	6.5%

Ներհամայնքային կապերը և համայնք-անհատ առնչությունները հասկանալու համար ներառվել են նաև փոխօգնության վերաբերյալ հարցեր: Հարցվածների մեծ մասը՝ մոտ 56%-ը, համայնքի հայերին օգնության համար երբեք չի դիմել, մոտ 14%-ը դիմել է շատ հազվադեպ, 30%-ը՝ երբեմն: Համանման են իրենց կողմից համայնքի անդամներին օգնության պատասխանները:

Օգնությանը դիմելուն վերաբերող հարցերով հնարավոր է լինում նաև անուղղակի տեղեկատվություն ստանալ փոխադարձ վստահության մակարդակի մասին:

Այսպես, «Ո՛ւմ կդիմեին օգնության համար առաջին հերթին» հարցին պատասխանելիս (տե՛ս Աղյուսակ 1.4) հարցվածների 55,6%-ը նշել է «տեղաբնակ ծանոթ/բարեկամ հայերին» և 22,2%-ը՝ «տեղաբնակ ոչ հայ ընկերներին/ծանոթներին» տարբերակները, մինչդեռ տեղի հայ համայնքին՝ որպես համայնքային կառույցին դիմելու պատրաստակամությունն ամենացածրն է

---

գրանցվել (ընդամենը մեկ հոգի): Ավելին, հարցվածների մեծ մասը՝ 54.5%-ը, համայնքային կառույցին կղիմեր որպես վերջին տարբերակ: Այսպիսով, ցուցանիշները բարենպաստ են տեղաբնակ հայերի միջև պահպանվող համագործակցային կապերի առումով: Այնուհանդերձ, ցուցանիշները վկայում են, որ համայնքային կառույցների ֆունկցիոնալությունը և վստահելիությունը ցածր են գնահատվում: Հայերի միջև համագործակցությունը կրկին մնում է առավելապես միջ-անձնային մակարդակում, իսկ կազմակերպման ինստիտուցիոնալ ձևաչափը՝ համայնքային կառույցը, մնում է արտամղված դերում: Տեղի հայերի շրջանում որոշակի միկրոմիջավայր ստեղծված է, սակայն խոսքը ոչ թե համայնքային կազմակերպվածության, այլ բարեկամական-ընկերական ամուր կապերի մասին է: Այս պատկերին միանշանակ բացասական կամ դրական գնահատական դժվար է տալ:

Վստահության մակարդակի առումով ավելացնենք նաև, որ հարցվածների գերակշիռ մասը՝ 80%-ը, հակված է վստահել տեղի մյուս հայերին, սակայն ուշագրավ է, որ դա արտահայտվել է «մասամբ վստահում եմ» փոքր-ինչ զգուշավոր պատասխանով, մինչդեռ լիովին վստահություն տեղի հայրենակիցների հանդեպ չի նշել ոչ ոք: Վստահության վերաբերյալ գնահատականները համեմատության մեջ ավելի մանրամասն տրված են *Պատկեր 1.5-ում*:

Տեղի հայերի շրջանում փոխադարձ վստահության բավարար մակարդակի մասին լրացուցիչ վկայում են նաև պատասխանները ենթադրական նախընտրելի գործընկերոջ մասին հարցին: Տարբերակների շարքում ամենից հաճախ որպես

նախընտրելի գործընկեր նշվել են տեղի հայերը. այդպիսի նախապատվություն է ունեցել հարցվածների 63%-ը (մանրամասն տե՛ս *Աղյուսակ 1.4*):

Անդրադառնալով հաղորդակցման կարևոր ասպեկտներից մեկին՝ հաղորդակցման լեզվին, կարելի է նշել, որ հարցվածների միայն 33,3%-ի համար է հայերենը հիմնական կիրառման լեզու, մնացած 66,7%-ի համար այն ռուսերենն է, ինչն ըստ էության օրինաչափ է, և զարմանալու առիթ հազիվ թե լինի: Օգտագործվող հիմնական լեզուն մայրենի լեզվի փոխարեն ռուսերենն է անգամ թրիլիսահայերի շրջանում, ինչը գալիս է հաստատելու, որ այս երկրում հայերի կողմից ռուսերեն լեզուն օգտագործվում է որպես հիմնական ազգությունից էթնոտարբերակիչ միջոց:

Հարցաթերթում լեզվի հետ կապված ներառվել են նաև կիրառվող լեզվի վերաբերյալ տարբերակված հարցեր ըստ հետևյալ ոլորտների. աշխատավայր/ուսման վայր, ընկերական շրջապատ և տուն/ընտանիք: Միանգամայն բնականորեն, աշխատավայրում օգտագործվող լեզուն ռուսերենն է: Որոշ չափով հուսադրող է այն, որ հայերեն լեզվի կիրառումը մասամբ պահպանվում է որպես հիմնական շփման լեզու ընկերական միջավայրում (այդպես է նշել հարցվածների 25,5%-ը) և ընտանիքում (51,5%-ը):

Ուշադրության են արժանի «Ո՞րն է Ձեր մայրենի լեզուն» հարցին ոչ միանշանակ պատասխանները: Որպես մայրենի լեզու հայերենն է ընտրել մեծ մասը (66,7%), սակայն ոչ բոլորը: Պատասխանների 23%-ի դեպքում մայրենի լեզու նշվել է ռուսերենը, ևս մի քանի հոգի՝ 10%-ը, դժվարացել է միանշանակ պատասխանել՝ նշելով ռուսերենի ու հայերենի

---

համադրությունը:

Լեզվի պահպանման հետ սերտորեն առնչվող հարցերից մեկը բնակավայրերում հայկական դպրոցների գործառությունն է: Թեև հայերեն կրթության պակասը հարցվածների կողմից նշվել է որպես տեղի հայության հիմնական խնդիրներից մեկը, նրանց մեծ մասը՝ 75%-ից ավելին, անգամ համապատասխան տարիքում եղած լինելով այդ երկրում, հայկական դպրոց չի հաճախել: Չհաճախելու պատճառներ հավասարապես մեջբերվել են կամ նման դպրոցի բացակայությունը, կամ հաճախելը կարևոր չհամարելու հանգամանքը: Այսպիսով, կարելի է նկատել, որ հայկական դպրոցի առկայության հանգամանքն էական, սակայն ոչ միակ խնդիրն է, և հարցին միայն «ֆիզիկական» մոտեցումը՝ դպրոցների հիմնումը, չի լուծում ընդհանուր խնդիրը, որը պահանջում է զուգահեռ աշխատանք նման դպրոցների գոյության նշանակության, իմիջի և որակի բարձրացման ուղղությամբ:

Անդրադառնալով ներհամայնքային հաղորդակցման **տեղեկատվական ասպեկտին**՝ նշենք, որ տեղի հայության լուրերին հետևում է հարցվողների 60%-ը. թեև սա մեծ մասն է, այնուհանդերձ, առաջին հերթին նշանակում է, որ 40%-ը չի հետևում: Նախապես նշենք, որ Հայաստանի լուրերին հետևում են գրեթե բոլոր հարցվողները՝ 90%-ը, այսինքն՝ հայաստանյան իրողությունները տեղի հայ համայնքի կյանքի համեմատ պահպանում են իրենց ավելի մեծ նշանակալիությունը, և տեղեկատվական առումով հետխորհրդային տարածքի հայերը մնում են ավելի կապված հայրենիքին, քան համայնքին (մանրամասն տե՛ս *Պատկեր 1.8*): Այս փաստը որոշ առումներով (հայրենիքի հետ

կապի) դրական, որոշ առումներով (տեղում հայերի անբավարար համախմբվածության)՝ բացասական մտորումների տեղիք է տալիս:

Տեղի հայ համայնքի վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրներ են նշվել հայկական տեղեկատվական կայքերը և ոչ ֆորմալ տեղեկատվության աղբյուրները (որոնք ներառում են ինչպես շրջապատից բերանացի ստացված լուրերը, այնպես էլ՝ բլոգներին հետևելը), ինչպես նաև ռուսական տեղեկատվական կայքերը: Բնակության երկրի օրաթերթերը ևս նշվել են, սակայն ավելի փոքր թվով:

Հարցվողներին նաև տրվել է հարց՝ մոտավորապես տոկոսային արտահայտմամբ նշել իրենց մտերիմների և շփումների դաշտում հետևյալ 4 խմբերի համամասնությունը. Հայաստանի հայեր, տեղի հայ համայնքի հայեր, այլ երկրներում բնակվող հայեր և այլազգիներ: Հարկ է նշել, որ որպես իրենց շփման դաշտում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող խումբ նշվել են առաջին հերթին Հայաստանի հայերը, երկրորդ հերթին՝ տեղի հայերը և երրորդ հերթին՝ տեղի հիմնական ազգության քաղաքացիները: Հիմնական հետևությունն այս դասավորումից այն է, որ չնայած հազվադեպ այցերին հայրենիք՝ Հայաստանը և Հայաստանի հայերը շարունակում են մնալ նրանց շփման դաշտում էական հատվածը և անգամ գերազանցում են տեղի հայ համայնքի հետ շփման շրջանակին: Համայնքի հայերի հաղորդակցական ակտիվ կապը հայրենիքի տարեկիցների հետ հուսադրող է կազմակերպման ներուժի տեսակետից: Բացի այդ, սա ևս մեկ առումով թույլ է տալիս փաստել, որ հայ համայնքների

---

կազմակերպման և կոնսուլիդացման ծրագրերում հիմնական առանցքը, թեման, որի շուրջ հարկ է կառուցել համախմբման գործողությունների տեսլականները, Հայաստանն է և ոչ թե գուտ համայնքը՝ իր ներհամայնքային խնդիրների հաղթահարման ջանքերով: Մա անգամ ուղիղ ձևակերպում է ստացել որոշ հարցվողների կողմից, օրինակ՝ «Ես անհրաժեշտ չեմ համարում որևէ բան անել համայնքի համար, եթե արժե ինչ-որ բան անել, ապա Հայրենիքի համար»:

Ամփոփելով վերլուծության այս բաժինը՝ կարելի է նշել, որ հետխորհրդային երկրների հայ համայնքները չեն համապատասխանում կազմակերպված համայնքների դասական ըմբռնմանը: Համայնքի մաս լինելու գիտակցումը, համայնքային ինքնությունը թե՛ հուզական, թե՛ գործողությունների մակարդակում բավարար չէ: Իհարկե, փոխարենը դրսևորվում են հայրենիքի հետ կապերի պահպանումը և դրա բարձր նշանակալիությունը: Այլ կերպ ասած՝ որպես իրական «հայկական» գործողությունների դաշտ շարունակում է ընկալվել Հայաստանը, որի հետ առնչություններին ավելի հանգամանորեն կանդրադառնանք հաջորդ մասում:

## **Համայնք–Հայաստան. հաղորդակցում, համագործակցություն, ներգրավման նախադրյալներ**

Վերը քննարկված մի շարք հարցերի շրջանակներում արդեն մասամբ անդրադարձել ենք Հայաստանի վերաբերյալ հետխորհրդային տարածքի հայ երիտասարդների ընկալումներին և պատկերացումներին: Ընդհանուր գծերով կարելի է ասել, որ հետազոտության մասնակիցների շրջանում (հիմնականում՝ Ռուսաստանում) ապրող հայ երիտասարդներին բնորոշ է այդ երկրի հասարակությանը հարմարվածության և ինտեգրված լինելու բարձր մակարդակը՝ մինչև ժամանակ Հայաստանի հետ կապերի և Հայաստանի նշանակալիության պահպանմամբ: Դա առավելապես արտացոլվում է հայրենիքին կապվածության, խնդիրների նշանակալիության, հայրենակիցների հետ շփմանը վերաբերող ուղղակի հարցերին տրված պատասխաններում: Սակայն այդ պատասխանները նույն ոլորտներին անուղղակիորեն առնչվող հարցերի դեպքում որոշակիորեն տարբերվում են: Այսպես, հայրենիքին կապվածության զգացումի վերաբերյալ հարցին մասնակիցների մեծ մասը՝ 79,3%–ը, նշել է մասնակի կամ լիարժեք կապվածությունը (տե՛ս *Պատկեր 1.2*): Սակայն այս պատասխանները հարաբերելով Հայաստան վերադառնալու պատրաստակամության աստիճանի հետ՝ արդեն պետք է խոսենք ավելի մեծ վերապահումով: Հայրենիք իրական այցերի հաճախությունն ընդհանուր առմամբ ցածր է: Հայաստան այցելելու հիմնական նպատակը, ըստ պատասխանների գերակշռող մասի, շարունակում է մնալ կարճատև արձակուրդը: Այսպիսով, դրական ուղղվածության պատասխաններն ավելի հաճախ վկայում են

հայրենիքի ցանկալի մտապատկերների, քան իրական մտադրությունների և իրական գործողությունների մասին: Նման կերպ կարելի է համեմատել նաև վստահության մակարդակին վերաբերող ուղղակի և միջնորդավորված հարցերը: Ինչպես արդեն նշվել է նախորդ բաժնում, գնահատվող վստահության աստիճանը Հայաստանում ապրող հայրենակիցների հանդեպ բարձր է (տե՛ս *Պատկեր 1.5*): Այնուհանդերձ, անուղղակի հարցի դեպքում պատասխանների բնույթը փոխվել է: Երբ մասնակիցներին առաջադրվել է հնարավոր 4 խմբերում<sup>1</sup> նախընտրության նվազման կարգով նշել համատեղ գործի համար գործընկեր ընտրելու պատրաստակամության աստիճանը, հայաստանաբնակները կտրուկ զիջել են իրենց տեղերը ոչ միայն տեղի հայերին, այլև բնակության երկրի հիմնական ազգությանը (տե՛ս *Աղյուսակ 1.4*):

**Աղյուսակ 1.4**

***Համատեղ գործում որպես գործընկեր ընտրելու նախապատվությունները***

		<b>Առաջին հերթին</b>	<b>Վերջին հերթին</b>
1	Տեղի հայ ծանոթներին/բարեկամներին	63%	7.7%
2	Բնակության երկրի ծանոթ ոչ հայերին	22.2%	3.8%
3	Այլ ազգերի ներկայացուցիչներին	11.1%	57.7%
4	Հայաստանում բնակվող ծանոթներին	3.7%	30.8%
5	Ընդամենը	100%	100%

<sup>1</sup> Այդ խմբերն են՝ 1. հայաստանաբնակ հայեր, 2. տեղի հայ համայնքի հայեր, 3. մշտական բնակության երկրի տիտղոսակիր ազգության ներկայացուցիչներ, 4. այլ ազգի ներկայացուցիչներ:

Այսպիսով, գործընկերոջ մասին հարցը, լինելով ավելի պրագմատիկ և կոնկրետ, որոշ առումով «ստուգել» է վստահության մասին վերացական հարցը՝ արձանագրելով վստահության ավելի համեստ ցուցանիշներ և հոգեբանական հեռավորության առկայություն: Ասել է թե՛ հայրենիքի վերաբերյալ դրական, արժևորող գնահատականներն ուղղակիորեն չեն ենթադրում ինքնակազմակերպման և հայրենիքի հետ իրական կապերի բարձր հավանականություն, թեև հանդիսանում են նախադրյալ. այս հարցերն առանձին դիտարկման, ճշգրտման կարիք ունեն:

Ինչպես երևում է ստորև բերված *Պատկեր 1.6-ում* համեմատական տվյալներից, ինչպես բնակչության երկրում, այնպես էլ Հայաստանում հարցվածների մեծ մասը հակված է համարել, որ իրեն զգում է, ինչպես տանը (մասամբ կամ լիովին), այսինքն՝ համարում է իրեն հարազատ, սովոր, հոգեբանորեն կոմֆորտ վայր: Եվս մեկ ընդհանուր միտում է այն, որ և՛ բնակչության երկրում իրենց ինտեգրված, հարմարավետ զգալու, և՛ չզգալու դեպքում երիտասարդները հակված են եղել նշել Հայաստանում իրենց «ինչպես տանը» զգալու մասին (համապատասխանաբար 64,7%-ով և 85,7%-ով):

Այսինքն՝ ինտեգրվածությունը մշտական երկրի հասարակությանը չի խանգարում Հայաստանին կապված զգալուն: Սա ևս հաստատում է այն ենթադրությունը, որ Հայաստանը, անկախ բնակչության երկրում հարմարվածության աստիճանից, շարունակում է մնալ կարևորվող: Երկու խմբերի դեպքում էլ՝ և՛ բնակչության երկրում հարմարված, և՛ չհարմարված, կարելի է

---

խոսել Հայաստանին առնչվող ծրագրերում ներգրավվելու քարձր պատրաստակամության մասին:

Բարձր է նաև Հայաստանի հայերի հետ շփումների ու փոխհարաբերությունների ընդհանուր մակարդակը. հարցվածների 60%-ը նշել է շփման միջին մակարդակի, ևս 35%-ը՝ լայն և ակտիվ շփումների մասին (մանրամասն տե՛ս *Պատկեր 1.3*):

Հայաստանում առկա խնդիրների մասին ընկալումները և դրանց նշանակությունը ևս էական են հայրենիքի հետ նրանց առնչությունները և գործակցության պատրաստակամությունն ավելի հստակ պատկերացնելու համար: Հայաստանում ապրելու տեսակետից նշվել են հիմնականում սոցիալ-տնտեսական հիմք ունեցող պատճառները, մասնավորապես՝ աշխատանքի տեղավորման, գործազրկության խնդիրները (ընդ որում, ոչ թե աշխատատեղերի բացակայությունը, այլ հատկապես նորմալ վաստակելու, գործարարություն ձեռնարկելու սուղ հնարավորությունները, բիզնես ոլորտի չզարգացածությունը և այլն), կյանքի որակը և սոցիալ-տնտեսական պայմանները: Այս խնդիրների կողքին առանձին, ոչ պակաս կարևորվող խնդիրներ են սոցիալ-հոգեբանական, անձնային կարգի գործոնները, մասնավորապես՝ մասնագիտական աճի սահմանափակումները, դաստիարակության/սոցիալականացման և մտածելակերպի տարբերությունները, որի արդյունքում՝ հայրենակիցների հետ շփման դժվարությունները, այդ շփման մեջ լեզվական պատնեշի առկայությունը, ինչպես նաև ավելի լայն քաղաքական՝ և՛ ներքին, և՛ արտաքին մի շարք գործոններ: Այսպիսով, կարելի է նկատել, որ խնդիրների մի մասը

ներկայացնում է Հայաստանը լքելու, իսկ մյուս խումբը՝ Հայաստան չվերադառնալու գործոններ: Երկրորդի շարքում շատ են ներքին, հոգեբանական պայմանավորվածություն ունեցող գործոնները, որոնք բխում են զարգացման, աճի, հաղորդակցման պահանջմունքների բավարարման խնդիրներից:

Ինչևէ, Հայաստանի խնդիրները պահպանում են իրենց նշանակալիությունը հարցվածների շրջանում, որը դրսևորվում է նաև այդ խնդիրների լուծման գործում անձնական ներդրումի բարձր պատրաստակամությամբ (տե՛ս *Պատկեր 1.7*):

---

## **Համայնք–Հայաստան առնչությունների տեղեկատվական ասպեկտը**

Ինչպես արդեն մասամբ անդրադարձել ենք, Հայաստանի հետ կապերը նաև դրսևորվում են Հայաստանին առնչվող տեղեկատվական հոսքի հանդեպ բարձր հետաքրքրությամբ: *Պատկեր 1.8-ում* ներկայացված տվյալների համեմատումից պարզ է դառնում, որ հայրենիքին և Հայությանն առնչվող լուրերի կարևորումը նկատելիորեն ավելի մեծ է տեղի հայության իրադարձություններին վերաբերող լուրերի համեմատ: Այս իմաստով հետխորհրդային տարածքի հայ երիտասարդները մնում են ինֆորմացիոն առումով ավելի շատ կապված Հայաստանին, քան տեղի հայ համայնքին, ինչը մի կողմից դրական է՝ ցույց տալով հայրենիքի հետ կապերի պահպանման միտումը և հայկական իրողությունների հանդեպ ոչ անտարբեր վերաբերմունքը: Մյուս կողմից, փաստորեն, համայնքում տեղի ունեցող, զուտ համայնքին վերաբերող հարցերը որպես այդպիսին չեն ընկալվում իրենց բնույթով ազգային նշանակություն ունեցող:

Հայաստանի վերաբերյալ տեղեկատվության ոլորտներից կարևորվել են առաջին հերթին՝ ներքին քաղաքականությունը/պետությունը, գրեթե հավասարապես՝ Հայաստանի արտաքին քաղաքականությունը, այնուհետև ոչ մեծ տարբերությամբ՝ մշակույթի/երիտասարդության հարցերը: Հետաքրքրության ոլորտներից վերջին տեղում է երկրի տնտեսությունը:

*Հայաստանի վերաբերյալ տեղեկատվության գերակա աղբյուրներ* են հանդիսանում առաջին հերթին հայկական

տեղեկատվական ինտերնետ կայքերը, այնուհետև փոքր-ինչ զիջում են ոչ ֆորմալ տեղեկատվական աղբյուրները/բլոգները և ռուսական տեղեկատվական ինտերնետ կայքերը: Մանրամասն տե՛ս Աղյուսակ 1.5-ում:

**Աղյուսակ 1.5**

**Հայաստանի վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրները**

	<b>թիվը</b>	<b>տոկոսը*</b>
1 Հայկական տեղեկատվական կայքեր	19	65.5%
2 Ոչ ֆորմալ տեղեկատվական աղբյուրներ, բլոգներ	11	37.9%
3 Ռուսական տեղեկատվական կայքերը	9	31.0%
4 Բնակության երկրի/շրջանի հեռուստաալիքներ	6	20.7%
5 Հայկական արբանյակային հեռուստաալիքներ	5	17.2%
6 Միջազգային հեռուստ., մամուլ, կայքեր	5	17.2%
7 Բնակության երկրի մամուլ	3	10.3%
8 Տեղի հայկական ՁԼՄ	3	10.3%

---

## Ինքնության և պատկանելության հարցեր

Ինքնության խնդիրները որոշակի յուրահատկություն ունեն ոչ միայն Հայաստան–Սփյուռքի համայնքներ լայն համեմատության մեջ, այլև սփյուռքի տարբեր՝ ավանդական ու նոր, աշխարհագրորեն տարբեր հատվածների մակարդակում: Սույն վերլուծության շրջանակներում մեր խնդիրն է եղել դուրս բերել ուսումնասիրվող խմբում ազգային ինքնության հիմնական միտումները, ինքնությանն առնչվող ընդհանուր հարցերը:

Հայտնի է, որ դրական խմբային ինքնության համար էական է պատկանելության խմբի դրական բնութագրերի գերակայում՝ գոնե անհատի գնահատման սուբյեկտիվ համակարգի տեսակետից: Այլ կերպ ասած՝ նույնականացման խումբը, հանրույթը պետք է բնութագրվի մի շարք հատկանիշներով, որոնց շնորհիվ անհատը կարողանա որոշակի հոգեբանական բարեհարմարություն ապրել, այսինքն՝ այդ պատկանելությունը պետք է հոգեբանական «օգուտի» մակարդակում պահպանի իր արժեքն անհատի և խմբի համար: Այս տեսակետից ազգային ինքնության որոշ խնդիրներ բնորոշ են ոչ միայն սփյուռքահայերի, այլև հայաստանաբնակ հայերի շրջանում, թեկուզ այն պատճառով, որ առօրյա խոսքում արդեն Հայաստանը հաճախ նկարագրվում է դժվարության, այդ դժվարություններից էլքեր փնտրելու տերմիններով: Այստեղ խնդիրը կարելի է ձևակերպել ավելի պրագմատիկ առաջադրանքի ձևով: Ինքնությունը սուբյեկտիվ պատկանելություն է, որը պետք է

ունենա դրական բնութագրեր և մարդու համար լինի ավելի շատ ռեսուրսային, քան խնդրահարույց, մղի գործել խմբի համար և խմբի անունից և ոչ թե առաջացնի խուսափումի միտում: Իհարկե, այս բոլոր խնդիրներն ավելի հոծ ուրվագծեր են ստանում Հայաստանից դուրս՝ այլ երկրներում հաստատված հայերի հարցերն ուսումնասիրելիս:

Այնուհանդերձ, պարզունակ կլինի մտածել, որ հենց հեշտությունն ու հարմարավետությունն են խմբի, ազգի հետ նույնականացման հիմնական գործոնները: Դրանք պարզապես պայմաններ են, և ցանկացած անհարմարություն, ազգային խնդիր չի ստիպում վերանայել խմբային ինքնություն և հեշտությամբ ընտրել այլազգի ինքնություն՝ առանց ներքին հակասությունների: Փաստ է, որ չնայած այսօր ինքնությանը վերապահվող մեծ ճկունությանը (և՛ գիտական դիսկուրսում, և՛ ՋԼՄ-ում), ինքնությունից հրաժարվելը կամ մեկ այլ ինքնություն ընտրելը, այնուհանդերձ, ամենևին հեշտ չէ, և ամենևին դա չէ առաջին լուծումը, որին հանգում են սփյուռքի, այդ թվում՝ հետխորհրդային երկրներում ներկայացված սփյուռքի համայնքների ներկայացուցիչները: Մենք ամենուր նկատում ենք, որ չնայած լայնորեն շրջանառվող գանգատներին, քննարկվող խոշոր խոչընդոտներին, դեռևս հայ երիտասարդների ազգային ինքնությունը էլքեր է «փնտրում» ուժեղանալու, ամրապնդվելու համար:

Ազգային ինքնության որոշ հարցերի, մասնավորապես՝ հետխորհրդային տարածքի հայ երիտասարդների էթնիկական

---

նույնականացման միտումները, տիպերը դուրս բերելու նպատակով կիրառվել է «էթնիկական ինքնության տիպեր» հոգեբանական թեստային մեթոդիկան՝ Գ.Ու. Սուլդատովայի հեղինակմամբ: Այս մեթոդը դուրս է բերում էթնիկական նույնականության հետևյալ տիպերից մեկի գերակշռումը՝ պոզիտիվ էթնիկ նույնականություն, էթնոինդիֆերենտություն (անտարբեր վերաբերմունք սեփական էթնիկ պատկանելությանը), էթնոնիհիլիզմ (սեփական էթնիկ պատկանելության հանդեպ մերժողական վերաբերմունք), էթնոէզոիզմ (էթնոցենտրիկ, այսինքն՝ սեփական ազգին ընդգծված գերապատվություն սվոդ դիրքորոշում, յուրահատուկ էթնիկ նարցիսիզմ), էթնոիզոլյացիոնիզմ (սեփական ազգն այլ էթնոսներից մեկուսի պահելու, «չխառնվելու», այլ հանրությունների հետ հաղոդակցումից խուսափելու միտում) և էթնոֆանատիզմ (իր պատկանելության ազգի հանդեպ ֆանատիկ վերաբերմունք, սեփական ազգի առավելության բացարձակեցում, բացառապես դրական հատկանիշների վերագրում): Նորմ է համարվում դրական էթնիկական ինքնությունը, որի դեպքում սեփական ազգային պատկանելությունը իմաստավորվում է որպես դրական, բարձր է հանդուրժողությունն ինչպես սեփական ազգի, այնպես էլ այլ ազգերի հանդեպ: Մնացած տիպերը խմբավորվում են կա՛մ որպես հիպոինքնության (սեփական էթնիկ խմբի հանդեպ բացասական կամ անտարբեր ինքնության տիպերը՝ էթնոնիհիլիզմը և էթնոինդիֆերենտությունը), կա՛մ

հիպերինքնության ձևեր (չափազանցված, իդեալականացված և այլոց հանդեպ մերժողական ինքնությունը՝ էթնոֆանատիզմ, էթնոէգոիզմ, էթնոիզոլյացիոնիզմ): Ամեն տիպը, ըստ մեթոդիկայի արդյունքի, ստանում է որոշակի՝ բարձր, միջին և ցածր միավոր, և ըստ տվյալ անհատի մոտ ամենաբարձր միավորի՝ դուրս է բերվում տիպը:

Ըստ այս մեթոդի ստացված պատկերը բավական բարենպաստ է ուսումնասիրված խմբում. մեծ մասի մոտ (26 հոգի) որպես էթնիկ ինքնության տիպ է դրսևորվել պոզիտիվ ինքնությունը, որը հենց համարվում է նորմը, առողջ դիրքորոշումը: Այն ենթադրում է սեփական ազգության ընդունում, դրական վերաբերմունք սեփական ազգային պատկանելությանը՝ միաժամանակ առանց նեգատիվ վերաբերմունքի այլազգիների հանդեպ, և այլ ազգերի ու մշակույթների հանդեպ հանդուրժողության բարձր մակարդակ: Ինչպես ցույց է տրված *Պատկեր 1.9-ում*, ցածր ցուցանիշներ են գրանցվել մյուս տիպերի համար. էթնոֆանատիզմը որպես ինքնության գերակա տիպ դրսևորվել է միայն 3 հոգու մոտ, էթնոմեկուսացումը՝ 1-ի, իսկ այն տիպերը, որոնք ներառված չեն պատկերում, առհասարակ խմբում չեն դրսևորվել: Էթնոֆանատիզմը և էթնոմեկուսացումը հանդիպել են նաև որպես գերակա տիպի համեմատ ավելի ցածր, բայց միջին ցուցանիշներով արտահայտված:

Նկարագրված մեթոդով դուրս բերված պոզիտիվ էթնիկ ինքնությունը չի ենթադրում Հայրենիքի միանշանակ ոչ

---

պրորբեմատիկ ընկալում, այլ ընդհանուր առմամբ ուրվագծում է դրական վերաբերմունքը սեփական պատկանելությանը:

Որպես օժանդակ մեթոդ է հանդիսացել կոնտենտ-վերլուծությամբ մշակվող «Ո՞վ եմ ես» մեթոդիկան, որի շրջանակներում հետազոտվողների խնդիրն է առանց երկար մտորելու նշել առաջին 10 պատասխաններն այդ հարցին այն հերթականությամբ, ինչպես դրանք անցնում են նրա մտքով: Բոլորի մոտ կարելի է դիտարկել բազմակողմանի ինքնաներկայացում, չհանգեցում ազգային պատկանելությանը, սակայն սեփական ես-կերպարում նաև ազգային պատկանելության նշում: Այսպիսի չափավոր պատկերը ևս դրական ցուցանիշ է, և գալիս է հաստատելու էթնիկ ինքնության տիպերի մեթոդով ստացված արդյունքները: Բացի այդ, այս ինքնաներկայացման մեջ գրեթե բոլոր ռուսաստանաբնակների մոտ կար «*россиянин*» կամ «*москвич*» ձևակերպումը, ինչը ևս օրինաչափ է և անգամ դրական, քանի որ վկայում է տվյալ երկրում նրանց հավանական ինտեգրվածության մասին, այսինքն՝ արտամղված չլինելու մասին:

Ավելի կոնկրետ զգացումները հայրենիքի հետ կապված՝ կարող են լինել խառը և հակասականություն պարունակել: Այսպես, մեր կողմից մշակված հարցաթերթում ներառված «Ի՞նչ եք զգում/մտածում ձեր ազգային պատկանելության հետ կապված» հարցին հաճախ հանդիպող պատասխանն է երկարժեք՝ դրական և բացասական գնահատականի համադրությունը, օրինակ՝ «հպարտություն և տխրություն», «հպարտություն և ցավ (*обида*)»,

«ուրախություն և մտահոգություն» և այլն: Այսպիսի ձևակերպումները տալիս են ինչպես մտահոգվելու առիթ, այնպես էլ հուսադրում, որ իրենց երկրի պրոբլեմատիկ կողմերն այս մարդկանց համար չեն կորցրել իրենց նշանակությունը:

---

**1.4. Հիմնական եզրահանգումներ և առաջարկներ.  
հետխորհրդային երկրների հայության  
կազմակերպման ուղիները**

Վերլուծության հիմնական արդյունքներն ամփոփենք կազմակերպման ուղիների վերաբերյալ առաջարկների ձևով.

- Տարբեր տեսանկյուններից ուսումնասիրելով հետ-խորհրդային տարածքի հայ երիտասարդների առնչությունները Հայության, տեղի հայ համայնքի և բնակության երկրի հետ՝ եզրակացնում ենք, որ համայնքեր-Հայաստան, իսկ ավելի ստույգ՝ հայեր-Հայաստան համագործակցության նախադրյալները բավարար տեսանելի են: Բարձր են Հայաստանի համար ներդրում ունենալու մոտիվացիան և պատրաստակամությունը, Հայաստանի խնդիրների սուբյեկտիվ կարևորումը: Ի լրումն, Հայաստանի հետ կապը միջնորդավորված չէ համայնքային կառույցներով: Վերոհիշյալը հաշվի առնելով՝ հետազոտության արդյունքում կարելի է հայտնի վստահությամբ արձանագրել, որ ներհամայնքային համախմբումն ու կազմակերպումն արդյունավետ չեն ընթանա՝ հիմնված լինելով զուտ ներհամայնքային մեխանիզմների և գործողությունների վրա կամ այլ կերպ ասած՝ զուտ համայնքային զարգացման ծրագրերի շնորհիվ: Փոխարենը, կազմակերպման ավելի մեծ արդյունավետություն

կարելի է կանխատեսել այն դեպքում, երբ կազմակերպական ջանքերն ուղղորդված լինեն Հայաստանի համար իրականացվող գործողությունների շուրջ համայնքները միավորելուն: Այս իմաստով համայնքային գորեղացման և կոնսոլիդացիայի գործոն ենք համարում տեղի ակտիվ հայության միջոցով համայնքի ներգրավումը Հայաստանի և Հայության, և ոչ թե պարզապես համայնքի հարցերի լուծմանն ուղղված ծրագրերում:

- Նախորդ կետը չի ենթադրում հրաժարում համայնքների ձևաչափից: Մակայն համայնքային կառույցներն ակնհայտորեն ունեն և՛ ինստիտուցիոնալ, և՛ տեխնիկական, և՛ մարդկային ռեսուրսների առումներով արդիականացման, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, մշակութային մասնակցության խթանման կարիք, և կարող են իրենց հետ համայնքի անդամների կապն ամրապնդել Հայաստանին ուղղված Հայաստանակենտրոն ծրագրերի կազմակերպմամբ, ինչպես նաև ժամանակակից ՏՀՏ-ի կիրառմամբ (օրինակ՝ sms-ներ, վիրտուալ ցանցեր):

- Համայնք (*community*) և հաղորդակցում (*communication*) հասկացությունները, բոլորովին ոչ պատահաբար, արդի անդրազգային հաղորդակցման ձևերը քննարկելիս հաճախ հանդես են գալիս համատեղ: Ուստի, համայնքների և տեղեկատվական աղբյուրների հետ աշխատանքում իմաստ ունի հենվել հաղորդակցման պահանջմունքի բավարարման վրա:

---

● Նախորդ կետերի հետ սերտորեն առնչվում է համայնքների հայ երիտասարդների *մասնակցության* զգացումը, որը կարող է ապահովվել տեղեկատվության ակտիվ փոխանակմամբ և ընդհանուր գործողությունների պլանների քննարկմամբ: Ընդհանուր առմամբ Հայաստանի հանդեպ տեղեկատվական պահանջը բարձր է. հետխորհրդային տեղեկատվական աղբյուրները հաճախ զգայուն են հայաստանյան իրադարձությունների հանդեպ, մինչդեռ էական է, որ համայնքները և՛ որպես Հայության կարևոր մաս, իրենց խնդիրներով, տեսլականներով ու առօրյա անցուդարձով, բավարար արտացոլվեն նաև ՀՀ տեղեկատվական դաշտում: Հայաստանի տեղեկատվական դաշտը պետք է ավելի նպաստի հետխորհրդային երկրների հայ համայնքների լսելիությանը: Թերևս, հայաստանյան կողմից նման խթանումը կնպաստի իրենց իսկ համայնքային տեղեկատվության հանդեպ հետաքրքրության ակտիվացմանը, դրանով իսկ՝ համայնքային կառույցների հետ կապերի սերտացմանը:

● Աջակցություն համայնքային կառույցների և նրանց տեղեկատվական աղբյուրների միասնական բազաների ստեղծման ջանքերին, որոնք որպես հարթակ կձառայեն տեղեկատվության առավել արդյունավետ փոխանակման և համագործակցային կապերի ստեղծման համար ինչպես կառույցների, այնպես էլ անհատների միջև:

● Հետխորհրդային հայ համայնքների երիտասարդներին հայրենիք այցելելու, այդ այցերը հաճախացնելու

հնարավորություն ընձեռող ծրագրերի շարունակականություն. դրանք կնպաստեն նրանց՝ հայաստանաբնակ սերնդակիցների հետ ավելի ակտիվ հաղորդակցմանը, ինչպես նաև թույլ կտան առավել հստակ և իրական ընկալումներ ունենալ հայրենիքի և հայրենակիցների վերաբերյալ:

- Աջակցություն և խրախուսում հասարակական, մշակութային, կրթական, տնտեսական ոլորտներում ներգրավված հայերի սփյուռքյան և հայաստանյան կողմերի միջև հորիզոնական կապերի և համագործակցության ձևավորման ու զարգացման հարցում:

- Համայնքների հետ աշխատանքում հենվել կիրթ, ազդեցիկ, հաջողակ, բնակության երկրի սոցիալական կյանքին ինտեգրված հայեր ունենալու գաղափարին: Այս կետը կարևոր է այն առումով, որ վերջիններս երկմշակութային լինելու, երկխոսություն վարելու և երկու երկրների միջև կամուրջ հանդիսանալու հնարավորության շնորհիվ կարող են ակտիվացնել և՛ համայնքային կյանքը, և՛ կապը հայրենիքի հետ: Այս ուղղությունը ենթադրում է ընդլայնված հնարավորություններ համայնքներում խոստումնալից հայ երիտասարդների համար, աջակցություն բնակության երկրում իրենց կրթական և աշխատանքային առաջխաղացման մեջ: Ի դեպ, ուսումնասիրված երիտասարդների մեծ մասը, ինչպես նշել ենք վերլուծության մեջ, հիմնականում իրենց մասնագիտական ոլորտում ինտելեկտուալ տիպի աշխա-

---

տանքում ներգրավված երիտասարդներ են և այս առումով՝ խոստումնալից են նման գիծ վերցնելու դեպքում:

- Համայնքների միավորմանն ուղղված աշխատանքի երկու ճակատներից մեկը պասիվ հատվածին ակտիվացնելու, մյուսը՝ ակտիվ հատվածի հետ համագործակցությունը լայնացնելու և ճշգրտելու հարցերն են: Որպես կողմնորոշիչ վերցնելով այն, որ հետազոտությանը մասնակցելու արագ արձագանքն ու գերակշիռ թիվը Ռուսաստանի հայերից է, կարելի է փաստել, որ հետխորհրդային տարածքի հայ համայնքներում առավել ակտիվ է մնում ՌԴ հայությունը: Սա նաև հիմք է պնդելու, որ այս հատվածն ավելի, քան մյուսները, այս փուլում կարող է դրսևորել պրոակտիվություն: Սա ենթադրում է դիտարկել այս երիտասարդներին որպես առաջատար ոչ միայն թվային գերակշռման, այլև համայնքների կազմակերպման և ակտիվության խթանման գործընթացներում լոկոմոտիվի, կոորդինացնողի դեր տանելու առումով:

- Որպես նախորդ կետի շարունակություն՝ անհրաժեշտ է թվում նաև ուսումնասիրել համայնքի ակտիվ, ինտելեկտուալ հատվածի տեսլականները և նրանց պատկերացրած կոնկրետ մեխանիզմները Հայաստանի և Հայության, ինչպես նաև բնակչության երկրի հայերի ներուժի զարգացման վերաբերյալ, ինչպես նաև այդ գործընթացներին մասնակցելու նրանց շարժառիթները:

- Շարունակում է արդիական մնալ հայրենիքի և ազգային պատկանելության կապի կրթական-ճանա-

չողական ասպեկտի բավարարումն արդիականացված միջոցներով, դրսում բնակվող մինչդպրոցական և դպրոցական տարիքի հայ երեխաներին հայրենիքին հաղորդակից դարձնելը, իրենց հայրենաբնակ տարեկիցների հետ կապի զգացումն ամրապնդելը: Ասվածի օրինակ կարող է լինել Հայաստանին առնչվող թեմայով մանկական *on-line* նկարչությունը՝ համակարգիչների վրա միաժամանակյա ցուցահանդեսով, ինչպես նաև *on-line* բաց դասերի կազմակերպումը: Այս բաղադրիչը ենթադրում է նաև շարունակել տարբեր մեխանիզմներով (կրթաթոշակ, պարգևատրումներ ևն) հայապահպանման ուղղությամբ անհատների և կազմակերպությունների ջանքերի խրախուսումը, ինչպես նաև հայ մանուկների ու պատանիների ներգրավվածության խթանումը, հայերենի ուսուցումը (օրինակ՝ հայերենին ու հայկական մշակույթին վերաբերող օլիմպիադաների և այլ մրցույթների կազմակերպմամբ): Այս առումով ՀՀ պետական աջակցությունն ուսումնական նյութերով մեծ խթան կհանդիսանա այս համայնքների աշխուժացմանը և կբարձրացնի հայերենի նկատմամբ ուշադրությունը և պատասխանատվությունը:

● Հաշվի առնելով կիրակնօրյա դպրոցների՝ հետզհետե նվազող ազդեցությունը որպես հայապահպանման ռեսուրս, համայնքային դպրոցները կարիք ունեն ոչ միայն ուսումնական նյութերով զինվելու, այլև նոր մոտեցումներով համալրվելու: Այդպիսիք կարող են լինել,

---

օրինակ, կազմակերպված փոխանակման ծրագրերը, որոնց շնորհիվ հետխորհրդային երկրների հայ համայնքի երեխաները միառժամանակ հնարավորություն կստանան սովորել հայաստանյան դպրոցներում: Ի հավելումն, հաշվի առնելով հետխորհրդային տարածքում հայ երեխաների գերակշռող մասի ռուսախոս լինելը, անհրաժեշտ է թվում հայկական արբանյակային ալիքներով հայերենի ուսուցման հեռուստատեսային հաղորդումների հեռարձակումը՝ արդի վիզուալ տեխնիկայով հագեցած: Այս նույն նպատակին կծառայի Հայաստանի դպրոցներից առկախ ռեժիմով սփյուռքահայության համար հայերեն և հայոց պատմության հեռակա ուսուցանումը և ընդհանրապես սփյուռքյան և հայաստանյան դպրոցների միջև գործընկերային հարաբերությունների հաստատումը: Այս առումով կարևոր է նաև հայ համայնքների ուսուցիչների (ոչ միայն հայերենի և հայոց պատմության, այլև հայկական երգի և պարի ուսուցիչների) վերապատրաստման ծրագրերի զարգացումը:

● Չնայած սակավաթիվ հայկական հեռուստաալիքներ արբանյակային եթեր ունեն ՀՀ-ից դուրս, շատ հայեր դրսում նշում են, որ վերջիններս որակով և բովանդակությամբ (սերիալներ, ժամանցային) չեն ծառայում իրենց բուն նպատակին՝ բավարարել Հայաստանի հետ կապի զգացումը: Ուստի, այս փուլում տեղին է թվում համահայկական հեռուստատեսային լուրջ, որակյալ և դինամիկ նախագծի մշակումը կամ որպես այլընտրանք՝ գոյություն ունեցող

հեռուստաալիքները համապատասխան ուղղվածության հաղորդումներով համալրելը (մանկական, պատանի և երիտասարդ տարիքային տարբերակմամբ Հայաստան–Միյուոք հեռուստակամուրջներ, մշակութային ու գիտական ձեռքբերումներ, կյանքի պատմություններ, հայտնի դեմքեր, հիշարժան իրադարձություններ, հյուրընկալվող համայնքների միջև թիմային մրցույթներ ևն):

- Որոշ ազդեցիկ տեղեկատվական կայքերի հայերեն տարբերակների ավելացումը դրական գործոն կարող է հանդիսանալ ինֆոռեսուրսը գորեղացնելու տեսակետից: Անգամ եթե սպառող լսարանի՝ հայերենն օգտագործելու հավանականությունը չնչին է, հայերենի հենց վիզուալ առկայությունը կայքում կարող է նպաստել հայկականության իմիջի ընդգծմանը, խթանել հայերենի հանդեպ հետաքրքրությունը, ինչպես նաև օգնել հայերենի իմացության պահպանմանը:

---

\*\*\*

Ի մի բերելով վերլուծությամբ վեր հանված դրական և բացասական միտումները, հնարավորություններն ու ռիսկերը՝ կարելի է փաստել, որ հետխորհրդային երկրների հայության երիտասարդ հատվածի մեջ պահպանված են հայրենիքի գործերին ներդրում ունենալու պատրաստակամությունը, դրական էթնիկական ինքնությունը, բարենպաստ են նաև մի շարք այլ ցուցանիշներ: Այս գործոնները կարելի է դիտել որպես մեկնարկային բավարար հիմք՝ կոնկրետ համատեղ գործողությունների պլատֆորմի ձևավորման համար:

## **2. ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԵՐԻ ԳՈՐԾՈՆԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ**

Հետխորհրդային տարածքում համացանցը (ինտերնետը) վերջին տարիներին դարձել է բավական լուրջ գործիք, որն աջակցում է հայկական համայնքների և Հայաստանի միջև կապերի ամրապնդմանը: Ինտերնետում գործող սոցիալական բնույթի բազմաթիվ հարթակները թույլ են տալիս հայերի միջև շփում կազմակերպել, տեղեկացնել համայնքների մասին, պահպանել կապը Հայաստանի հետ:

Նման հարթակներում՝ վիրտուալ սոցիալական ցանցերում, ֆորումներում, բլոգներում, միայն տեղեկատվության փոխանակում չէ, որ կատարվում է: Շատերին դա հնարավորություն է տալիս վերականգնել խզված կապերը Հայաստանի հետ, սովորել հայերեն լեզուն և այլն:

Բացի դրանից, նման հարթակները հնարավորություններ են ստեղծում նոր կապեր ձևավորել, հանդես գալ նախաձեռնություններով, բավարարել հասարակական ակտիվության և ինքնարտահայտման պահանջմունքները: Այս շփումներում, ազգային պատկանելությունից բացի, հետաքրքրություն և կարևորություն ունի ևս մի քանի հանգամանք՝ շփման լեզուն, տեղակայումը և վիրտուալ հաղորդակցման հարթակի տիպը: Դիտարկենք, թե ինչպես են դրսևորվում նշված հանգամանքները հետխորհրդային տարածքի հայերի վիրտուալ շփումներում:

---

## 2.1. Հաղորդակցման լեզուն

Համացանցում հետխորհրդային տարածքի Սփյուռքի ներկայացուցիչները հիմնականում ռուսալեզու և հայալեզու խմբեր են: Բայցևայնպես, նրանց ինտերնետային հաղորդակցման հիմնական լեզուն ռուսերենն է, ինչը պայմանավորված է մի քանի պատճառով.

1. Հետխորհրդային տարածքի Սփյուռքի մի մասն ընդհանրապես չի տիրապետում ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր հայերենին:

2. Մի մեծ զանգված հայերենին տիրապետում է բանավոր, սակայն գրելիս դժվարանում է: Այս հանգամանքը կաշկանդում է շատերին, ինչի պատճառով նրանք գերադասում են շփվել ռուսերենով:

3. Ռուսերենն առ այսօր շարունակում է մնալ տարածաշրջանի շփման հիմնական լեզուն, ինչն իր ազդեցությունն ունի նաև հայերի շրջանում:

Բացի այդ, երկար ժամանակ հայերենը համակարգչային ծրագրերում չօգտագործվող լեզու էր: Այդ պատճառով նույնիսկ Հայաստանում հայերի մեծ մասը մինչև վերջերս նախընտրել է ինտերնետում շփվել ոչ հայերենով:

Այդպիսով հայերենն ավելի թույլ դիրք և ազդեցություն ունի համացանցում՝ չնայած վերջին շրջանում նրա դերը հետզհետե մեծանում է: Ներկայումս համացանցը «հայացնելու» միտում է նկատվում: Հետխորհրդային տարածքում բնակվող հայերի մի

մասը ձգտում է կիրառել հայերենը: Նույնիսկ նկատվում են քավական ազդեցիկ ֆլեշ մոբեր (*flash mob*)՝ ուղղված ինտերնետում հայերենով շփվելու խրախուսմանը: Օրինակ, 2007 թվականին զանգվածային ֆլեշ մոբ ընթացավ բլոգերների միջև, որի կարգախոսն էր. «Այո՛, ես գրում եմ հայերեն»<sup>1</sup>: Դրան մասնակցեցին մի քանի տասնյակ հայ բլոգերներ նաև Սփյուռքից:

Նման ցանցային ձևով *HAYASTAN.com* կայքի հիման վրա ստեղծվեց մի մեծ ծրագիր՝ «Խոսե՛ք հայերեն, խորհե՛ք հայերեն, ապրե՛ք հայերեն»<sup>2</sup>: Այն թույլ է տալիս բոլոր նրանց, ովքեր ցանկություն ունեն սովորել կամ ամրապնդել հայերենը, օգտվել կայքում զետեղված բազմաթիվ ուսուցանող նյութերից:

Մեկ ուրիշ ֆորումի՝ «ԴԱԸ» ակումբի (*akumb.am*) ողջ ուղղվածությունը հայերենով շփումը խրախուսելն է: Ակումբի կանոնադրությունում հստակ գրված է նրա կարգախոսը. «Պահպանել հայ գիրն ու գրականությունը»<sup>3</sup>:

Սակայն, չնայած նման նախաձեռնություններին, հիմնական շփման լեզուն շարունակում է մնալ ռուսերենը: Ամենայն հավանականությամբ, այն դեռևս չի զիջի իր դիրքերը: Հնարավոր է, որ հայաստանաբնակների շրջանում ժամանակի հետ նվազի ռուսերենի կիրառումը համացանցում, ինչի միտումն արդեն իսկ նկատվում է. նրանց շրջանում հայերենի և անգլերենի դերը հետզհետե աճում է, իսկ ռուսերենինը՝ արագ նվազում: Նման զարգացումները կարող են հանգեցնել մեկ ուրիշ իրողության.

---

<sup>1</sup> <http://ahousekeeper.livejournal.com/29202.html>

<sup>2</sup> <http://hayeren.hayastan.com>

<sup>3</sup> <http://www.akumb.am/rules.php>

---

**Ժամանակի ընթացքում կարող է խզվել կապը Հայաստանի և հետխորհրդային տարածքի Սփյուռքի հայ երիտասարդների միջև:**

## ***2.2. Տեղակայման հարցերը***

Համացանցում բավական դժվար է սահմաններ գծել այն դեպքում, երբ տվյալ կայքը և այն իրագործողները չեն ֆիքսում աշխարհագրությունը: Հատկապես եթե խոսքն այնպիսի կայքերի մասին է, որտեղ ոչ թե զետեղվում է տեղեկատվություն, այլ ընթանում է վիրտուալ շփում՝ ֆորումների, բլոգների, սոցիալական ցանցերի (*social networks*) և այլն:

Համացանցում հայկական գրեթե բոլոր այսօրինակ հարթակներն այցելուների խառնուրդ են, ուր ներկայացված են հայեր ինչպես Հայաստանից, այնպես էլ Սփյուռքից: Այն հարթակներում, ուր հիմնական շփման լեզուն ռուսերենն է, որպես կանոն, այցելուների կեսից ավելին Ռուսաստանի Դաշնության և այլ հետխորհրդային երկրների հայեր են: Անգլերեն հարթակներում այս տարածքների հայերը փոքրամասնություն են կազմում:

Այսպես, օրինակ, ռուսալեզու *OpenArmenia.com* ֆորումի այցելուների 56,35%-ը կազմում են այցելուները Ռուսաստանից, 14,09%-ը՝ Ուկրաինայից և միայն 8,83%-ը՝ Հայաստանից<sup>1</sup>:

Այցելուների նման բաշխումն ընդհանուր առմամբ բնորոշ է հայկական վիրտուալ սոցիալական ցանցերի մեծամասնությանը: Հիմնական այցելուները Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան

---

<sup>1</sup> Նշված են 2010թ. սեպտեմբերի 15-ի տվյալները:

եռյակից են, եթե կայքերը չեն կրում ավելի նեղ համայնքային բնույթ: Ընդ որում՝ գուտ համայնքային կայքերը, ֆորումները ներկա համացանցի զարգացման պայմաններում սկսում են պարզապես անհետանալ՝ դիրքերը զիջելով ավելի լայն ձևաչափում գործող կայքերին: Այդ պատճառով կարելի է նշել, որ վիրտուալ հաղորդակցում ապահովող հայկական կայքերը ներկայում գնում են ավելի ընդգրկուն, գլոբալ լսարան ձեռք բերելու ուղով: Եվ հիմնական բաժանարար գիծն անցնում է օգտագործվող լեզվի դաշտերի միջև:

Հետխորհրդային տարածաշրջանի համացանցային սեզմենտում այսօր գերիշխող դեր ունեն ռուսաստանաբնակ հայերը և ռուսերեն լեզուն: Սակայն որպես ավելի փոքրաթիվ, բայց կազմակերպիչ ուժ հանդես են գալիս Հայաստանում բնակվող հայերը:

### ***2.3. Ֆորումներ և ծանոթության կայքեր***

Ավանդական համացանցում, ամենաակտիվ և անհատական օգտվողների թվաքանակի տեսանկյունից, ամենաայցելվող կայքերը վիրտուալ շփում առաջարկող հարթակներն են: Այցելուների համաշխարհային ծածկույթ ունեցող հայկական կայքերից ամենաշատ թվով այցելուներ ունեն նրանք, որոնք առաջարկում են վիրտուալ ծանոթությունների հնարավորություն:

Մյուս կողմից՝ միայն ծանոթության ծառայություններ տրամադրելը նպատակահարմար չէ: Այդ պատճառով նման կայքերը սկսում են լրացուցիչ ծառայություններ առաջարկել, այդ թվում՝ քննարկումների հնարավորություն ընձեռել:

Այդպիսով, նման կայքերը, որոնք տրամադրում են ժամանցի,

---

ծանոթությունների և նմանատիպ այլ ծառայություններ, սկսում են գուգահեռաբար վերածվել վիրտուալ քննարկումների հարթակների: Փաստացի, նման շատ կայքեր նույն տիպի հարթակներ են, ինչպիսիք են ինտերնետային ֆորումները:

Հայկական ֆորումները հիմնականում կարելի է բաժանել մի քանի պայմանական տիպի.

- Ընդհանուր հարթակներ, ուր մեծ մասամբ երիտասարդներն են շփվում: Նման խմբերի մասնակիցները հիմնականում բնեռացված հետաքրքրություններ ունեն՝ խիստ քաղաքականացված և ազգայնական խմբերից մինչև կատարյալ ապաքաղաքական և ապազգայնացված:

- Հարթակներ ըստ ուղղվածության՝ քաղաքական, հասարակական, S2S (տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների) ոլորտին վերաբերող և այլն: Նշենք, որ ուղղվածությունը ցույց է տալիս քննարկումների միայն հիմնական թեման:

Ֆորումները լուրջ ազդեցություն ունեն, քանի որ ընդգրկում են մարդկանց, որոնք երկարատև շփման մեջ են գտնվում իրար հետ, ունեն նմանատիպ հետաքրքրություններ: Այդ պատճառով ֆորումներն ակտիվ հարթակներ են, ուր ոչ միայն քննարկումներ են իրականանում, այլ նաև իրագործվում են բազմաթիվ հասարակական, քաղաքական ակցիաներ, որոնք ներգրավվում են ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի և առանձին համայնքների կյանքում: Բացի դրանից, զանազան ֆորումների խմբերի միջև հաճախ առաջանում է համագործակցություն՝ կապված Հայաստանին և Սփյուռքին հուզող հարցերի հետ:

Ֆորումներն ըստ տեղակայման դժվար է տարանջատել:

Նույնիսկ այն հարթակները, որոնք ստեղծվել են Սփյուռքի որևիցե համայնքի ուժերով, ժամանակի ընթացքում սկսում են ներգրավել այցելուներ Հայաստանից և հայկական այլ համայնքներից: Գրեթե բոլոր ռուսալեզու ֆորումները հետխորհրդային տարածքի հայկական Սփյուռքի ներկայացուցիչների հանդիպավայր են հանդիսանում:

Հարկ է նշել նաև, որ մի շարք վիրտուալ համայնքներ ձևավորվել և շարունակում են գործել տեղեկատվական կամ այլ տիպի կայքերի վրա՝ չլինելով դրանց հիմնական մասը, սակայն հանդիսանալով հայկական համաշխարհային ցանցի զգալի խումբ: Օրինակ, *Yerevan.ru* կայքը մեծ տեղեկատվական պորտալ է, որում ֆորումը կազմում է մի փոքր մաս, սակայն այնտեղ ձևավորվել է վիրտուալ համայնք:

## Հիմնական հայկական ֆորումները

	Կայքի անվանումը	Հիմնական ուղղվածությունները/ բաժինները	Լրատվական բաժնի առկայությունը	Այլ տեղեկություններ
1.	armenia-online.ru	Ծանոթություններ, քննարկումներ	Հայկական լրահոսն արտատպվում է այլ կայքերից	Էլ. փոստ՝ guar@mail.ru
2.	gisher.ru	Ծանոթություններ, քննարկումներ, ժամանցային	-	Էլ. փոստ՝ admin@gisher.ru
3.	openarmenia.com	Քննարկումներ	On-line հարցազրույցներ	Էլ. փոստ՝ admin@openarmenia.com
4.	sirumem.com	Ծանոթություններ, քննարկումներ	-	Փակ գրանցում է
5.	yerevan.ru	Քննարկումներ, պատմական շտեմարան, ազգագրական շտեմարան, մշակութային շտեմարան	+	Ethno Publishing Group, Էլ. փոստ՝ it_bills@troika.ru
6.	armkb.com	Քննարկումներ	-	Փակ գրանցում
7.	Vardanank.org	Քննարկումներ	-	Էլ. փոստ՝ makbag@mail.ru
8.	Hayastan.com	Քննարկումներ, ազգագրական շտեմարան, մշակութային շտեմարան	Հայկական լրահոսը արտատպվում է այլ կայքերից	Փակ գրանցում
9.	artsakh.info	Քննարկումներ	-	Էլ. փոստ՝ grigor@genocide.ru, Melkonyan Grigor Genocide.ru կայքի ֆորումն է
10.	siv.am	Քննարկումներ, համայնքային իրադարձություններ	+	Հայ երիտասարդության ինտելեկտուալ փոխգործակցության ընկերակցություն – Сообщество интеллектуального взаимодействия армянской молодежи (СИВАМ), ՌԴ Էլ. փոստ՝ grago@gcnet.ru

	Կայքի անվանումը	Հիմնական ուղղվածությունները/ բաժինները	Լրատվական բաժնի ստեղծությունը	Այլ տեղեկություններ
11.	haylife.ru	Քննարկումներ, համայնքային իրադարձություններ, ազգագրական շտեմարան, մշակութային շտեմարան	+	Էլ. փոստ՝ nmv2nmv@mail.ru
12.	viparmenia.com	Ծանոթություններ, քննարկումներ	-	Էլ. փոստ՝ whois@bluehost.com
13.	khachmeruk.com	Ծանոթություններ, քննարկումներ	-	Էլ. փոստ՝ tgralex@gmail.com
14.	meronq.com	Ծանոթություններ, քննարկումներ	-	Էլ. փոստ՝ aarzumanyan@gmail.com
15.	akumb.am	Քննարկումներ	-	Էլ. փոստ՝ harutyunyan.artak@gmail.com
16.	Acher.Ru	Ծանոթություններ, քննարկումներ	+	

## 2.4. Բլոգներ

Հայկական բլոգների գերակշռող զանգվածը գտնվում է մեկ հարթակում՝ *Livejournal.com*: Այն ունի նաև սոցիալական ցանցի տարրեր, ինչի պատճառով բլոգների թիվը հիմնականում հենց այստեղ էլ շարունակում է ավելանալ: Բացի այդ, *Livejournal.com*-ը ռուսալեզու համացանցի հատվածի ամենասակտիվ և այցելուների կողմից ընդունվող բլոգային հարթակ է:

Քանի որ բլոգներում մարդիկ ներկայանում են ավելի անհատական կերպով, ապա հաճախ հայկական համայնքի ներկայացուցիչը զուտ բլոգային հարթակում դրսևորվելով՝ անմիջապես չի կարող առանձնացվել որպես Մփյուռքի ներկայացուցիչ: Այսպես, բազմաթիվ հայազգի բլոգերներ Ռուսաստանի Դաշնությունից իրենց բլոգներում ներկայանում են որպես

---

ռուսաստանցի ազգայնականներ: Բացի այդ, շատ են դեպքերը, երբ բլոգերները չեն բացահայտում իրենց ազգությունը:

Այդ պատճառով դժվար է բլոգներում բացահայտել նրանց, որոնց կարելի կլիներ բնորոշել որպես հայկական բլոգերներ Սփյուռքից: Նման հաշվառում կատարելու մի քանի փորձ վերջին տարիների ընթացքում կատարվել է: Դրանցից ամենահաջողը *Miacum.ru* կայքի հարթակում ստեղծված հայկական ռուսալեզու բլոգների քաղվածքներն են, որոնք կատարվում են ամենօրյա ռեժիմով: Սակայն այստեղ ներգրավված են հայկական բլոգեր առանց սահմանափակումների՝ Հայաստանից և ամբողջ Սփյուռքից<sup>1</sup>:

Մյուս կողմից, բլոգերները ստեղծում են համայնքներ (*community*), որոնք անմիջականորեն հայկական թեմաների հետ կապված ուղղվածություն ունեն: Դրանցում ներգրավվում են Սփյուռքի ներկայացուցիչները: Այդպիսի հիմնական համայնքները կրկին գործում են *Livejournal.com* հարթակում: Դրանց մի մասն ունի անմիջականորեն Սփյուռքի հետ կապված ուղղվածություն: Նման համայնքները բլոգերների շփման համար ֆորումային տիպի հարթակներ են ստեղծում:

---

<sup>1</sup> <http://miacum.ru/gazeta/cat/armlenta>

**Աղյուսակ 2.2**

**Հայկական բլոգային համայնքներ**

	Համայնքի անվանումը	Սկարագրությունը	Հասցեն	Մասնակիցների թիվը
1.	armenia_ru	Լուրեր Հայաստանից, Սփյուռքից	community.livejournal.com/armenia_ru/	1149
2.	Учим армянский	Հայերեն լեզվի ուսուցում	community.livejournal.com/learn_armenian	156
3.	travel_armenia	Հայաստանի գովազդը զբոսաշրջիկների համար	community.livejournal.com/travel_armenia	399
4.	ru_armenia	Լուրեր Հայաստանից, Սփյուռքից	community.livejournal.com/ru_armenia/	151
5.	Duduk	Դուդուկի սիրահարների համար	community.livejournal.com/ru_duduk	130

**2.5. Վիրտուալ սոցիալական ցանցեր**

Համացանցում հետխորհրդային տարածքի հայկական խմբերը, նմանվելով համայնքային կառուցվածքին, բավական սերտ կապերի մեջ են գտնվում հայաստանյան համացանցի սեզմենտի հետ: Հիմնական շփման լեզուն այստեղ մնում է ռուսերենը, թեև հիմա բավական տարածված է դառնում համացանցում հայերենով շփվելը: Սակայն, հետխորհրդային երկրներում ինտերնետից օգտվողների երիտասարդ սեզմենտի զգալի մասը հայերենին կամ չի տիրապետում, կամ տիրապետում է ոչ բավարար չափով, ինչը ստիպում է օգտվել ռուսերենից, որին խառնվում է հայկական «սլենգը»՝ ձևավորելով յուրահատուկ համացանցային լեզու: Բացի դրանից, եթե նույնիսկ օգտագործվում է հայերենը, ապա հիմնականում գրվում է լատինատառ հայերեն:

Ի տարբերություն այլ համայնքների, հետխորհրդային երկրների համայնքներն ավելի սերտ կապեր ունեն Հայաստանի

---

հետև և համացանցն օգտագործում են այդ կապերն ամրապնդելու կամ էլ խզված կապերը վերահաստատելու համար:

Այսպիսով, հիմնական ակտիվությունը, որը ծավալում են հետխորհրդային երկրների համայնքների ներկայացուցիչները սոցիալական ցանցերում, կարելի է բաժանել մի քանի տեսակի.

1. Հայաստանի մասին տեղեկատվության ձեռքբերում: Այս նպատակը հիմնականում իրագործվում է ցանցերի միջոցով Հայաստանից տարածվող ակտուալ տեղեկատվությանը հետևելով:

2. Հայաստանի հետ կապի պահպանում:

3. Մասնակցություն Հայաստանի օգտին տեղեկատվական հակամարտությանը:

Վերջինն առանձին խումբ է կազմում, որը ձգտում է միավորվել նաև հակաադրբեջանական և հակաթուրքական տրամադրություններ ունեցող այլազգի խմբերի, օրինակ՝ հույների, ասորիների, լեզգիների և այլոց հետ:

Հիմնականում հետխորհրդային երկրների հայկական համայնքների ներկայացուցիչներն ակտիվ են բոլոր հայկական և գլոբալ սոցիալական ցանցերում: Այսպես, *Hayland.am* հայկական սոցիալական ցանցի այցելուների մոտ կեսը Հայաստանից դուրս է բնակվում և հիմնականում ռուսալեզու է: Իսկ *Armenia-online.ru-ն*, որը նույնպես ռուսալեզու ցանց է, մոտ 75% ոչ հայաստանաբնակ այցելուներ ունի: Գործում են մի շարք այլ, ավելի փոքր զուտ հայկական հասարակական ցանցեր, օրինակ՝ *Druzja.am*, *Kuku.am*, *Sirumem.com* և այլն:

Սակայն ամենաակտիվ սոցիալական ցանցերը, որոնցում ներգրավված են հայեր հետխորհրդային երկրներից, հետևյալ երեք հիմնական միջազգային հարթակներն են՝ *Vkontakte.ru*, *Odnoklassniki.ru*, *Facebook.com*: Տվյալ ցանցերում հայերի ներկայությունն ամբողջ աշխարհից հասնում է հարյուր հազարների (տե՛ս *Աղյուսակ 2.3, 2.4*):

### *Աղյուսակ 2.3*

#### *Odnoklassniki.Ru ցանցում գործող հայկական մի շարք խմբեր*

	<b>Խմբի անվանումը</b>	<b>Մասնակիցների թիվը (2010թ. սեպտեմբերի սվյալներով)</b>
1.	Мы "ЗА ПРИЗНАНИЕ" Геноцида Армян	39308
2.	СКОЛЬКО АРМЯН В ОДНОКЛАССНИКАХ ?	55574
3.	Я ЛЮБЛЮ АРМЕНИЮ-I LOVE ARMENIA	24201
4.	О геноциде армян "признание и осуждение	5031
5.	Сколько Армян в Мире?	1804
6.	СКОЛЬКО АРМЯН В ОДНОКЛАССНИКАХ?	553

**Աղյուսակ 2.4**

***Vkontakte.ru* ցանցում գործող հայկական մի շարք խմբեր**

	<b>Խմբի անվանումը</b>	<b>Մասնակիցների թիվը (2010թ. սեպտեմբերի սվյալներով)</b>
1.	♥ARMENIA♥ՀԱՅԱՍՏԱՆ♥АРМЕНИЯ♥	55123
2.	Армяно-Русское интернет сообщество!	15862
3.	Древняя Армения	10276
4.	Клуб ♥ АРМЯН	4914
5.	АРМЯНЕ МИРА	3131
6.	Патриотическая Армянская Резервная Армия Добровольцев П.А.Р.А.Д	1 705
7.	24 АПРЕЛЯ, 7 ДЕКАБРЯ, ГЕНОЦИД, ЗЕМЛЯТРСЕНИЕ, МЫ НЕ ЗАБУДЕМ ЭТО НИКОГДА.....	1361
8.	MOSKOVSKIE ARMYANE	1396
9.	ДЕТИ † АРМЕНИИ & ГРУЗИИ †	1859
10.	Пятигорские АРМЯНИ	1017
11.	СУХУМСКИЕ АРМЯНЕ	539
12.	АРМЯНЕ РУДН!!!	750
13.	АРМЯНЕ РЭА им.Г.В.ПЛЕХАНОВА	290
14.	АРМЯНЕ КАЗАНИ	172
15.	АРМЯНЕ КАЛУГИ И КАЛУЖСКОЙ ОБЛАСТИ И ИХ ЗЕМЛЯКИ СО ВСЕГО МИРА	122
16.	АРМЯНЕ РГТЭУ	146
17.	...Центр Армянского Языка и Культуры...	82
18.	Армяне в Великом Новгороде	121
19.	Армяне МГИМО	47
20.	АРМЯНЕ БАУМАНКИ	48

## Վիրահայություն

Վիրահայության հետ կապված կայքերն ամենաակտիվներից են: Դրանք անդրադառնում են Վրաստանի հայկական համայնքի և Ջավախքի ինդիվիդուալներին:

Վիրահայերը համախմբվում են բավական մեծ ցանցերում՝ օգտագործելով ինչպես հայտնի սոցիալական ցանցերը, այնպես էլ հենց վիրահայկական հատուկ կայքերը: Այսպես, «ԱԽԱԼՅԽԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔ»-ը (*Akhaltskha.net*) տրամադրում է տեղեկատվություն չորս լեզվով՝ հայերեն, վրացերեն, ռուսերեն և անգլերեն: Այստեղ տրվում է ինչպես ընդհանուր տեղեկատվություն շրջանի մասին, այնպես էլ վիրահայությանը վերաբերող օպերատիվ նյութեր, գործում է ֆորում: Համայնքային կայք է հանդիսանում նաև Ջավախքի գյուղերից մեկի ԽԱՆԴՈ կայքը (*Khando.ucoz.ru*):

Նման կայքերը դրական նշանակություն ունեն վիրահայությանը վերաբերող տեղեկատվության տարածման հարցում: Սակայն ինտերնետի ներկա զարգացումներն արդեն իսկ թույլ չեն տալիս ակտիվություն ծավալել այս կայքերի շուրջ: Այդ պատճառով ինչպես վիրահայերը, այնպես էլ մյուս հայկական համայնքների ներկայացուցիչները ձգտում են ծավալել հասարակական գործունեություն և խմբեր կազմել մեծ հարթակների վրա, ինչպիսիք են՝ *Vkontakte.ru*-ն, *Odnoklassniki.ru*-ն: Վիրահայկական հիմնական խմբերը տարածքային հիմքով միավորված խմբերն են, որոնք ամբողջ աշխարհով սփռված բավական մեծաքանակ մասնակիցներ ունեն (*տե՛ս Աղյուսակ 2.5*):

**Տարածքային հիմքով միավորված վիրահայկական խմբերը  
ռուսական սոցիալական ցանցերում**

	<b>Խմբի/կայքի անունը</b>	<b>Խմբի/կայքի հասցեն</b>	<b>Մասնակիցների թվաքանակը</b>
1.	Hayastan _ Sacartvelo	vkontakte.ru/club1599876	7500
2.	ДЕТИ АРМЕНИИ & ГРУЗИИ	vkontakte.ru/club171927	1800
3.	ГРУЗИЯ+АРМЕНИЯ	vkontakte.ru/club24104	1625
4.	Армяне Грузии	vkontakte.ru/club1205964	400
5.	КрАсАвиЦЫ и КрАсАвЦы АРМЕНИИ и ГРУЗИИ	vkontakte.ru/club1167892	220
6.	ТБИЛИССКИЕ АРМЯНЕ	vkontakte.ru/club18907075	12
7.	Армяне Грузии	odnoklassniki.ru	3210
8.	Армяне из Грузии	odnoklassniki.ru	790
9.	ГРУЗИНСКИЕ АРМЯНЕ	odnoklassniki.ru	1000
10.	ГРУЗИНСКИЕ АРМЯНЕ	odnoklassniki.ru	400
11.	АРМЯНЕ Грузии (Нас больше, чем МНОГО)	odnoklassniki.ru	150
12.	ГРУЗИНЫ И АРМЯНЕ ИЗ ГРУЗИИ В ГОРОДЕ НОВОРОССИЙСКЕ	odnoklassniki.ru	50
13.	ТБИЛИССКИЕ АРМЯНЕ!	odnoklassniki.ru	4700
14.	ТБИЛИССКИЕ АРМЯНЕ	odnoklassniki.ru	100
15.	Թորիացիներ ( Ջավախք )	odnoklassniki.ru	210
16.	Ջավախք Խորհեյա	odnoklassniki.ru	140
17.	ՋԱՎԱԽՔ ԼՈՄԱՏՈՒՐՅԷ	odnoklassniki.ru	60
18.	КАТНАТУ >> ДЖАВАХК <<	odnoklassniki.ru	120
19.	"Картикам-Джавахк"	odnoklassniki.ru	120
20.	Ахалкалакцы	odnoklassniki.ru	170
21.	КАРЗАХ	odnoklassniki.ru	80
22.	ПОГАЦИНЭР, ДЖАВАХК ~БОГДАНОВСКИЙ Р-ОН ~С.ПОГА	odnoklassniki.ru	140
23.	Ջավախ-Ջավախք	odnoklassniki.ru	105
24.	ЈАՎԱՆՏԻԿԵ ԱՐՄՅԱՆԻ	odnoklassniki.ru	405
25.	Джавахк	odnoklassniki.ru	160
26.	ДЖАВАХК.ДЕТИ И ДРУЗЬЯ ЈАՎԱԽԵՏԻ	odnoklassniki.ru	820
27.	КАРАТЭ-ДЖАВАХК	odnoklassniki.ru	80
28.	Боксёры Джавахка	odnoklassniki.ru	60
29.	Все Джавахцы сдесь!	odnoklassniki.ru	170

Սոցիալական ցանցերը, սակայն, օգտագործվում են ոչ միայն վիրահայկական տեղեկատվական կամ տարածքային հիմքով խմբեր ձևավորելու, այլև Վրաստանում հայկական համայնքի իրավունքները պաշտպանելու, ինչպես, օրինակ, Վրաստանում հայկական եկեղեցիների պաշտպանության համար (տե՛ս *Աղյուսակ 2.6*): Առանձնահատուկ տեղ են գրավում Ջավախքի խնդիրների շուրջ ստեղծված խմբերը, որոնց մեջ ներգրավվում են շատ ավելի լայն աշխարհագրական պատկանելություն ունեցող հայեր:

**Աղյուսակ 2.6**

***Վիրահայության իրավունքների պաշտպանության խմբերը  
ռուսական սոցիալական ցանցերում***

	<b>Խմբի/կայքի անունը</b>	<b>Խմբի/կայքի հասցեն</b>	<b>Մասնակիցների թվաքանակը</b>
1.	ОСТАНОВИТЕ ПРИСВОЕНИЕ НОРАШЕНСКОЙ ЦЕРКВИ В ТБИЛИСИ, ПОДПИШИТЕ ПЕТИЦИЮ!!	vkontakte.ru/club3134300	81
2.	ՋՍՎԱԽՔ	odnoklassniki.ru	160
3.	ՍՍՄՑԽԵ – ՋՍՎԱԽՔ –ՕՍԼՎՍ	odnoklassniki.ru	75
4.	<<Ջավախք>> երիտասարդական ակումբ	odnoklassniki.ru	190
5.	ДЖАВАХК РОДИНА МОЯ	odnoklassniki.ru	805
6.	{{ДЖАВАХК}} АХАЛКАЛАК/	odnoklassniki.ru	1210
7.	МИАСНАКАН ДЖАВАХК	odnoklassniki.ru	60
8.	«ՋՍՎԱԽՔ» «JAVAKHK» «ДЖАВАХК»	odnoklassniki.ru	1260

Չավախքին վերաբերող խմբեր գոյություն ունեն նաև ընդհանուր հայկական մեծ ֆորումներում, որտեղ մասնակցում են ոչ միայն վիրահայեր, այլև հայեր Հայաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից, Եվրոպայից և այլ երկրներից, քանի որ թեման հետաքրքրում է հայերի շատ խմբերի (տե՛ս *Աղյուսակ 2.7*):

*Աղյուսակ 2.7*

*Չավախքի աջակցության խմբերը հայկական սոցիալական ցանցերում*

	<b>Հարթակի անունը</b>	<b>Խմբի/կայքի հասցեն</b>
1.	OpenArmenia	forum.openarmenia.com/forum/89-джавакк
2.	Hayastan	forum.hayastan.com/index.php?showforum=68
3.	Livejournal.com	community.livejournal.com/javakhk_news

***Ճանաչված հանրապետությունների համայնքները***

Ընդհանուր առմամբ երեք չճանաչված հետխորհրդային հանրապետություններում (Աբխազիա, Հարավային Օսիա և Մերձդնեստրյան Հանրապետություն) հայկական համայնքները մասնակցում են ընդհանուր հայկական խմբերում, բայց կազմում են նաև առանձին խմբավորումներ: Հատկանշական է, որ այս երկրների հայերը ձգտում են միավորվել միմյանց հետ: Առանցքային համախմբում է ձևավորվում ոչ միայն Հայաստանի, այլ նաև Լեռնային Ղարաբաղի շուրջ: Այսպիսով, այս համայնքները հիմնականում ինտերնետային ցանցերում համախմբվում են մի քանի ուղղությամբ.

1. Զուտ ներքին՝ տվյալ հանրապետությունների շուրջ ձևավորվող խմբեր

2. Հայաստանի և Հայության հետ կապի հաստատման խմբեր

3. Չճանաչված հանրապետությունների և Լեռնային Ղարաբաղի շուրջ ձևավորվող խմբեր:

Վերջին ուղղությամբ զարգացող ամենամեծ խմբերից մեկն է «*Освобожденные Независимые Республики: Абхазия, Нагорный Карабах, Южная Осетия*» (<http://vkontakte.ru/club13381820>), որն ունի 3225 մասնակից և համագործակցում է նաև զուտ օսական և այլ կովկասյան խմբերի հետ:

Նշված երեք հանրապետություններից ամենամեծ հայկական համայնքն ունի Արխազիան: Հայկական համայնքի մեծությունն Արխազիայի Հանրապետությունում նախադրյալներ է ստեղծում բավական ակտիվ ցանցային կապերի ստեղծման համար: Բացի այդ, վրաց-արխազական պատերազմից հետո արխազահայերի բավական մեծ համայնք է ստեղծվել երկրից դուրս: Արխազահայ սփյուռքը նույնպես խթանում է ցանցային ակտիվությունը (արխազահայկական ցանցային խմբերը տե՛ս *Աղյուսակ 2.8*-ում):

### *Աղյուսակ 2.8.*

#### *Արխազահայ խմբերը ռուսական սոցիալական ցանցերում*

	<b>Խմբի/կապի անունը</b>	<b>Խմբի/կապի հասցեն</b>	<b>Մասնակիցների թվաքանակը</b>
1.	СУХУМСКИЕ АРМЯНЕ	vkontakte.ru/club13381820	560
2.	Сухумские армяне!!!	Odnoklassniki.ru	130
3.	Армяне-Абхазии	Odnoklassniki.ru	760

---

## ***Ռուսալեզու համշենահայություն***

Համացանցում առանձին տեղ են գրավում նախկին Խորհրդային Միության տարածքում բնակվող համշենահայությանը միավորող ինտերնետային խմբերը: Համշենական ֆորումներից բացի, ինչպիսիք են՝ *hamshen.org*-ը և «Амшенский дворик»-ը (*forum.openarmenia.com/topic/12492-амшенский-дворик-кавказское-гостеприимство*), վերջին երկու տարվա ընթացքում նաև առաջացել են բավական լուրջ համշենահայերի միավորումներ *Odnoklassniki.ru* ցանցում (տե՛ս *Աղյուսակ 2.9*): Միաժամանակ, նկատելի է համշենահայության ավելի լայն շերտերի միավորման միտում, որի համար խթան է հանդիսացել և շարունակում է հանդիսանալ հենց ինտերնետը:

### ***Աղյուսակ 2.9***

#### ***Ռուսալեզու համշենահայության խմբերը սոցիալական ցանցերում***

	<b>Խմբի/կայքի անունը</b>	<b>Խմբի/կայքի հասցեն</b>	<b>Մասնակիցների թվաքանակը</b>
1.	HAMSHEN	Odnoklassniki.ru	900
2.	HAMSHEN	Odnoklassniki.ru	1680
3.	Ассоциация Амшенских Армян	Odnoklassniki.ru	600

## ***Հետխորհրդային այլ երկրների համայնքները***

Անդրադառնալով մյուս հետխորհրդային երկրների հայկական համայնքներին՝ հարկ է նշել, որ այս տարածքների բնակիչները մասնակցում են համահայկական ցանցային խմբերում: Սակայն, բացի համահայկական խմբերից, գործում են որոշ լոկալ խմբեր, որոնք ներկայացված են *Աղյուսակ 2.10*-ում:

**Հետխորհրդային որոշ երկրների հայկական խմբերը  
նուսական սոցիալական ցանցերում**

	Երկիրը	Խմբի/կայքի անունը	Խմբի/կայքի հասցեն	Մասնակիցների թվաքանակը
1.	Ղազախստան	armyane.kz	odnoklassniki.ru	720
2.	Ղազախստան	Армяне Казахстана ОБЪЕДИНЯЙТЕСЬ!!!	odnoklassniki.ru	300
3.	Ուկրաինա	Армяне Украины	odnoklassniki.ru	1320
4.	Ուկրաինա	Армяне на Украине	odnoklassniki.ru	305
5.	Ուկրաինա	Армяне В Украине	odnoklassniki.ru	260
6.	Ուկրաինա	Армяне Днепропетровска и всей Украины	odnoklassniki.ru	420
7.	Ուկրաինա	Армяне Украины	vkontakte.ru/club645281	400
8.	Ուկրաինա	АРМЯНСКАЯ ОБЩИНА УКРАИНЫ	vkontakte.ru/club17085577	40
9.	Ուկրաինա	АРМЯНЕ УКРАИНЫ ОБЪЕДИНЯЕМСЯ	vkontakte.ru/club2581241	300
10.	Ուկրաինա	АРМЯНЕ УКРАИНЫ - ОБЪЕДИНЯЙТЕСЬ!!!! МЫ НЕПОВТОРИМЫ!!!!	vkontakte.ru/club7620896	40
11.	Բելառուս	АРМЯНЕ БЕЛАРУСИ	odnoklassniki.ru	820
12.	Ուզբեկստան	САМАЯКАНДСКИЕ_АЯ МУАНЕ	odnoklassniki.ru	290
13.	Ուզբեկստան	Армяне Узбекистана- в разных странах	odnoklassniki.ru	280
14.	Ուզբեկստան	Самаркандские Армяне	vkontakte.ru/club3416240	16
15.	Ուզբեկստան	Самаркандские Армяне	vkontakte.ru/club12359794	12
16.	Թուրքմենստան	Армяне Туркмении!!	odnoklassniki.ru	720
17.	Թուրքմենստան	Ашхабадские армяне	vkontakte.ru/club146602	110

---

## ***Եզրահանգումներ և առաջարկներ***

Վերն ասվածի համատեքստում կարելի է հանգել այն եզրակացության, որ հետխորհրդային երկրների հայկական համայնքներ–Հայաստան համագործակցության նախադրյալները բավարար տեսանելի են: Բարձր են Հայաստանի համար ներդրում ունենալու մոտիվացիան և պատրաստակամությունը, Հայաստանի խնդիրների սուբյեկտիվ կարևորումը, սակայն բավարար չափով ամրապնդված չեն ներհամայնքային, առավել ևս՝ միջհամայնքային կապերը: Այս իմաստով լուրջ անելիքներ ունի հայկական կողմը՝ բարձրացնելու հետխորհրդային երկրների հայության ինքնակազմակերպման և միմյանց ու Հայաստանի հետ արդյունավետ փոխգործակցության մակարդակը: Այս նպատակի իրականացման համար հիմք կարող են ծառայել հետևյալ եզրահանգումներն ու առաջարկները.

1. Համայնքային կառույցներն ակնհայտորեն ունեն և՛ ինստիտուցիոնալ, և՛ տեխնիկական, և՛ մարդկային ռեսուրսների արդիականացման, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, մշակութային մասնակցության խթանման կարիք:

2. Համայնքների միավորման հարցում նպատակահարմար է աշխատել երկու՝ պասիվ հատվածին ակտիվացնելու և ակտիվ հատվածի հետ համագործակցությունն ընդլայնելու ուղղությամբ :

3. Ներհամայնքային համախմբումն ու կազմակերպումն արդյունավետ չեն ընթանա, եթե հիմնված լինեն զուտ ներհա-

մայնքային մեխանիզմների և գործողությունների վրա: Համայնքային գորեղացման և համախմբման գործոն ենք համարում տեղի ակտիվ հայության ներգրավումը Հայաստանի և Հայության համար իրականացվող գործողությունների շուրջ և ոչ թե պարզապես համայնքի հարցերի լուծմանն ուղղված ծրագրերում:

4. Մարդկային ռեսուրսների ներգրավման հարցում առանձնահատուկ աշխատանքներ տանել երեխաների և երիտասարդների ներգրավման ուղղությամբ՝ մեծապես օգտվելով ժամանակակից ՏՀՏ-ի (օրինակ՝ *SMS*-ներ, վիրտուալ ցանցեր) ընձեռած մեխանիզմներից:

5. Ապահովել հայ երիտասարդների մասնակցության զգացումը համայնքային գործերում՝ համայնքային միջոցառումների և հայաստանյան իրադարձությունների շուրջ տեղեկատվության ակտիվ փոխանակման և ընդհանուր խնդիրների ու գործողությունների հանրային քննարկման միջոցով:

6. Ապահովել հետխորհրդային հայ համայնքների երիտասարդներին հայրենիք այցելելու, այդ այցերը հաճախակիացնելու հնարավորություն ընձեռող ծրագրերի շարունակականությունը:

7. Հնարավորինս աջակցել խոստումնալից հայ երիտասարդներին՝ բնակության երկրում իրենց կրթական և աշխատանքային առաջխաղացման մեջ (օր.՝ կրթաթոշակներ տրամադրել)՝ միաժամանակ խրախուսելով նրանց մեջ համայնքային առաջնորդի հատկանիշների ձևավորումը:

---

8. Հասարակական, մշակութային, կրթական, տնտեսական ոլորտներում ներգրավված հայերի (հասկապես երիտասարդների) սփյուռքյան և հայաստանյան կողմերի միջև հորիզոնական կապերի և համագործակցության ձևավորման ու զարգացման նպատակով աջակցության և խրախուսման ծրագրեր մշակել:

9. Հաշվի առնելով կիրակնօրյա դպրոցների հետզհետե նվազող ազդեցությունը որպես հայապահպանման ռեսուրս՝ համայնքային դպրոցներին ոչ միայն տրամադրել ուսումնական նյութեր, այլև համալրել նոր մոտեցումներով (օր.՝ հայերենի ուսուցման հեռուստատեսային և *on-line* ծրագրեր մշակել, աջակցել սփյուռքի և հայաստանյան դպրոցների միջև գործընկերային հարաբերությունների հաստատմանը, կազմակերպել փոխանակման ծրագրեր և *on-line* բաց դասեր հայաստանյան դպրոցների հետ, կազմակերպել հայերենին, հայոց պատմությանն ու հայկական մշակույթին վերաբերող օլիմպիադաներ և այլ մրցույթներ):

10. Կարևորել հայ համայնքների ոչ միայն հայերենի և հայոց պատմության, այլև հայկական երգի և պարի ուսուցիչների վերապատրաստումը և մշակել ծրագրեր այս ուղղությամբ:

11. Հաշվի առնելով, որ հետխորհրդային տարածքի հայ համայնքներում առավել ակտիվ է մնում ՌԴ հայությունը, հիմնվել այս համայնքների ակտիվության վրա՝ որպես այլ հետխորհրդային երկրների հետ կոնսուլիդացման լուկոմոտիվի:

12. Հայաստանի տեղեկատվական դաշտը պետք է ավելի շատ նպաստի հետխորհրդային երկրների հայ համայնքների լսելիությանը: Էական է, որ հետխորհրդային երկրների համայնքները ևս՝ որպես Հայության կարևոր մաս, իրենց խնդիրներով ու տեսլականներով բավարար արտացոլվեն ՀՀ տեղեկատվական դաշտում: Հայաստանյան կողմից նման խթանումը կնպաստի նաև տեղի հայության շրջանում համայնքային տեղեկատվության հանդեպ հետաքրքրության ակտիվացմանը, դրանով իսկ՝ համայնքային կառույցների հետ կապերի սերտացմանը:

13. Աջակցել հետխորհրդային հայկական ՁԼՄ-ին տարանջատվածության հաղթահարման, տեղեկատվության փոխանակման, համագգային նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ համաձայնեցված տեղեկատվության տարածմանն ուղղված ջանքերը միավորելու գործին:

14. Աջակցել հետխորհրդային տեղեկատվական ռեսուրսների օգտագործման կազմակերպմանը ՀՀ-ի, ԼՂՀ-ի և Սփյուռքի շահերի տեղեկատվական լոբբինգի նպատակներով:

---

**3. ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ.  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

***ՏԵՂԵԿԱՏՈՒ***

Այս բաժնում ներկայացված են հետխորհրդային տասներեք երկրներում հայկական համայնքների կազմավորման պատմությունը, տվյալներ ներկայումս բնակվող հայերի թվաքանակի և առկա հայկական կառույցների, ՁԼՄ գործունեության մասին: Յուրաքանչյուր երկրի հայության մասին տվյալները ներկայացված են առանձին բաժիններով՝ ըստ երկրների անվանումների այբբենական կարգի: Ամեն երկրի համար աղյուսակներով ներկայացված են նաև հայկական կառույցների և ՁԼՄ կոնտակտային տվյալները, եթե այդպիսիք հասանելի են դարձել ինտերնետային կայքերի և «դեղին» էջերի մոնիթորինգի, ինչպես նաև փորձագիտական հարցումների միջոցներով: Հետխորհրդային երկրներում հայ բնակչության թվաքանակի մասին տարբեր աղբյուրների տրամադրած տվյալները ներկայացված են գրքի *Հավելվածի* Ա և Բ աղյուսակներում: *Հավելվածում* ներկայացված են նաև հայկական մշակութային-ժամանցային կայքերի և Ռուսաստանի հայերի միության մասնաճյուղերի վերաբերյալ աղյուսակներ:

### **3.1 ԲԵԼԱՌՈՒՄ**

Բելառուսի 1989-1999թթ. պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ երկրում ապրում էր 10 հազարից ավելի հայ: 2003թ. ոչ պաշտոնական տվյալներով՝ նրանց թիվը շուրջ 30 հազար է, որը կազմում է ընդհանուր բնակչության 0.3%-ը: Այդպիսով, հայերը Բելառուսի ազգաբնակչության մեջ գրավում են 6-րդ տեղը: Հայերը հիմնականում հաստատվել են մայրաքաղաք Մինսկում, Բորբույսկ, Բրեստ և Մոգիլյով քաղաքներում:

#### ***Պատմական ակնարկ***

Հայ-բելառուսական առնչությունները սկզբնավորվել են Ռուսական կայսրության շրջանակներում: Տնտեսական և մշակութային կապերը հաստատվել ու զարգացել են խորհրդային իշխանության տարիներին: Երկրի տնտեսական կայունության և նպաստավոր պայմանների շնորհիվ հետխորհրդային շրջանում տեղի հայ բնակչությունն է՛լ ավելի է ստվարացել: Ներկայումս հայերը հաջողությամբ ներգրավված են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Բելառուսում ապրում և գործում են հայտնի հայ մտավորականներ, գեղանկարիչներ, մշակութային գործիչներ և գործարարներ:

#### ***Հայկական կառույցները***

Բելառուսի առաջին հայ համայնքը պաշտոնապես գրանցվել է Մինսկում 1990թ.՝ «Հայաստան» հայկական մշակութային-լուսավորչական ընկերություն» անունով: Կազմակերպության

---

առաջին ղեկավարն էր նկարիչ Լևոն Դարբինյանը, իսկ ներկայումս այն գլխավորում է Գեորգի Եղիազարյանը: «Հայաստան» ընկերությունն անդամակցում է Բելառուսի կրոնի և ազգությունների կոմիտեին: Համայնքի նախագահ Գեորգի Եղիազարյանը Բելառուսի Սշակույթի նախարարությանը կից գործող Ազգային-մշակութային միությունների խորհրդի նախագահն էր 2000-2006թթ., իսկ 2006-ից Բելառուսի կրոնի և ազգությունների հանձնաժողովի «Խորհրդատվական միության» ղեկավարն է:

1998թ. «Հայաստան» ընկերությանը կից հիմնվել է «Էրեբունի» երգի-պարի ազգագրական համույթը (ղեկավար՝ Ռուզաննա Ավանեսյան), որը հաջողությամբ հանդես է գալիս ազգային մշակույթների համաբելառուսական, համահայկական ու միջազգային տարբեր փառատոներին:

«Հայաստան» ընկերությունը համագործակցում է Ռուսաստանի, Էստոնիայի և հետխորհրդային այլ երկրների հայկական կառույցների հետ, հատկապես երիտասարդ անդամների մակարդակով: Երկու տարի է, ինչ Մինսկի երիտասարդները կազմակերպում են «Միասին» մշակութային-սպորտային փառատոնը հետխորհրդային երկրների հայ երիտասարդների համար: Այս և շատ այլ նախաձեռնություններին աջակցում է Հայ բիզնեսմենների ակումբը Բելառուսում: «Հայաստան» ընկերությունը նաև Համաշխարհային հայկական կոնգրեսի (կենտրոնը՝ Մոսկվա) հիմնադիրներից է: Կառույցը թեև ներկայացնում է Մինսկի հայ համայնքը, նաև որոշակիորեն հանրապետական գործունեություն է ծավալում, համագործակցում է երկրի մյուս համայնքային կազմակերպությունների հետ, հանդես է գալիս համատեղ ձեռնարկներով: Վերջերս նշվել է «Հայաստան»

հայկական մշակութային-լուսավորչական ընկերության» 20-ամյակը, ինչի առիթով 2010թ. մարտին լույս է տեսել հատուկ հանդես:

1991-ից Մինսկում գործում է հայերենի, հայոց պատմության և երգուպարի կիրակնօրյա դպրոց, 1995-ից այն համակարգված գործունեություն է ծավալում: Դպրոցում գործում է «Շավիղ» երգի համույթը (գեղ. ղեկավար՝ Գայանե Աղաջանյան):

Բելառուսում գործում է նաև պաշտոնապես 2002թ. գրանցված «Մբ. Գրիգոր Լուսավորիչ» Հայ առաքելական կրոնական համայնքը, որը «Միասին» հայկական ռուսալեզու ամսաթերթի հիմնադիրն է: Այս կառույցը վերջին տարիներին ակտիվ ջանքեր է գործադրում Մինսկում հայկական եկեղեցու կառուցման ուղղությամբ, որը կրելու է Մբ. Գրիգոր Լուսավորչի անունը: Ներկայում եկեղեցու նախագծման աշխատանքներն ավարտված են, շինության ապագա տեղը հաստատված է իշխանությունների կողմից, շարունակվում են դրամահավաքի միջոցառումները: Համայնքն ակնկալում է եկեղեցու կառուցման թույլտվության արտոնագիրն ստանալ մինչև 2010թ. տարեվերջ:

Հայկական համայնքային կառույցներ են գործում նաև Բոբրույսկ, Գրոդնո, Մոգիլյով քաղաքներում, որոնք ևս աչքի են ընկնում մշակութային և հասարակական նախաձեռնություններով (Բելառուսի հայկական կառույցների մասին տե՛ս *Աղյուսակ 3.1.1*):

---

## **Հայկական լրատվամիջոցները**

Բելառուսում գործող հայկական պարբերականը «Մբ. Գրիգոր Լուսավորիչ» Հայ առաքելական կրոնական համայնքի հիմնադրած «Միասին» ռուսալեզու ամսաթերթն է: Այն համաբելառուսական նշանակություն ունի և երկրում տարածվում է անվճար: 2009-ից գործում է նաև կայքէջը՝ *miasin.by* հասցեով:

Բելառուսի հայ համայնքի կյանքը, Բելառուս-Հայաստան պաշտոնական և ոչ պաշտոնական իրադարձությունները, ինչպես նաև համահայկական նշանակության նորություններն արտացոլվում են *diaspora.by* կայքում (Բելառուսի հայկական լրատվամիջոցների մասին տե՛ս *Աղյուսակ 3.1.2*):

2010թ. մարտին Մինսկում հրատարակվել է հատուկ հանդես «Հայաստան» հայկական մշակութային-լուսավորչական ընկերության» 20-ամյակի առիթով:

*Բնառույի հայկական կառույցները*

*Աղյուսակ 3.1.1*

Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
1. Մյնսկ	«Հայաստան» հայկական մշակութային-լուսավորչական վիուլթորն <i>armeniansk.iarp.by</i>	Նախագահ՝ Գեորգի Եղիազարյան	<b>Հասցե՝</b> ք. Մյնսկ, Կ.Սարգսի փող. 33 <b>Հեռ.</b> ՝ (+375) 296600199, (+375) 172602829 <b>Էլ. փոստ</b> ega2001@rur.by (Գեորգի Եղիազարյան)	Հիմնադրման տարեթիվը՝ 1990թ.
2. Մյնսկ	Մբ. Գրիգոր Լուսավորիչ կրոնական համայնք	Նախագահ՝ Անդրոնիկ Համբարձումյան	<b>Հասցե՝</b> ք. Մյնսկ, Կ.Սարգսի փող. 33/16 <b>Հեռ.</b> ՝ (+375) 291151502	Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր համայնք: Ջրարկում Է Մյնսկում Հայ Առաքելական Եկեղեցի կառուցվելու հարցերով
3. Մյնսկ	Բեկառուսի հայ Էրիտասասորդների վիուլթորն	Նախագահ՝ Արամ Օսիպյան	<b>Էլ. փոստ՝</b> aram119@rur.by	
4. Մյնսկ	«Մուսավեռ» շրջանային ՀԿ	Նախագահ՝ Ալեքսան Ալեքսանյան	<b>Հասցե՝</b> ք. Մյնսկ, Բարսեղյանի փող. 76-184 <b>Հեռ.</b> ՝ (+375) 296267386 (+375) 291151502	

	Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
5.	Մոզիլյով	«Մասիս» մարզային ՀԿ	Նախագահ՝ Արմեն Խաչատրյան	<b>Հասցե՝</b> ք. Մոզիլյով, Կոմիտասի հատի նրբ., 5ա <b>Հեռ.</b> , (+ 375) 222259132, (+375) 296524571 Արմեն Խաչատրյան <b>Էլ. փոստ՝</b> mmsl@tut.by	Մոզիլյովի մարզային ՀԿ-ն կազմակերպում է համերգներ, ցուցահանդեսներ և այլ սիջոցառումներ
6.	Բոբրույսկ	«Ուրարտու» հայկական կազմակերպություն	Նախագահ՝ Լյովա Ադաջանյան	<b>Հասցե՝</b> ք. Բոբրույսկ, Ռեպինի փող. 25 <b>Հեռ.</b> , (+ 375) 22538325	
7.	Բոբրույսկ	«Մասիս» հայկական բարեգործական միության Բոբրույսկի մասնաճյուղ	Նախագահ՝ Արշակ Թանդիլյան		Հիմնադրման տարեթիվը՝ 1999թ.

*Բեղառուսի եայկական լրատվամիջոցները*

*Աղյուսակ 3.1.2*

	<b>Քաղաքը</b>	<b>Անվանումը (կայքը)</b>	<b>Գեղակար անձնակազմը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>				<b>Հասցե՝ ք. Միևսկ Կալինինի փող. 9, 1 հարկ, 8 գրասենյակ</b>	<b>Նկ տեղեկություններ</b>
<b>1.</b>	Միևսկ	«Միսսին» թերթ <i>miasin.by</i>	Խզբազմության տնօրեն՝ Սարգիս Էլչակյան Գլխ. խմբագիր՝ Սվետլանա Ղուկանց	<b>Հասցե՝</b> ք. Միևսկ Կալինինի փող. 9, 1 հարկ, 8 գրասենյակ <b>Հեռ.</b> (+375) 447534723 <b>Էլ. փոստ՝</b> miasin@tut. by, elchakyan_saa@mail.ru				<b>Էլ. փոստ՝</b> diaspora@tut. by	«Միսսին» թերթի հիմնադիրն է Բեղառուսի Սք. Գրիգոր Լուսավորիչ կրոնական համայնքը
<b>2.</b>	Միևսկ	Բեղառուսի հայերի պորտալ <i>diaspora.by</i>	Միևսկյի Գրիգորյան	Կայքում կարելի է տեղեկություններ գտնել Բեղառուսում գործող համայնքային մշակութային կազմակերպությունների, հայկական դպրոցի մասին և այլն					

---

### 3.2 ԷՍՏՈՆԻԱ

Էստոնիայում 2000թ. մարդահամարի պաշտոնական տվյալներով՝ հայերի թիվը կազմել է 1.440<sup>1</sup>: Այսօր, ըստ տարբեր հայկական աղբյուրների, Էստոնիայում հայերի թիվը կազմում է մոտ 2000<sup>2</sup>: Հայերն այստեղ հիմնականում բնակվում են երկրի մայրաքաղաք Տալլինում, նաև Տարտուում, Պյառնուում, Կոհտլա-Յարվեում:

#### *Պատմական ակնարկ*

Էստոնիայում հայերը բնակություն են հաստատել 19-րդ դարում: Առաջին հայ բնակիչների շարքում են եղել Դորպատի համալսարանի մոտ 200 ուսանողները, նրանց թվում՝ Խաչատուր Աբովյանը, Ռաֆայել Պատկանյանը և այլք:

Երկրորդ աշխարհամարտից հետո այստեղ մշտական բնակություն են հաստատել Էստոնիայում գերմանական գերության մեջ հայտնված, ինչպես նաև խորհրդային բանակից գորացրված հայեր: Խորհրդային իշխանության ժամանակաշրջանում այստեղ են հաստատվել Ռուսաստանից և ԽՍՀՄ այլ երկրներից Էստոնիա գործուղված հայ մասնագետներ:

---

<sup>1</sup> [http://pub.stat.ee/pxweb.2001/Dialog/varval.asp?ma=PC225&ti=POPULATION+BY+ETHNIC+NATIONALITY%2C+MOTHER+TONGUE+AND+CITIZENSHIP&path=../I\\_Databas/Population\\_census/08Ethnic\\_nationality.\\_Mother\\_tongue.\\_Command\\_of\\_foreign\\_languages/&clang=1](http://pub.stat.ee/pxweb.2001/Dialog/varval.asp?ma=PC225&ti=POPULATION+BY+ETHNIC+NATIONALITY%2C+MOTHER+TONGUE+AND+CITIZENSHIP&path=../I_Databas/Population_census/08Ethnic_nationality._Mother_tongue._Command_of_foreign_languages/&clang=1)

<sup>2</sup> Միքայել Մալխասյան, «Հայերն աշխարհում», Երևան, 2007թ., «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003 (գլխ. խմբ. Հ.Այվազյան):

Հայ համայնքային և ազգային կյանքն Էստոնիայում ձևավորվել է 1980-ականների վերջին, երբ գրանցվել են առաջին հայկական մշակութային ընկերությունները, ազգային միավորումները<sup>1</sup>: 1990-ականների սկզբին այս կառույցների նախաձեռնությամբ պարբերաբար կազմակերպվել են հայկական մշակույթն ու արվեստը ներկայացնող համերգներ ու ցուցահանդեսներ: Էստոնահայերի շարքում մեծ թիվ են կազմում մտավորականները, բժիշկները, ճարտարագետները, առևտրային ընկերությունների ղեկավարները, արվեստի ու գիտության ոլորտի մասնագետները: Համայնքում հայտնի հայ անունների շարքում կան քանդակագործներ, գեղանկարիչներ, երաժիշտներ:

2010թ. փետրվարի 4-ին տեղի ունեցավ 55 էջից բաղկացած «Հայերը» գրքի (հեղինակներ՝ Արմենուհի Ղազարյան և Իթա Սերման) շնորհանդեսը, որն Ինտեգրման և միգրացիայի հիմնադրամի կողմից հրատարակվող «Էստոնիայի ազգություններ» շարքի վեցերորդ գիրքն է: Գիրքը պատմում է Հայաստանի բնության, հայ գրականության, մշակույթի, երաժշտության, սովորույթների, այբուբենի մասին<sup>2</sup>:

### ***Հայկական կառույցները***

Էստոնիայում հայերը ներկայացված են երկու խոշոր համայնքային կառույցով՝ Տալլինում և Տարտուում, որոնք հիմնադրվել և գրանցվել են 1987-88թթ.:

---

<sup>1</sup> <http://noev-kovcheg.1gb.ru/article.asp?n=96&a=41>

<sup>2</sup> [http://www.meis.ee/rus-uudised?news\\_id=400](http://www.meis.ee/rus-uudised?news_id=400)

---

«Տալլինի հայկական մշակութային ընկերությունը» 1988թ. հիմնադրվել և 15 տարի ղեկավարվել է Տալլինի մանկավարժական ինստիտուտի դոցենտ Արտյոմ Դավիդյանցի կողմից՝ հայոց լեզվի խմբակի հիման վրա: Հետագայում՝ 1989 թվականից հայոց լեզվի խմբակը սկսել է գործել իբրև կիրականօրյա դպրոց: Այժմ միավորման նախագահն է Ռազմիկ Իվանյանը<sup>1</sup>:

Տարտուում գործում է «Հարավային Էստոնիայի հայկական ազգային միությունը», որի նախագահն է Ռաֆիկ Գրիգորյանը<sup>2</sup>: Այս քաղաքում գործում է նաև «Մաշտոց» կիրականօրյա հայկական դպրոցը, որտեղ կազմակերպվում են ոչ միայն հայերենի, այլև հայկական ժողովրդական պարերի պարապմունքները<sup>3</sup>:

Էստոնիայում գործող հայկական կազմակերպությունների գործունեությունը համակարգելու նպատակով 1998թ. ստեղծվել է «Էստոնիայի հայ ազգային միությունը», որը հիմնադրել և մինչև 2008թ. ղեկավարել է Գարիկ Իկնոյանը (1999-2005թթ. Էստոնիայում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս): 2008թ. ի վեր միության նախագահն է Արտյոմ Դավիդյանցը: Միությունն ակտիվորեն մասնակցում է հայկական մշակույթի տարածմանը նպաստող, Էստոնիայի և Հայաստանի տոներին ու հիշատակի օրերին նվիրված միջոցառումների, միջկառավարական, պաշտոնական և ոչ

---

<sup>1</sup> «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003 (գլխ. խմբ.՝ Հ.Այվազյան), <http://rus.postimees.ee/260207/glavnaja/estonia/12550.php?&Y=2007&M=3>, [http://www.rvke.ee/index.php?option=com\\_content&view=category&id=278%3A2008-11-15-21-44-21&Itemid=9&lang=ru](http://www.rvke.ee/index.php?option=com_content&view=category&id=278%3A2008-11-15-21-44-21&Itemid=9&lang=ru)

<sup>2</sup> [http://www.rvke.ee/index.php?option=com\\_content&view=category&id=78%3A2008-07-11-12-41-28&Itemid=9&lang=ru](http://www.rvke.ee/index.php?option=com_content&view=category&id=78%3A2008-07-11-12-41-28&Itemid=9&lang=ru)

<sup>3</sup> <http://www.armenia.ee/>

պաշտոնական հանդիպումների, այցերի կազմակերպմանը, աջակցում է հայ գործընկերների հետ համագործակցող էստոնական կազմակերպությունների գործունեությանը<sup>1</sup>:

Տալլինում 2003թ. հիմնադրվել և մինչ օրս գործում է «Արարատ» հայկական մշակութային հասարակական կազմակերպությունը, որի նախագահն է Գրիգոր Հայրապետյանը: Կազմակերպության ջանքերով էստոնիայում հիմնադրվել և գործում է ֆուտբոլային և շախմատային մի քանի ակումբ, դրանց թվում՝ էստոնիայի ֆուտբոլի առաջնություններին մասնակցող «Արարատ» և «Ախթամար» ֆուտբոլային ակումբները, մանկական շախմատային «Արարատ» ակումբը, ինչպես նաև Տիգրան Պետրոսյանի անվան շախմատային ակադեմիան (հիմնադրվել է 2001թ.), որը համարվում է առաջատարներից մեկն էստոնիայում: Վերջերս «Արարատ» մշակութային միության ջանքերով հայկական կիրակնօրյա դպրոց է բացվել:

Էստոնիայում գործող հայկական ակտիվ կազմակերպությունների շարքում է Հայ երիտասարդների միությունը՝ Ավետիս Հարությունյանի նախագահությամբ: Միության նպատակն է էստոնահայերի ազգային ինքնության պահպանումը, մշակութային և հիշատակի միջոցառումների կազմակերպումը:

Հայկական մշակութային կառույցների շարքում են «Կիլիկիա» հայկական մշակութային ընկերությունը՝ Գայանե Մկրտչյանի նախագահությամբ, էստոնիայի հայկական մշակութային

---

<sup>1</sup> [http://www.rvke.ee/index.php?option=com\\_content&view=category&id=278%3A2008-11-15-21-44-21&Itemid=9&lang=ru](http://www.rvke.ee/index.php?option=com_content&view=category&id=278%3A2008-11-15-21-44-21&Itemid=9&lang=ru)

---

ընկերությունը՝ Արմեն Անդրանիկյանի նախագահությամբ, մշակույթի և սպորտի հայկական «Նաիրի» միությունը, ինչպես նաև ուրախների և հնարամիտների հայկական «Արմանի» ակումբը, էթնիկ երաժշտության «Ատլաս» անսամբլը և այլ կազմակերպություններ ու ակումբներ<sup>1</sup>:

2010թ. մայիսին Տալլինում հիմնադրվել է «Երևան» մշակութային միությունը, որի նախագահն է Գրիգոր Հայրապետյանը (Էստոնիայի հայկական կառույցների մասին տե՛ս *Աղյուսակ 3.2.1*):

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Էստոնիայի կրոնական համայնքը պաշտոնապես գրանցվել է 1993թ. Տալլինում և նույն թվականին անդամակցել է Էստոնիայի եկեղեցիների խորհրդին: 1994թ. Էստոնիայի Ավետարանական եկեղեցու խորհուրդը հայ համայնքին 99 տարով անհատույց օգտագործման է հանձնել Ս.Իանի անկելանոցի շենքը, որն այսօր վերակառուցումից հետո գործում է որպես հայկական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Եկեղեցու հոգևոր հովիվն է Տեր Խոսրովը:

Էստոնիայի հայերը փորձում են ներկայություն ապահովել նաև քաղաքական դաշտում: Այսպես, «Արարատ» մշակութային և «Երևան» մշակութային միությունների նախագահ Գրիգոր Հայրապետյանի ղեկավարությամբ Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում ստեղծել է աշխատանքային խումբ, որն իր առջև նպատակ է դրել հիմնել Էստոնիայի հայկական կուսակցությունը:

---

<sup>1</sup> [http://www.rvke.ee/index.php?option=com\\_content&view=category&id=78%3A2008-07-11-12-41-28&Itemid=9&lang=ru](http://www.rvke.ee/index.php?option=com_content&view=category&id=78%3A2008-07-11-12-41-28&Itemid=9&lang=ru), <http://tallinn-ararat.ucoz.ru>, [http://armenianyouth.ee/index\\_rus.html](http://armenianyouth.ee/index_rus.html)

Էստոնական օրենքի համաձայն՝ նոր կուսակցություն ձևավորելու համար անհրաժեշտ է ունենալ նվազագույնը 1000 անդամ: Ուստի, աշխատանքային խումբը կոչով դիմել է հայ համայնքի (ինչպես նաև այլազգի) ներկայացուցիչներին՝ համալրել կուսակցության շարքերը և մասնակցել Էստոնիայի հասարակական և քաղաքական կյանքին<sup>1</sup>:

### **Հայկական լրատվամիջոցները**

Էստոնիայում էլեկտրոնային տարբերակով (*esthaylraber.ucoz.ru* հասցեում) գործում է «Էստոնիայի հայկական լրաբեր» լրատվական թերթը, որի խմբագիրն է «Արարատ» կազմակերպության նախագահ Գրիգոր Հայրապետյանը: Հիմնադրվել է 2009թ. հոկտեմբերին, լույս է տեսնում հայերեն: Թերթն արձագանքում է ինչպես Էստոնիայի հայ համայնքի և ներհայաստանյան իրադարձություններին, այնպես էլ Հայաստանի արտաքին քաղաքական հարցերին, Ցեղասպանության, ԼՂՀ, հայկական Սփյուռքի և այլ խնդիրներին՝ հղումներ անելով հայկական տեղեկատվական զանազան աղբյուրներին: Թերթն այսօր նյութական աջակցություն է փնտրում տպագիր տարբերակի հրատարակման համար, ինչպես նաև բաց է համագործակցության համար՝ թերթին տրամադրվող հոդվածների, նորությունների, հայտարարությունների և այլ նյութերի տպագրման առումով:

«Արարատ» հայկական մշակութային հասարակական կազմակերպության տեղեկատվական կայքն է *tallinn-*

---

<sup>1</sup> [miasin.ru/news/com/page41.html](http://miasin.ru/news/com/page41.html)

---

*ararat.ucoz.ru*: Բացի համայնքային կյանքի լուսաբանումից, կայքը ներառում է նաև հղումներ հայկական տեղեկատվական կամ ժամանցային աղբյուրներին:

Էստոնիայում գործող հայկական տեղեկատվական հիմնական աղբյուրներից էր *armenia.ee* էլեկտրոնային պորտալը, որն ուներ լայն թեմատիկ ընդգրկում, հիմնականում ներկայացնում էր հայկական մշակույթը, կրոնը և պատմությունը, ինչպես նաև համայնքի մշակութային և սպորտային կյանքը, ինչպես նաև ուներ Հայաստանի վերաբերյալ նորություններին հղող բաժիններ: Պորտալն այլևս չի գործում:

*armenianyouth.ee* հասցեով գործում է Էստոնիայի հայ երիտասարդների միության (ԷՀԵՄ) տեղեկատվական կայքը, պարունակում է ընդհանուր կոնտակտային տեղեկություն միության մասին, վերջին շրջանում չի թարմացվել (Էստոնիայի հայկական լրատվամիջոցների մասին տե՛ս *Սոցիոլոգիա 3.2.2*):

Էստոնիայի «*Радио 4*» ռադիոկայանի եթերում գործում է «Ծիծեռնակ» հայկական ռադիոհաղորդումը, որը եթեր է դուրս գալիս ամեն հինգշաբթի՝ Յուրի Վարդանյանի ղեկավարությամբ: Հաղորդման շրջանակներում ներկայացվում են նորություններ Հայաստանի մասին, հարցազրույցներ հայ քաղաքական, արվեստի և մշակույթի գործիչների հետ: Արդեն ավանդական է դարձել Տալինի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գործունեության մասին տեղեկությունների հաղորդումը: Ռադիոհաղորդման ընթացքում հնչում է դասական և հայկական ժողովրդական երաժշտություն<sup>1</sup>:

---

<sup>1</sup> <http://r4.err.ee/rusaated?saade=123&d=2010-08-29>

**Էստոնիայի հայկական կառույցները**

**Աղյուսակ 3.2.1**

	Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը (կայքը)	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
1.	Տալլին	Էստոնիայի հայ ազգային միություն	Նախագահ՝ Արտյոմ Դավիդյանց	<p><b>Հասցե՝</b> p. Տալլին, 101117, Նարվայի փող, 6-28</p> <p><b>Հեռ./ֆաքս՝</b> (+372) 6463080, (+372) 6311617</p> <p><b>Էլ. փոստ՝</b> teacher@panglass.ee</p>	Հիմնադրվել է 1998թ.
2.	Տալլին	Տալլինի հայկական մշակութային ընկերություն	Նախագահ՝ Ռազվիկ Իվանյան	<p><b>Հասցե՝</b> p. Տալլին, 10146, Կունինգա փող, 4.</p> <p><b>Հեռ.</b> (+372) 5188966</p> <p><b>Էլ. փոստ՝</b> talarnrs@gmail.com</p>	Սկզբնապես՝ Տալլինի և Էստոնիայի հայերի միավորում, 1997թ.՝ Տալլինի մշակութային ընկերություն։ Միությունը պաշտոնապես գրանցվել է 1988թ.
3.	Տալլին	Մշակույթի և սպորտի հայկական «Նավիթ» միություն	Նախագահ՝ Ռուբրոֆ Արզարուսյան	<p><b>Հասցե՝</b> p. Տալլին, 10146 Կունինգաի փող, 4</p> <p><b>Հեռ.</b> (+372) 6030465, (+372) 56734092, (+372) 5104587</p> <p><b>Էլ. փոստ՝</b> nairi@hbc.com</p>	
4.	Տալլին	Էստոնա-հայկական «Արարատ» մշակութային միություն <i>tallinn-ararat.ucoz.ru</i>	Նախագահ՝ Գրիգոր Հարսապետյան	<p><b>Հասցե՝</b> p. Տալլին, 131914, Լյուսիամեդիս փող, 47-54</p> <p><b>Հեռ.</b> (+372) 53991414</p>	Հիմնադրվել է 2005թ.։ Կազմակերպում է մշակութային, սպորտային միջոցառումներ

	Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը (վայքը)	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
5.	Տալլին	Էստոնիայի հայ երիտասարդների միություն <i>armenianyouth.ee</i>	Նախագահ՝ Սվետլիս Հարությունյան	<b>Հեռ.</b> ՝ (+372) 58188780 (+372) 55690081 <b>Էլ. փոստ</b> ՝ info@armenianyouth.ee	
6.	Տալլին	«Երևան» մշակութային միություն	Նախագահ՝ Գրիգոր Հայրապետյան	<b>Հեռ.</b> ՝ (+372) 53991414 <b>Էլ. փոստ</b> ՝ grigorairepetyan@mail.ru	Հիմնադրվել է 2010թ. սպիսին
7.	Տալլին	Մուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գրասենյակ <i>armkirik.ee</i>	Նախագահ Գառնիկ քահանա Լուսեցյան	<b>Հեռ.</b> ՝ (+372) 6613111, <b>Ֆաքս</b> ՝ (+372) 6009085 <b>Էլ. փոստ</b> ՝ arm.kirik@mail.ee	
8.	Տարսու	Հարավային Էստոնիայի հայերի ազգային միություն	Նախագահ՝ Ռաֆիկ Գրիգորյան	<b>Հասցե</b> ՝ ք. Տարսու, 50708, Մոլսակաի փող. 38-126, <b>Հեռ.</b> ՝ 53420476 <b>Էլ. փոստ</b> ՝ rafik.grigorjan@gmail.com	
9.		«Կլիկիա» հայկական մշակութային միություն	Նախագահ՝ Գայանե Մկրտչյան	<b>Հեռ.</b> ՝ 58030698 <b>Էլ. փոստ</b> ՝ estarmrsklikia@gmail.com	
10.		Էստոնիայի հայկական մշակութային միություն	Նախագահ՝ Արմեն Մնդրանիկյան	<b>Հեռ.</b> ՝ 58090917 <b>Էլ. փոստ</b> ՝ info@aeks.ee	

**Էստոնիայի հայկական լրատվամիջոցները**

**Աղյուսակ 3.2.2**

	<b>Քաղաքը</b>	<b>Անվանումը (կայքը)</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>	<b>Այլ տեղեկություններ</b>
<b>1.</b>	Տալլին	«Էստոնիայի հայկական լրագրեր» թերթ <i>esthayeraber.ucoz.ru</i>	Գլխ. խմբագիր՝ Գրիգոր Հայրապետյան, խմբագիր՝ Ալբերտ Ստեփանյան	<b>Հասցե՝</b> ք. Տալլին, 131914, Լյաանամա՛նդե փող.՝ 47-54 <b>Հեռ.՝</b> (+372) 53991414 <b>Էլ. փոստ՝</b> grigorairapetian@mail.ru	Տալլինի «Արարատ» մշակութային սփյուռքային թերթին Է. Թղթակիցների Ցանու Հայրապետյան, Ավետիք Հայրապետյան, Ալեն Ստեփանյան

---

### 3.3 ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ

2003թ. տվյալներով՝ հայերը Թուրքմենստանում շուրջ 20-22 հազար են, այն դեպքում, երբ 1995թ. մարդահամարի տվյալներով նրանց թիվը 33.6 հազար էր: Հայության արտահոսքը Թուրքմենստանից պայմանավորված է երկրի տնտեսական և հասարակական կյանքի սահմանափակ հնարավորություններով: Ներկայում երկրի հայության հիմնական մասը բնակվում է մայրաքաղաք Աշգաբադում, ինչպես նաև Մարի, Թուրքմենբաշի, Թուրքմենաբադ քաղաքներում<sup>1</sup>:

#### *Պատմական ակնարկ*

Միջին Ասիայում հայերի հայտնվելու մասին պատմական տեղեկություններ կան վաղ ժամանակներից: Սակայն զանգվածաբար հայերն այստեղ բռնագաղթեցվել են 14-րդ դ. Լենկ Թեմուրի կողմից, արտագաղթել՝ 16-րդ դարում, իսկ առավել հայտնի զանգվածային հոսքը դեպի Թուրքեստան<sup>2</sup> սկսվել է 19-րդ դարից, ինչին որոշակիորեն նպաստել է նվաճված տարածքներում հայերի ներգաղթը իրախուսող ռուսաստանյան քաղաքականությունը:

20-րդ դ. վերջին Թուրքմենստանում հայկական բնակչությունն ավելացավ 1988-1990թթ. Ադրբեջանից հայ փախստականների հոսքի պատճառով: Դեպի Թուրքմենստան հայ փախստականների

---

<sup>1</sup> «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003 (զլխ. խմբ.՝ Ն.Սյվազյան):

<sup>2</sup> Միջին Ասիայի տարածքը 19-րդ դ.-20-րդ դարասկզբին կոչվել է Թուրքեստան:

գաղթը պայմանավորված էր արդեն կայացած հայկական սփյուռքի և Բաքվից առավել մատչելի ճանապարհի առկայությամբ<sup>1</sup>: Սակայն Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների մասին լրատվության հրահրմամբ Թուրքմենստանում աշխուժացան ազգայնական տարրերը. 1989-ի գարնանը նրանց կազմակերպած հանրահավաքում հնչեցին հակահայկական կարգախոսներ: Չնայած Թուրքմենստանի կառավարությունը հանդես եկավ ի պաշտպանություն տեղացի հայերի՝ ընդհանուր մթնոլորտը և հայերի վրա հարձակումների դեպքերը շատ փախստականների ու տեղացի հայերի ստիպեցին լքել Թուրքմենստանը՝ ուղևորվելով Հայաստան, Ռուսաստան և Ուկրաինա:

Փախստականներից շատերը, որ այժմ էլ բնակվում են Թուրքմենստանում, դեռևս ունեն քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև սեփական իրավունքներն ապահովելու խնդիրներ: Չափահասության տարիքի հասած երիտասարդները, անձնագիր չունենալու պատճառով, զրկված են կրթության, աշխատանքի և գրանցում ստանալու իրավունքից: Շատերը չեն կարողանում նաև արտագաղթել երկրից, իսկ առավել հաջողակները մեկնում են Ռուսաստան, Հայաստան կամ էլ ՄԱԿ փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի (*UNHCR*) օգնությամբ՝ Կանադա<sup>2</sup>:

Հայտնի է, որ Թուրքմենստանի նախորդ նախագահ Նիյազովի

<sup>1</sup> *Р.Назаров: Этническая политика постсоветского Туркменистана. Ч.3, 30.01.2008, <http://www.ia-centr.ru/expert/323/>*

<sup>2</sup> Նույն տեղում:

---

օրոք կարծիք կար, թե հայերը համակրում են հեղաշրջման փորձի և դավաճանության համար ձերբակալված ընդդիմադիր գործիչ, նախկին արտգործնախարար Բորիս Շիհմուրադովին, քանի որ նրա մայրը հայուհի է: Այս հանգամանքն իր հերթին լրացուցիչ բացասական գործոն էր Թուրքմենստանի հայերի և արտերկրից նրանց հյուրընկալվող հարազատների իրավունքների պաշտպանվածության առումով<sup>1</sup>:

### ***Հայկական կառույցները***

Թուրքմենստանի հայ բնակչությունն ինքնակազմակերպման սակավ հնարավորություններ ունի, քանի որ երկրում հասարակական կազմակերպությունների, առավել ևս՝ ազգային կառույցների գրանցումը և գործունեությունը մեծ խնդիր է: Աշգաբադի հայ համայնքը փորձել է գրանցվել 1992 թվականից, սակայն մշտապես մերժվել է իշխանությունների կողմից: Նրանց չի հաջողվել վերսկսել հայերենի ուսուցման դասընթացները, որոնք ձեռնարկվել էին 1992թ. և գործել ընդամենը մի քանի ամիս: 1996թ. Աշգաբադի հայ համայնքի առաջնորդը ստիպված է եղել արտագաղթել ԱՄՆ<sup>2</sup>: Գրանցման հարցում մշտապես մերժում է ստացել նաև Թուրքմենբաշի քաղաքի (Կրասնովոդսկ) հայ

---

<sup>1</sup> [http://www.eurasianet.org/resource/turkmenistan/hypermail/200401/att-0004/01-Russian\\_Dec19\\_03-Jan9\\_04.doc](http://www.eurasianet.org/resource/turkmenistan/hypermail/200401/att-0004/01-Russian_Dec19_03-Jan9_04.doc)

<sup>2</sup> “Нарушения прав этнических меньшинств”, 1999, <http://www.memo.ru/hr/politpr/turk/ethnic.htm>

համայնքը: Այս համայնքները փորձում են թեկուզ ոչ ֆորմալ միավորումների միջոցով ինքնակազմակերպվել և պահպանել ինքնությունը: Թուրքմենաբաղում (Չարջոու) ևս հայկական բնակչությունը ոչ ֆորմալ միավորում է ձևավորել, որի նպատակն է հայ ընտանիքներին (հատկապես կրթության նպատակով արտերկիր մեկնող երիտասարդներին) դրամական և բարոյական աջակցություն ցուցաբերելը:

2009թ. Մարի քաղաքում Աշոտ Մարտիրոսյանի նախաձեռնությամբ ձևավորվել է ևս մեկ համայնք: Այս համայնքին հաջողվել է նույն տարի սեպտեմբերի 1-ին հայկական դպրոց բացել, որտեղ հայերեն և հայոց պատմություն են սովորում 6-66 տարեկան աշակերտներ, այդ թվում՝ թուրքմեն, դազախ և ադրբեջանցի: Դպրոցում կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, գործում է պարի խումբ: Համայնքը մեկ այլ դպրոց էլ բացել է Մարիից 60 կմ հեռավորությամբ գտնվող փոքրիկ Իոլոտա քաղաքում, որտեղ բավական շատ հայեր կան: Նախատեսվում է մեկ դպրոց էլ բացել Թուրքմենբաշիում: Աշգաբաղում ևս դեսպանատան աջակցությամբ հայկական դպրոց է գործում:

Թուրքմենստանի հայության շրջանում կան կաթոլիկներ և Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ, բայց նրանցից ոչ մեկին չի հաջողվում ազատորեն իրացնել կրոնական իրավունքները: Հայ կաթոլիկներն ընդհանրապես չեն ընդունվում և ստիպված են իրենց ծիսակարգն անցկացնել արտասահմանյան դեսպանատներից մեկում<sup>1</sup>: Իսկ Հայ Առաքելական եկեղեցու պաշտոնական գրանց-

---

<sup>1</sup> <http://kisori.livejournal.com/5473.html>

---

ման խնդիրը, որը դեռևս 1992-ից ջանում էր իրականացնել Աշգաբադի հայ համայնքը, այդպես էլ լուծում չի ստացել: Մինչ-խորհրդային ժամանակներից կանգուն մնացած հայկական եկեղեցիների վերադարձման խնդրանքները նույնպես մերժվել են իշխանությունների կողմից<sup>1</sup>: Ներկայում Թուրքմենստանի Հայ առաքելական համայնքը պաշտոնապես ներառված է Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմում:

### ***Հայկական լրատվամիջոցները***

Թուրքմենստանը, լինելով հետխորհրդային տարածքի առավել փակ հասարակություն ունեցող երկրներից մեկը, հնարավորություն չի ընձեռում սեփական քաղաքացիներին ազատ տեղեկատվական միջոցներ հիմնել: Հետևաբար, Թուրքմենստանում հայկական տեղեկատվական ռեսուրսները բացակայում են:

---

<sup>1</sup> <http://www.memo.ru/hr/politpr/cntrasia/turkm2/part3.htm>

### 3.4 ԼԱՏՎԻԱ

Ըստ Լատվիայի պաշտոնական վիճակագրության՝ հայերի թիվը 2008թ. կազմել է 2.742: Ըստ հայկական տարբեր աղբյուրների՝ այդ թիվը 4500-5000 է<sup>1</sup>: Հայերը հիմնականում բնակվում են մայրաքաղաք Ռիգայում (մոտ 2300), նաև Լիեպայա, Յուրմալա, Ելզավա, Վենտսպիլս, Վալմիերա, Դաուգավպիլս քաղաքներում<sup>2</sup>:

#### *Պատմական ակնարկ*

Առաջին հայ բնակիչները Լատվիայում հաստատվել են 19-րդ դարում՝ Ռուսական կայսրության ներքո, զբաղվել են հիմնականում առևտրով: 19-րդ դարի վերջին այստեղ բնակվել է 65, ըստ 1913թ. տվյալների՝ 121 հայ: Նրանք Լատվիա են եկել Թուրքիայից, Իրանից, Ռուսաստանի Ելիզավետպոլի նահանգից և Կարսի մարզից:

20-րդ դարի սկզբին Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում սովորել է ակտիվ հայ ուսանողների մի խումբ, որը հիմնել է «Սևան» միությունը: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Լատվիայի փոքրամասնությունների կազմը զգալիորեն փոփոխվել է. հայ շատ ուսանողներ, ի թիվս այլ կոմկասցի ուսանողների, վերադարձել են հայրենիք՝ մասնակցելու պատերազմական գործողություններին:

1920-30-ական թթ. Լատվիայում գործել է «Կովկաս» միությունը,

---

<sup>1</sup> Տե՛ս *Մ.Մալխասյան*, «Հայերն աշխարհում», Երևան, 2007, էջ 329:

<sup>2</sup> «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003 (գլխ. խմբ.՝ Հ.Սյվալյան):

---

որն իր կազմում հիմնականում ներառել է հայերի և վրացիների: Մինչ Լատվիայի՝ Խորհրդային Միության կազմում ընդգրկվելը (1940թ.), անկախ Լատվիայում, չնայած փոքրաթիվ լինելուն, հայերը մասնակցել են երկրի քաղաքական և սոցիալական կյանքին: Ամենաակտիվ հայ գործիչներն այդ շրջանում կապեր են ունեցել Փարիզի էմիգրացիոն կենտրոնների հետ<sup>1</sup>: Այդ ընթացքում այստեղ ապրել են նաև հայ քաղաքական վտարանդիներ Խորհրդային Միությունից:

Հայերի թիվը Լատվիայում զգալիորեն ավելացել է հետպատերազմյան տարիներին, երբ պատերազմից վերադարձած բազմաթիվ հայ ծառայողներ, զինվորականներ և սպաներ, բժիշկներ իրենց ընտանիքներով բնակություն են հաստատել այստեղ:

Ներկայիս համայնքի հայերի հիմնական մասը Լատվիա է եկել վերջին 60 տարիներին:

ԽՍՀՄ փլուզումից հետո հայերի թիվը Լատվիայի արևելքում և հարավում համեմատաբար մեծացել, այնուհետև շարունակական ներգաղթն ընդհատվել է սահմանները խստացնելու միջոցառումներով: 90-ականների սկզբին հայերի ստվար խումբ է եկել Լատվիա, հիմնականում՝ 1988-ի փախստականներ Ադրբեջանից և երկրաշարժից տուժածներ, որոնց մի մասն այժմ էլ բնակվում է Լատվիայում:

1991թ. անկախացումից հետո՝ հետխորհրդային ժամանակաշրջանում, էթնիկ փոքրամասնությունների համար պայմանները

---

<sup>1</sup> [http://www.li.lv/index.php?option=com\\_content&task=view&id=102&Itemid=595](http://www.li.lv/index.php?option=com_content&task=view&id=102&Itemid=595)

զգալիորեն փոխվել են. լատիշերենի պարտադիր իմացության պահանջը ոչ լատվիացիներին թույլ չի տալիս պետական պաշտոններ զբաղեցնել: Այնուհանդերձ, Լատվիայում հայերը ներկայացված են տարբեր սոցիալական շերտերում, և դեռևս առկա է կովկասյան մտավորականների շրջանակ: Լատվիայում հատկապես հայտնի են հայ լրագրողները ռուսագիր մամուլում: Լատվիայի հայության շրջանում զգալի թիվ են կազմում նաև ճարտարագետներ, նկարիչներ և երաժիշտներ (ջութակահարների և դաշնակահարների Սարգսյան ընտանիքը, դաշնակահար Ռաֆֆի Խարաջյանը), առողջապահության ոլորտի մասնագետներ (Նատալյա Բադրամյան), ինչպես նաև արդյունաբերական և առևտրային ձեռնարկությունների ղեկավարներ, պետծառայողներ, արհեստավորներ:

Հատկանշական է, որ «Լոռի» հայկական տան հիմքի վրա հայերը Լատվիայում ստեղծել են նարդու ֆեդերացիա, որը Ռիգայում կազմակերպում է նարդու բաց առաջնություն՝ տարբեր ազգերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Լատվիայում գործում է 20 հայկական ռեստորան<sup>1</sup>:

---

<sup>1</sup> <http://www.armenianow.com/?action=viewArticle&AID=1046&CID=1239&lng=arm&IID=1040>

---

## *Հայկական կառույցները*

Լատվիայում հայ համայնքային կառույց ստեղծելու առաջին քայլերը կատարվել են 1988թ., երբ մի խումբ հայ մտավորականների նախաձեռնությամբ տեղի ունեցած Լատվիայի հայության ընդհանուր համագումարում հիմնվել է ազգային մշակութային կառույց՝ «Լատվիա-հայկական ընկերությունը» (ԼՀԸ), առաջին հասարակական կազմակերպությունը, որը համախմբեց Լատվիայում բնակվող հայերին: Ընկերության առաջին նախագահն է եղել գիտության ոլորտում հայտնի Սուրեն Գասպարյանը:

2000 թվականից ընկերությունը գլխավորել է հայտնի երաժշտագետ և երաժիշտ Բաֆֆի Խարաջյանը, որը միաժամանակ Լատվիայի ազգային փոքրամասնությունների մշակութային միությունների ընկերակցության նախագահն է: Ընկերակցությունը համակարգում է Լատվիայում ներկայացված տասնյակից ավելի էթնիկ խմբերի մշակութային միությունները:

ԼՀԸ-ում ծագած տարաձայնությունների արդյունքում հեղինակավոր և գործունյա անդամների մի մասը հեռացել է կազմակերպությունից, որի հետևանքով այն լուծարվել է: 2002թ. Գիտուն Բաղդասարյանի գլխավորությամբ հիմնվել է Ռիգայի հայկական համայնքային կառույցը<sup>1</sup>, որն այժմ ղեկավարում է խորհուրդը՝ Ալեքսանդր Գերոնյանի գլխավորությամբ: Կառույցին կից գործում

---

<sup>1</sup> <http://aniv.ru/view.php?numer=9&st=2&rub=11>, <http://noev-kovcheg.1gb.ru/article.asp?n=70&a=18>

է Լատվիայի երիտասարդների միության խորհուրդը:

Ռիգայի հայկական համայնքային կառույցը ծավալում է բազմակողմանի գործունեություն՝ մասնակցում է կոնֆերանսների, հրատարակում թերթ, գրքեր, կազմակերպում Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված մշակութային միջոցառումներ և քաղաքական ակցիաներ: Կառույցը կապեր է պահպանում Լատվիայի խորհրդարանում ստեղծված Հայաստանի աջակցության խմբի անդամների հետ և ակտիվ գործունեություն իրականացնում Լատվիայի Սեյմի կողմից Ցեղասպանության ճանաչմանն ուղղված:

ԼՀՀ ջանքերով 1989թ. բացվել և այժմ Ռիգայի հայկական համայնքի աջակցությամբ գործում է կիրակնօրյա հայկական դպրոց Ռիգայի կենտրոնում՝ թիվ 1 գիմնազիայի շենքում: Դպրոցում, բացի հայերենից, դասավանդվում են հայոց պատմություն և մշակույթ: Դպրոցի սաները մասնակցում են Լատվիայի ազգային փոքրամասնությունների միջև անցկացվող աշակերտական տարբեր մրցույթների<sup>2</sup>:

Համայնքը Լատվիայի ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների «Համագործակցություն» միության անդամ է և պետությունից ֆինանսավորում է ստանում: 2008թ. դրությամբ Ռիգայի հայկական համայնքի նախագահն է հայտնի լրագրող, Լատվիայի լրագրողների միության և գրողների, հրապարակախոսների, միջազգային ասոցիացիայի անդամ,

---

<sup>1</sup> <http://www.vem.am/ru/topics/news/856>

<sup>2</sup> <http://www.armenianow.com/?action=viewArticle&IID=1040&CID=1239&AID=1046&lng=eng>

---

Լատվիայում լույս տեսնող «Արարատ» և «Մեր սերունդը» թերթերի խմբագիր Ալեքսանդր Գերոնյանը<sup>1</sup>:

1993թ. հուլիսին հիմնադրվել է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Ռիզայի համայնքը (տե՛ս *Աղյուսակ 3.4.1*)՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի կազմում: 1997-ին սկսվել և 2002-ին ավարտվել է Ռիզայի կենտրոնում՝ քաղաքապետարանի կողմից համայնքին հատկացված հատվածում (Կոյուսալասի 6 հասցեում) Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությունը: Վերջինս Բալթյան պետություններում կառուցված առաջին հայկական եկեղեցին է: Եկեղեցու և եկեղեցական համայնքի կայացման գործում մեծ ավանդ է ունեցել Տեր Մարկոսը, որին այժմ փոխարինել է Տեր Խոսրովը: Վերջինս իրավամբ դարձավ Բալթյան երկրների հայերի հոգևոր առաջնորդը, նա պատարագ է մատուցում ինչպես Ռիզայում, այնպես էլ Տալլինում և Վիլնյուսում:

### ***Հայկական լրատվամիջոցները***

Լատվիայում լույս է տեսնում հայկական «Արարատ» թերթը: Այն հիմնադրվել է 1991թ., 20 հազար տպաքանակով, միառժամանակ գործել է, սակայն ֆինանսական խնդիրների պատճառով թերթի հրատարակումը դադարեցվել է 11 տարով և նորից վերսկսվել 2002թ.՝ Ռիզայի հայկական համայնքի հիմնադրումից հետո: Թերթը լույս է տեսնում 2500 տպաքանակով (2007թ.

---

<sup>1</sup> [http://www.golos.am/index.php?option=com\\_content&task=view&id=34153&Itemid=53](http://www.golos.am/index.php?option=com_content&task=view&id=34153&Itemid=53)

դրությամբ): Ներկայացնում է համայնքի կյանքը, հայտնի հայերին, հայաստանյան և արցախյան լուրեր և թեմաներ և այլն: 2002թ. սեպտեմբերից «Արարատի» խմբագիրն է Ալեքսանդր Գերոնյանը:

«Արարատ» թերթը հրատարակվում է բարերարների տրամադրած միջոցներով: Այն տարածվում է անվճար, հարևան երկրներում՝ Էստոնիայում և Լիտվայում, Լատվիայի հայկական եկեղեցում, Ռիգայի Մամուլի տանը, ինչպես նաև հայկական ռեստորաններում: Թերթն ուղարկվում է նաև Սանկտ Պետերբուրգ և Մինսկ: Ոչ կոմերցիոն հիմունքներով Լատվիայի հայերի շրջանում տարածվում են նաև Ալ.Գերոնյանի հեղինակած՝ հայության թեմաներով գրքերը (դրանց թվում՝ «Հանգրվան տապանի համար», «Հայաստանի համառոտ պատկերագարդ պատմություն», «Լատիշերեն-հայերեն գրուցարան» և այլն): Տպագրությանը և անվճար տարածմանն աջակցում է հայկական համայնքը, ինչպես նաև տեղի հայ անհատների (Վաչագան Պողոսյան, Էդուարդ Ասատուրյան, Ատոմ Խաչատրյան և այլք) հովանավորությունը<sup>1</sup>:

Լատվիայում լրագրության ոլորտում հայտնի հայ անուններ են ռուսագիր մամուլի ոլորտում գործող Ալեքսանդր Գերոնյանը, Յուրի Մելքոնովը (որը «Արարատ» թերթի խմբագրական խորհրդի անդամ է, վերջերս դարձավ Լատվիայում ՌԴ դեսպանատանն անցկացվող ամենամյա “*Янтарное перо*” միջազգային գրական մրցույթի դափնեկիր), Անժելա Գասպարյանը (ԽՍՀՄ և Լատվիայի լրագրողների միության անդամ), Կարեն Մարկարյանը (“*Вести*”

---

<sup>1</sup> <http://forum.vardanank.org/lofiversion/index.php/t434.html>

---

շարաթաթերթի գլխավոր խմբագրի տեղակալ) և այլք:

1989-ից ռուսերեն լեզվով հրատարակվել է «Լույս» տեղեկագիրը<sup>1</sup>:

Լատվիայում լույս է տեսնում նաև «Հավատք» ամենամսյա պարբերականը, գլխավոր խմբագիրն է Իրինա Տեր-Տաճատյանը<sup>2</sup> (կոնտակտային տվյալները տե՛ս *Աղյուսակ 3.4.2*-ում):

Պետք է նշել, որ Լատվիայում գրանցված մոտ երկու տասնյակ համայնքներից միայն հայերն ու բելառուսներն են թերթ հրատարակում, ընդ որում՝ բելառուսների թիվը հասնում է 100 հազարի, իսկ հայերի թիվն անհամեմատ ավելի փոքր է:

Լատվիական պետական ռադիոն ամիսը մեկ անգամ կես ժամ սևողությամբ ռադիոհեթեր է տրամադրում «Արևիկ» հայկական հաղորդման համար<sup>3</sup>:

---

<sup>1</sup> «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003 (գլխ. խմբ. Հ.Այվազյան):

<sup>2</sup> [http://www.pressinfo.am/index.php?-](http://www.pressinfo.am/index.php?option=com_content&task=view&id=307&Itemid=28&lang=russian)

[option=com\\_content&task=view&id=307&Itemid=28&lang=russian](http://www.pressinfo.am/index.php?option=com_content&task=view&id=307&Itemid=28&lang=russian)

<sup>3</sup> «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003 (գլխ. խմբ.՝ Հ.Այվազյան):

*Լատվիայի հայկական կառույցները*

*Աղյուսակ 3.4.1*

	<b>Քաղաքը</b>	<b>Համայնքային կառույցի անվանումը</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>
1.	Ռիգա	Լատվիա հայկական ընկերակցություն	Նախագահ՝ Հրայր Համբարձումյան	<b>Հասցե՝</b> ք. Ռիգա, 1007, Սլոկասի փող. 37 <b>Հեռ.</b> (+0132) 761 4221, (+0132) 7555477, (+0132) 9218229
2.	Ռիգա	Հայ Առաքելական Եկեղեցու Ռիգայի Համայնք	Համայնքի ղեկավար՝ Քահ. հայր Խոսրով	<b>Հասցե՝</b> ք. Ռիգա, 1003, Կոյուսպլաս փող. 5 <b>Հեռ.</b> (+371) 7131719 <b>Տեքստ</b> (+371) 7189708 <b>Էլ. փոստ</b> havakk@inbox.lv

Հասվիշայի հայկական լրատվամիջոցները

	Քաղաքը	Անվանումը	Ղեկավար անձնակազմը	Կոնտակտային տվյալները
1.	Ռիզա	«Հավատք» ամսագիր	Գլխ. խմբագիր՝ Բրիտա Տեր-Տաճատյան	Հասցե՝ ք. Ռիզա, 1019, Կոյունյալաս փող. 19-60 Հեռ.՝ (+371) 26491059 Էլ. փոստ՝ havatkjournal@inbox.lv

### 3.5 ԼԻՏՎԱ

Ըստ 2007թ. պաշտոնական տվյալների՝ Լիտվայում հայերի թիվը կազմել է 2150 հոգի<sup>1</sup>: Ըստ տարբեր պաշտոնական և ոչ պաշտոնական աղբյուրների՝ հայերի թիվը Լիտվայում տատանվում է 1400-2500-ի սահմաններում<sup>2</sup>: Հիմնականում բնակվում են մայրաքաղաք Վիլնյուսում և Կաունաս, Վիսագինաս քաղաքներում:

#### *Պատմական ակնարկ*

Լիտվայի տարածքում հայերի ներկայության մասին առաջին վկայությունները վերաբերում են 13-14-րդ դդ., երբ բազմաթիվ վաճառականներ առևտրային կապեր են ստեղծել Հայաստանից մինչև Բալթիկ ծով և բնակություն հաստատել Լեհ-լիտվական միացյալ պետությունում: Տեղեկություններ կան այստեղ ապրած հայ շինարարների, ոսկերիչների, կաշեգործների վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, որ 14-15-րդ դդ. հայերը՝ որպես պալատական թարգմանիչներ, զինծառայողներ և գործիչներ, մասնակցել են երկրի քաղաքական և ռազմական կյանքին:

17-18-րդ դդ. վերստին մեծ թվով հայեր բնակություն են հաստատել Լեհ-լիտվական միացյալ պետության տարածքում, և լիտվական արխիվներում կան տեղեկություններ արդեն 17-րդ դ. սկզբին հիմնականում հայերից բաղկացած կաշեգործների ընկերության մասին:

---

<sup>1</sup> <http://www.a1plus.am/ru/politics/2007/10/8/6138>

<sup>2</sup> «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003 (գլխ. խմբ.՝ Հ.Այվազյան), էջ 329:

---

Լիտվայի ժամանակակից հայ համայնքը սկսել է կազմավորվել Խորհրդային Միության տարիներին՝ 1950-ական թթ.: Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին շատ հայ զինվորականներ մշտական բնակություն են հաստատել այստեղ: Հայերի թիվը երկրում, պաշտոնական տվյալներով, 1959-1989թթ. 471-ից աճել է 1655-ի: 1988-1990թթ. համայնքի կազմը համալրվել է Սումգայիթի և Բաքվի փախստականներով, և արդեն 1993թ. մարդահամարի տվյալներով՝ Լիտվայում բնակվում էր մոտ 2000 հայ: Այս թիվը քիչ է փոխվել մինչև այսօր:

Ներկայում Լիտվայի հայերը զգալի դեր են խաղում երկրի հասարակական կյանքում, ներկայացված են նաև ինքնակառավարման մարմիններում<sup>1</sup>: Լիտվայի հայերի մեջ կան ճանաչում ունեցող գեղանկարիչներ, գործարարներ, ինչպես նաև մարզիկներ:

### ***Հայկական կառույցները***

1988թ. Վիլնյուսում գրանցվել է «Գարուն» հայ մշակութային ընկերությունը՝ Օլեգ Իսակի նախագահությամբ: 1992թ. ստեղծվել է Լիտվա-Հայաստան ընկերությունը, որի անդամների մոտ կեսը հայեր են:

Լիտվայի հայ համայնքը պաշտոնապես գրանցվել է 1994թ., նախագահն է 1986թ. Լիտվա տեղափոխված Արա Թունյանը: (Լիտվայի հայկական կառույցների մասին տե՛ս *Աղյուսակ 3.5.1*): Հայկական համայնքային կառույցը չի անդամակցում Լիտվայի

---

<sup>1</sup> <http://www.a1plus.am/ru/politics/2007/10/8/6138>

«Ազգային փոքրամասնությունների տուն» կազմակերպությանը:

1994թ. գրանցվել է նաև Հայաստանյայց Առաքելական եկեղեցու «Մուրբ Վարդան» լիտվահայ համայնքը՝ Սանկտ Պետերբուրգի հոգևոր հովվության հովանու ներքո, և ընտրվել է եկեղեցական խորհուրդը: Միննույն ժամանակահատվածում սկսել են գործել հայ համայնքի ճյուղերը Կաունաս և Վիսագինաս քաղաքներում: Մոտ 20 հայ ընտանիքներից կազմված Վիսագինասի հայկական միությունը գրանցվել է 2002թ., սակայն մինչ այդ գործել է Վիսագինասի ազգային մշակույթների կենտրոնի հովանու ներքո: Նախագահն է Անուշ Միքայելյանը: Միության անդամները հաճախակի հանդիպում են, նշում հայկական պետական, ազգային ու կրոնական տոները<sup>1</sup>:

Հայերի միության նախագահը Լիտվայում հայ համայնքի առաջնահերթ խնդիրը համարում է հայկական մշակույթին առնչվող բոլոր բաղադրիչների պահպանումը<sup>2</sup>:

2009թ. մայիս-հունիսին Լիտվայում տեղի է ունեցել Բալթյան երկրների հայ համայնքների առաջին համագումարը՝ յուրաքանչյուր երկրի համայնքների նախաձեռնությամբ և Բալթյան երկրներում ՀՀ դեսպան Աշոտ Գալոյանի աջակցությամբ: Այս համագումարով պաշտոնապես հիմնադրվել է «Բալթիայի հայերի համագումար» կազմակերպությունը, ընտրվել է գործադիր մարմին, որի կազմում ընդգրկվել է 5 ներկայացուցիչ 3 երկրից: Փոխատեղման սկզբունքով որպես համագումարի խորհրդի նախագահ 1 տարով ընտրվել է հայերի լիտվական համայնքի

---

<sup>1</sup> <http://www.vtkc.lt/groups.php?id=3>

<sup>2</sup> <http://www.a1plus.am/ru/politics/2007/10/8/6138>

---

ղեկավար Արա Թունյանը:

2003թ. տվյալների համաձայն, երկրում գործող 3 հայկական կիրակնօրյա դպրոցներ կան՝ Վիլնյուսում (հիմնադրվել է 1989թ.), Կաունասում (1994թ.) և Վիսագիմասում (1993 կամ 1994)<sup>1</sup>: Հետագայում բացվել է նաև չորրորդ դպրոցը: 2007թ. դրությամբ դպրոցները դասագրքերով ապահովված լինելու խնդիր ունեն՝ չնայած ՀՀ կառավարության որոշակի աջակցությանն այս գործում<sup>2</sup>:

Հայկական դասարանի սաները մասնակցում են ազգային կենտրոնի շրջանակներում կազմակերպված միջոցառումներին, ստացել են կիրակնօրյա դպրոցների փառատոներին մասնակցության դիպլոմներ և պատվոգրեր Լիտվայի ազգային փոքրամասնությունների ղեկարտամենտի կողմից:

Ըստ Լիտվայի հայ համայնքի նախագահ Արա Թունյանի 2007թ. տրամադրած տեղեկատվության՝ Լիտվայի հայ համայնքը ձեռք է բերել տարածք Վիլնյուսի կենտրոնում, որտեղ և սկսվել է հայկական եկեղեցու կառուցումը, մինչ այդ տեղի հայերը հաճախել են կաթոլիկ եկեղեցի<sup>3</sup>:

### ***Հայկական լրատվամիջոցները***

Ներկայում Լիտվայում գործող հայկական տպագիր պարբերականներ կամ ինտերնետային լրատվականներ չկան կամ հայտնի չեն:

---

<sup>1</sup> <http://en.tmid.lt/national-minorities/education/saturday-and-sunday-schools/>

<sup>2</sup> <http://www.a1plus.am/ru/politics/2007/10/8/6138>

<sup>3</sup> Նույն տեղում:

*Լրտվայի հայկական կառույցները*

*Աղյուսակ 3.5.1*

Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը	Ղեկավար անձնակազմը	Կոնտակտային տվյալները
1. Վիլնյուս	Լրտվայի հայ համայնք	Ղեկավար՝ Արա Թունյան	Հասցե՝ ք. Վիլնյուս, Սափրտրիո փող. 22 Հեռ.՝ 370-232-754
2. Վիլնյուս	Լրտվայի Ազգային փոքրամասնությունների խորհուրդ	Ղեկավար՝ Թուրյան Հարութություն	Հասցե՝ ք. Վիլնյուս, 2000, Ռատրվիլուսի փող. 25 Հեռ.՝ 2624830, 23 78 36
3. Կաունաս	Կաունասի հայ համայնք	Ղեկավար՝ Ալեքսանդր Բոյաջյան	Հասցե՝ ք. Կաունաս, 3041, Պարտիզանի փող. 70-60 Հեռ. Ֆաքս՝ 370-37-384863, 370-698-24396 Էլ. փոստ՝ alikbojadzian@one.lt

---

### 3.6 ՂԱԶԱԽՍՏԱՆ

Համաձայն Ղազախստանում ՀՀ դեսպանատան տվյալների՝ երկրում բնակվում է շուրջ 25 հազար հայ, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ հայերի թիվը հասնում է 60-100 հազարի: Նրանց զգալի մասը հաստատված է նախկին մայրաքաղաք Ալմաթիում, մյուսները՝ Աստանա, Ակտյուբինսկ, Կուստանայ, Քարաղանդա, Պետրոպավլովսկ, Պավլոդար և այլ քաղաքներում:

#### *Պատմական ակնարկ*

Հայերը Կենտրոնական Ասիայում հաստատվել են վաղ ժամանակներից: Որպես այդպիսին հայկական համայնքը Ղազախստանում ձևավորվել է 19-րդ դարի 2-րդ կեսին, երբ Ռուսաստանն իր գերիշխանությունն էր հաստատել Կենտրոնական և Միջին Ասիայում: Այդ ժամանակաշրջանում Ղազախստանում հայեր են հաստատվել Թուրքմենստանից, հետագա տարիներին՝ նաև Արցախից, Նախիջևանից և Հայաստանի այլ շրջաններից: Ղազախստանի հայկական համայնքը ստվարացել է խորհրդային իշխանության տարիներին, այդ թվում նաև ի հաշիվ 1937-1949թթ. Հայաստանից, Վրաստանից, Ղրիմից և այլ վայրերից արտոբված հազարավոր հայ ընտանիքների: Հայերը Ղազախստանի հասարակական կյանքում աչքի են ընկել հայտնի դեմքերով՝ պետական կառավարման (2 փոխնախարար), ռազմական (1 գեներալ, 1 գնդապետ), կրթության, գիտության, կինոյի ու թատրոնի, գինեգործության և շինարարության ոլորտներում: Խորհրդային վերջին տարիներին հայերի որոշակի արտահոսք

տեղի ունեցավ ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառով: Հետխորհրդային շրջանում երկրի կառավարությունը ջանքեր է գործադրել ազգային փոքրամասնությունների խնդիրների հարթեցման ուղղությամբ՝ 1995թ. ձևավորելով Ղազախստանի նախագահին կից ժողովուրդների համագումարի ինստիտուտ, որտեղ ներկայացված է նաև հայկական համայնքը: Ազգային փոքրամասնությունների համար բարենպաստ միջավայրը թույլ է տալիս հայերին ինտեգրվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Ներկայումս Ղազախստանի հայերը հիմնականում զբաղվում են գինեգործությամբ, ճանապարհաշինությամբ, ընդգրկված են արդյունաբերության, կրթության, գիտության, ճարտարապետության, առողջապահության, կինոյի և այլ արվեստների, պետական կառավարման և գործարարության ոլորտներում:

### ***Հայկական կառույցները***

Ղազախստանում հայկական կառույցները հիմնականում կառավարվում կամ հովանավորվում են երկրում հաջողակ հայ գործարարների կողմից, ովքեր նաև հասարակական բարձր դիրք են զբաղեցնում երկրում:

Հայերի առաջին հասարակական միավորումը՝ «Լույս» հայ ազգային-մշակութային կենտրոնը», ձևավորվել է 1991թ. Ալմա Աթայում, որի առաջին նախագահն էր Մարգիս Մարգայանը: 1992-ից կենտրոնին կից գործում է հայկական երկամյա կիրականօրյա դպրոց: Կենտրոնում գործում են նաև տարբեր ազգության

---

երեխաների համար պարարվեստի «Էկզերսիս» մանկական ստուդիան և «Ախթամար» պարի համույթը: 2000թ. «Լույս» կենտրոնի նախագահ է ընտրվել պրոֆեսոր, գինեգործ և գործարար Ռուդիկ Մնացականյանը: Վերջինիս աջակցությամբ և գլխավորությամբ Ալմաթիում կառուցվել է «Հայկական տուն» մշակութային օջախը, որտեղ 2003-ից անցկացվում են հայ համայնքի բոլոր միջոցառումները, ամենամսյա ժողովները, պարապմունքներ են անցկացնում կիրակնօրյա դպրոցն ու պարային համույթները<sup>1</sup>: «Լույս» կենտրոնը 2009-ից ղեկավարում է Արտյոմ Գասպարյանը:

Ղազախստանի երկրորդ հայկական կառույցը՝ Կուստանայի շրջանի «Էրերունի» հայ համայնքը, ձևավորվել է 1992թ., գրանցվել 1993թ.: Առաջին նախագահն է դարձել այժմ հանգուցյալ, «*Кустанайпроект*» նախագծատեխնիկական կենտրոնի ղեկավար Ռաֆիկ Մինասյանը, որը կառույցը ղեկավարել է 8 տարի: 2000-ից Կուստանայի հայ համայնքը նախագահում է «*ВНЕДРЕНЧЕСКАЯ ФИРМА «ТОРО» УТЛ*» ղեկավար Մայիլ Թորոյանը, որը նաև Ղազախստանի նախագահին կից Ղազախստանի ժողովուրդների համագումարի անդամ է: 1999-ից համայնքին կից գործում է հայոց լեզվի, գրականության և պատմության կիրակնօրյա դպրոցը: Համայնքի երիտասարդ անդամների ջանքերով նաև ՈւՀԱ (*КВН*) թիմ է ձևավորվել:

«Էրերունի» անունով հայկական ազգային-մշակութային կենտրոն է գործում նաև Քարադանդա քաղաքում, որը նախագահում է

---

<sup>1</sup> <http://www.assembly.kz/index.shtml?f=show&type=6&id=55529466459>

Արթուր Նավասարդյանը: Այս կենտրոնը ևս աշխատանքներ է իրականացնում քաղաքի հայ բնակչության համախմբման, երիտասարդներին հայերեն, հայկական երգուպար ուսուցանելու ուղղություններով:

Վերը նշված 3 համայնքային կենտրոնները, ինչպես նաև Ղազախստանի տարբեր քաղաքների ևս 11 հայկական կառույցներ միավորված են 2004թ. հոկտեմբերի 30-ին հիմնադրված Ղազախստանի հայկական մշակութային կենտրոնների «Նաիրի» ասոցիացիայում: Այն գլխավորում է Արտուշ Կարապետյանը, որը զինու արտադրության ոլորտում հայտնի «Բաքոս» ձեռնարկության տնօրենների խորհրդի նախագահն է<sup>1</sup> և «Նաիրի» ասոցիացիան ներկայացնում է Ալմաթիի «Փոքր համագումարում»<sup>2</sup> (բացի այդ, Արտուշ Կարապետյանը 2008թ. հեղինակել է «Լևոն Միրզոյան. կենսագրական ակնարկ» գիրքը): Ասոցիացիային անդամակցող բոլոր 14 մշակութային կենտրոններն ունեն կիրակնօրյա դպրոցներ, երգի-պարի համույթներ, երիտասարդական ենթակառույցներ: Այսպիսի ձևաչափով համագործակցությունը հայկական համայնքներին թույլ է տալիս համակարգված կերպով միջոցառումներ կազմակերպել բոլոր քաղաքներում, ինչպես նաև փոխայցելություններ կատարել: Օրինակ, ասոցիացիայի անդամ կառույցներում մշտապես նշվում են հայոց այբուբենի ստեղծման հոբելյանական տարելիցները, հայ գրողների ծննդյան տոները, ավանդույթ են դարձել եռամսյակային այցելությունները Ղազախստանի տարբեր քաղաքների հայկական մշակութային

---

<sup>1</sup> <http://www.bakhus.kz/index.php>

<sup>2</sup> <http://www.assembly.kz/small.shtml?f=show&type=5&id=128854710387>

---

կենտրոններ<sup>1</sup>: «Նաիրի» ասոցիացիայի ջանքերով կազմակերպվում են ինչպես մշակութային միջոցառումներ, գիտաժողովներ, այնպես էլ հայկական ճաշատեսակների փառատոներ, գեղեցկության և սպորտային մրցույթներ:

Հայկական կառույցների գործունեության մեջ մեծ ակտիվություն են ցուցաբերում հատկապես երիտասարդները: Կուստանայի հայ համայնքի երիտասարդների նախաձեռնությամբ 2007թ. ձևավորվել է հանրապետական մասշտաբի առանձին կառույց՝ «Ղազախստանի հայ երիտասարդություն» անունով, որի նպատակն է համախմբել երկրի հայ երիտասարդությանը: Վերջինիս առանցքն ու հիմքն են կազմում «Նաիրի» մշակութային կենտրոնների ասոցիացիայում ընդգրկված երիտասարդները: Կառույցի առաջին ղեկավարը դարձավ Նարեկ Ալեքսանյանը, իսկ արդեն 2008թ. նոր նախագահ ընտրվեց Մաքսիմ Դալլաքյանը:

Հայկական կազմակերպությունները Ղազախստանում հիմնականում կրթական-մշակութային և բարեգործական նախաձեռնություններով են հանդես գալիս, նշում են հայկական և դազախական օրացույցների հիշարժան օրերը՝ համագործակցելով ոչ միայն միմյանց, այլև մյուս ազգային միավորումների ու պետական կառույցների հետ (Ղազախստանի հայկական կառույցների մասին տե՛ս *Աղյուսակ 3.6.1*):

Հայ համայնքը 1990-ականներից սկսած՝ Ալմաթիում ձեռնարկել է նաև Մբ. Կարապետ եկեղեցու կառուցման աշխատանքները, որը բացվեց 2006-ին: Եկեղեցին կառուցվել է Ղազախստանի

---

<sup>1</sup> <http://armyane.kz/ekskluziv?article=380>

հայկական մշակութային կենտրոնների «Նաիրի» ասոցիացիայի նախագահ Արտուշ Կարապետյանի միջոցներով: Կուստանայում ևս եկեղեցու կառուցման նպատակով հայերին տարածք է հատկացված: Ղազախստանի Ֆորտ-Շևչենկո քաղաքում (Մանգիշլակ թերակղզում) պահպանվել է 1880-ականներին հայ վաճառականների կառուցած հայկական մատուռ: Ղազախստանի Հայ առաքելական համայնքն ընդգրկված է Հայոց եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմում:

### ***Հայկական լրատվամիջոցները***

Ղազախստանում գործում է *armyane.kz* էլեկտրոնային կայքով «*Armyane.kz*» հայկական մեդիա միավորումը, որի պաշտոնական ձևավորումը թվագրվում է 2006թ. հունվարի 13-ից: Հիմնադիրներն են Ղազախստանի հայկական մշակութային կենտրոնների «Նաիրի» ասոցիացիայի 13 երիտասարդ անդամներ<sup>1</sup>: Կայքում կարելի է տեղեկություններ գտնել Ղազախստանում ապրող հայերի, հայկական համայնքային կազմակերպությունների մասին, ունի Հայաստանին առնչվող լրատվական բաժին: 2007-ից «Նաիրի» ասոցիացիան 5000 տպաքանակով նույնանուն ամսաթերթ է հրատարակում, իսկ 2008թ. լույս տեսավ «Նաիրի» երկլեզու (հայերեն, ռուսերեն) ամսագրի անդրանիկ համարը (նշված լրատվամիջոցների մասին տե՛ս *Աղյուսակ 3.6.2*): Բացի

---

<sup>1</sup> <http://armyane.kz/about>

---

թերթի ու ամսագրի թողարկումից, Ղազախստանի հայերը նաև այլ հրատարակչական նախագծեր են իրականացնում: Այսպես, 2008թ. 2000 օրինակ տպաքանակով, ռուսերեն, լույս է տեսել «Լևոն Միրզոյան. կենսագրական ակնարկ» գիրքը, որը ներկայացնում է 1937թ. Ղազախստանի կոմկուսի կենտկոմի գլխավոր քարտուղար Լևոն Միրզոյանի կյանքը, իսկ երեխաների համար հայերենով թողարկվել է այբբենարան:

**Ղազարխատանը հայկական կառույցները**

**Աղյուսակ 3.6.1**

Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը	Ղեկավարը	Գոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
1. Ալմաթի	ՂՀ հայկական մշակութային կենտրոնների «Նաիրի» ասոցիացիա	Նաիրազահ Արսուշ Կարապետյան	<b>Հասցե՝</b> ք. Ալմաթի, 050010, Գուրմանգազի փող. 40 <b>Հեռ.</b> (+8 3272) 670746 <b>Ֆաքս</b> (+8 3272) 670746, (+8 3272) 503088	Հիմնադրման տարեթիվը՝ 2004թ.
2. Ալմաթի	Հայկական «Լույս» մշակութային կենտրոն	Նաիրազահ Արսուժ Գասպարյան	<b>Հասցե՝</b> ք. Ալմաթի Ծարոկովի փող 91 <b>Հեռ.</b> (+ 3272) 402742 (+ 3272) 432897	Հիմնադրման տարեթիվը՝ 1991թ.
3. Ալմաթի	Ալմաթիի հայկական մշակութային կենտրոն	Նաիրազահ Քնարիկ Գասպարյան	<b>Հեռ.</b> (+8 3272) 302053 <b>Ֆաքս՝</b> (+8 3272) 305708 <b>Էլ. փոստ</b> chachoyan@yahoo.com	Հիմնադրման տարեթիվը՝ 2005թ.: Ստեղծման նպատակն է հայ ժողովրդի ազգային ավանդույթների, պատմության, լեզվի, մշակույթի պահպանումը
4. Քարաղանդա	«Էրեբունի» հայկական ազգային մշակութային կենտրոն	Նաիրազահ Արթուր Նավասարդյան	<b>Հասցե՝</b> Լորդոպի փող. 3, բն 22 <b>Հեռ.</b> (+8 7212) 514604 (+8701)5553545	Գնեւորները գրանցվել է 1994թ.

	Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
5.	Կուստանայ	Կուստանայի շրջանի հայկական «Էրեբունի» հայ համայնք	Նախագահ՝ Արթուր Աբրահամյան	<b>Հասցե՝</b> ք. Կուստանայ, Չեխովի 105ա փող. <b>Հեռ.</b> ՝ (+7 7142) 56 8538 <b>Ֆաքս</b> ՝ (+7 7142) 263322	Հիմնադրման տարեթիվը՝ 1992թ.
6.	Պետրոպոլսկի	«Կենտրոն» մշակութային միություն	Նախագահ՝ Ռոման Առաքելով	<b>Հասցե՝</b> ք. Պետրոպոլսկի Ղազարխանյան Սահմանադրության փող. 27	Հիմնադրման տարեթիվը՝ 1997թ.: Կենտրոնում գործում են երիտասարդական ակումբ, ազգագրական և պարավիետի ստուդիաներ
7.	Պավլոդար	«Հայրենիք» հայկական ազգային մշակութային միություն	Նախագահ՝ Կամր Բադոյան	<b>Հասցե՝</b> ք. Պավլոդար, Կրիլենկոյի փող. 51, Բարեկամության սուրն <b>Հեռ.</b> ՝ (+7182) 321737	2004թ. փետրվարից կենտրոնում գործում է երիտասարդական միությունը, որի ղեկավարն է Առաքել Խիչիկյանը
8.	Աստանա	«Վան» հայկական ազգային մշակութային կենտրոն	Նախագահ՝ Գագիկ Ավետիսյան	<b>Հեռ.</b> ՝ (+ 7 3172) 212055 <b>Էլ. փոստ</b> ՝ kazar-fimans@mail.ru	
9.	Ակտյուբինսկ	«Ուրարտու» հայկական համայնք	Նախագահ՝ Հայկ Տերտեղյան	<b>Հասցե՝</b> ք. Ակտյուբինսկ, Սանկիբայա փող. 139/ա <b>Հեռ.</b> ՝ (+3132) 573011 <b>Էլ. փոստ</b> ՝ pk_21@mail.ru	

	<b>Քաղաքը</b>	<b>Համայնքային կառույցի անվանումը</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>	<b>Սյր տեղեկություններ</b>
10.	Ուստ Կամենոգորսկի	«Արարատ» հայկական մշակութային կենտրոն	Նախագահ՝ Զիլիան Սանուչյարյան	<b>Հասցե՝</b> ք. Ուստ Կամենոգորսկ, 49200, Ուշակովի փող. 63 <b>Հեռ.</b> (+8 705) 50600608, (+8 705) 2828282 <b>Ֆաքս</b> (+7 232) 253006	
11.	Ուրբալսկի	«Նոյան տապան» հայկական լուսավորչական միություն	Նախագահ՝ Սևադա Տեր-Գրիգորյան	<b>Հասցե՝</b> Ուրբալսկի, Կոտայկոյի փող. 6 <b>Հեռ.</b> (+8 705) 8016015, (+8 705) 284935 <b>Ֆաքս</b> (+8 705) 53-75-10	
12.		Հարավ-Ղազախստանյան շրջանի հայկական մշակութային կենտրոն	Նախագահ՝ Ստևոկ Մեծրումյան	<b>Հեռ.</b> (+ 8701) 4776491 (+ 8 7252) 564202 <b>Ֆաքս</b> (+ 8 7252) 566227 <b>Էլ. փոստ</b> andanikmezhi@mail.ru	
13.	Կոնկրետայ	Հայկական համայնք	Նախագահ՝ Աշոտ Պողոսյան	<b>Հեռ.</b> (+ 87162) 425980 (+ 87162) 425979 (+ 87162) 425978 <b>Էլ. փոստ</b> jardem@inbox.ru, arevik@inbox.ru	

Ղազարաստանի հայկական լրատվամիջոցները

Քաղաքը	Անվանումը (կայքը)	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
1. Ալմաթի	ARMYANE.KZ մեդիա - խումբ <i>armyane.kz</i>		Էլ. փոստ՝ armyane.kz@gmail.com	Հիմնադրման տարեթիվը՝ 2006թ. հունվարի 13
2. Ալմաթի	«Նաիրի» թերթ armyane.kz/gmail	Ա. Գևորգյան	Հասցե՝ ք. Ալմաթի, Ական-Մերի փող. 15, Հեռ.՝ (+727) 2341331 Էլ. փոստ՝ arm@armyane.kz	Հիմնադրման տարեթիվը՝ 2007թ.։ ՂՀ հայկական մշակութային կենտրոնների «Նաիրի» ասոցիացիայի թերթն է

### 3.7 ՂՐՂԸՉՍՏԱՆ

Ղրղըզստանում պաշտոնական տվյալներով բնակվում է 1364 հայ, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ ավելի քան 3000<sup>1</sup>: Հայերը հիմնականում բնակվում են մայրաքաղաք Բիշքեկում:

#### *Պատմական ակնարկ*

Ղրղըզստանի, ինչպես և Միջին Ասիայի մյուս երկրների հետ հայերի կապի մասին պատմաբանները հիշատակում են վաղ ժամանակներից: Սակայն հայկական հոծ խմբեր այստեղ սկսել են տեղափոխվել 19-րդ դարի 2-րդ կեսին՝ Արցախից, Ջանգեզուրից, Նախիջևանից, Պարսկաստանից, իսկ 20-րդ դ. 20-ական թթ.՝ նաև Ուզբեկստանից, Թուրքմենստանից, Ղազախստանից: Խորհրդային շրջանում Ղրղըզստանում հայտնված հայերի մի մասն աքսորյալներն էին, իսկ հետագայում՝ հրավիրված և գործուղված մասնագետներ: Ղրղըզստանի հայտնի հայերի շարքում եղել են ձեռներեցներ, 2 նախարար, փոխնախարար, վարչապետի խորհրդական, երգարվեստի ճանաչված գործիչներ: Այժմ էլ հայերը Ղրղըզստանում մեծ ներդրում ունեն կրթության, բժշկագիտության, պարի և երգի, շինարարության ոլորտներում:

---

<sup>1</sup> Տվյալը վերցված է «Հայ սփյուռք հանրագիտարանից» (Երևան, 2003թ.), սակայն Ղրղըզստանի հայ ներկայացուցիչների 2001 թվականի տվյալներով՝ երկրում բնակվում է շուրջ 4000 հայ:

Տե՛ս [http://www.publish.diaspora.ru/magazin/articles/armenia027\\_1.shtml](http://www.publish.diaspora.ru/magazin/articles/armenia027_1.shtml)

---

## **Հայկական կառույցները**

Ղրղըզստանում ներկայում գործում է մեկ հայկական կառույց՝ «Քարավան» հայերի ընկերակցությունը» (կոնտակտային տվյալները տե՛ս *Աղյուսակ 3.7.1*-ում): Հիմնադրվել է 1996թ., նախագահն է Էդուարդ Սողոմոնյանցը (որոշ աղբյուրներում՝ Սաղոմանյանց): Հիմնական նպատակն է հայոց լեզվի, ազգային մշակույթի և ավանդույթների ուսումնասիրումը և բարեգործությունը: «Քարավանն» անդամակցում է 1994-ից պետական նախաձեռնությամբ ձևավորված «Ղրղըզստանի ժողովրդի ընկերակցություն» հասարակական կազմակերպությանը, որը միավորում է երկրի ազգային-հասարակական կառույցները, ինչպես նաև դրանց տրամադրում գրասենյակներ մեկ ընդհանուր տանիքի՝ «Բարեկամության տուն» շինության ներքո<sup>1</sup>: Այս համայնքային կառույցին կից գործում են կիրակնօրյա դպրոց և ազգագրական համույթ: Բացի այդ, Ղրղըզստանում բնակվում են մոտ 1500 մահմեդական հայեր՝ համշեր, որոնք կապված չեն հայկական համայնքի հետ<sup>2</sup>:

## **Հայկական լրատվամիջոցները**

Ղրղըզստանում հայկական լրատվամիջոցներ չկան:

---

<sup>1</sup> [http://www.publish.diaspora.ru/magazin/articles/armenia027\\_1.shtml](http://www.publish.diaspora.ru/magazin/articles/armenia027_1.shtml)

<sup>2</sup> <http://www.panarmenian.net/news/arm/?nid=38240>

**Ղրղըզստանի հայկական կառույցները**

**Անդրսահյ 3.7.1**

	<b>Քաղաքը</b>	<b>Համայնքային կառույցի անվանումը</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Կոնտակտային տվյալները</b>
1.	Բիշքեկ	«Նավիրի» հասարակական միավորում	Նախագահ՝ Աշոտ Կոնդալյան	<b>Հասցե՝</b> ք. Բիշքեկ, Պուշկինի 78/31 <b>Հեռ./ Տաքս</b> (+996) 312 512721 <b>Էլ. փոստ</b> ashor777@mail.ru
2.	Բիշքեկ	«Քարավան» հայերի ընկերակցություն	Նախագահ՝ Էդուարդ Սորոտնյանց	<b>Հասցե՝</b> ք. Բիշքեկ, 720040, Պուշկինի փող. 78, բն.114, 115 <b>Հեռ.</b> +996 (312) 28-53-18, +996 (0502) 35-34-31

---

### 3.8 ՄՈՒԴՈՎԱ

Ըստ երկրի պաշտոնական մարդահամարի տվյալների՝ Մոլդովայում բնակվող հայերի թիվը 2004թ. կազմել է 1.829 մարդ<sup>1</sup>: Մոլդովայի հայկական համայնքի ներկայացմամբ՝ հայերի թիվն այստեղ 2009թ. տվյալներով անցնում է 12 հազարից<sup>2</sup>: Հիմնականում բնակվում են մայրաքաղաք Քիշնևում, Բելցի, Հնչեշտ, Օրգև, Բենդեր, Գրիգորիուպոլ քաղաքներում (վերջին երկուսը՝ չճանաչված Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետությունում):

#### *Պատմական ակնարկ*

Մոլդովայի տարածքում հայերի ներկայության մասին առաջին հիշատակումները թվագրվում են 6-7-րդ դդ.: Հետագայում հայերի հոսքը զանգվածային բնույթ է ստացել 11-րդ դարի 60-ականներից: Առաջին հայ բնակիչները Մոլդովայի տարածք են եկել Ղրիմից, այնուհետև՝ Հայաստանից, Կիլիկիայից և Փոքր Ասիայից:

1359 թվականին՝ մոլդովական իշխանության կազմավորումից հետո, երկրում ամրացել են հայերի դիրքերը, հիմնվել են հայկական կենտրոններ: 1401թ. իշխանական հրամանագրով Մոլդովայի մայրաքաղաք Մուչավայում ստեղծվել է առանձին հայոց թեմ՝ իր եպիսկոպոսով: Մոլդովահայերը զբաղվել են առևտրով, արհեստներով և երկրագործությամբ, հայ վաճառա-

---

<sup>1</sup> <http://igorpivovar.wordpress.com/statistics/>

<sup>2</sup> <http://www.panorama.am/ru/culture/2009/10/23/qishnev/>

կանների ձեռքում կենտրոնացված է եղել Մոլդովայի արտաքին առևտրի հիմնական մասը: Երկրի գլխավոր առևտրական ճանապարհը կրել է «Հայկական ճանապարհ» անունը: Մոլդովական իշխան Ալեքսանդր Բարեպաշտի հրատարակած հրամանագրի (1408թ.) համաձայն՝ հայ բնակիչները մի շարք կարևոր արտոնություններ են ստացել առևտրի և ձեռնարկատիրական գործունեության ասպարեզում: Հայերի հիմնած Գրիգորիուպոլ քաղաքում (18-րդ դարավերջ), ինչպես նաև Մուչավայում հայերն ունեցել են ինքնավարության մարմիններ, իրենց քաղաքապետը և դատարանը, ղեկավարվել են հայկական դատաստանագրքով, որը փոխ էին առել Լեհաստանի հայերից: Ինքնավարությունները պահպանվել են մինչև 19-րդ դարի սկիզբը: 19-րդ դարում հայերի թիվը երկրում կազմում էր շուրջ 7 հազար:

Ավելի ուշ ներկայիս Մոլդովայի տարածքում առաջին հայկական համայնքը հիմնվել է 19-րդ դարավերջին Ջորջ Ասակիի՝ Գեորգի Իսահակյանի կողմից Բեսարաբիայում<sup>1</sup>: Նա ստեղծել է մշակութային կենտրոն, հիմնել առաջին հայկական դպրոցը Յասիում, մոլդովական և ռումինական իշխանություններից պահանջել է երկրի հայերին քաղաքացու կարգավիճակ շնորհել: Բացի հայանպաստ գործունեությունից, ստեղծել է առաջին ռումինական թատրոնը և համալսարանը, ռումիներեն առաջին հանրագիտարանը, առաջին տպագրատունը, ներկայացրել և պաշտպանել է Մոլդովայի քաղաքական շահերը:

---

<sup>1</sup> Այս մասին նշում է Մոլդովայի հայ համայնքի գործող նախագահ Վեներա Գասպարյանն իր հարցազրույցներից մեկում, տե՛ս [http://www.golos.am/index.php?option=com\\_content&task=view&id=47489&Itemid=53](http://www.golos.am/index.php?option=com_content&task=view&id=47489&Itemid=53)

---

Տարբեր ժամանակներում ազգությամբ հայ գործիչներ և գործարարներ անմիջական մասնակցություն և նշանակալի դեր են ունեցել Մոլդովայի հասարակական, քաղաքական և ռազմական կյանքում: Հայկական ծագում է ունեցել մոլդովական իշխաններից Սերպեկի գահատոհմի ներկայացուցիչ Իոն Արմեանուլը (Հովհան Հայր), որը կառավարել է 1572-1574թթ.: Մոլդովայում պատմական հայտնի կերպար է Մանուկ Բեյ Միրզոյանը, որը մեծ դերակատարություն է ունեցել 1812թ. Բեսարաբիան Ռուսաստանին միացնելու գործում: Մինչ այսօր Հնչեշտ քաղաքում (Քիշնևից 45 կմ հեռավորության վրա) կանգուն են Մանուկ Բեյի կալվածքի շինությունները, որոնք պատմամշակութային արժեք ունեն և պահպանվում են պետության կողմից:

Մոլդովայում խոշոր և վաղուց ձևավորված հայկական սփյուռքի մասին են վկայում բազմաթիվ պատմական փաստեր, գրքեր, հայկական գերեզմանոցի և Քիշնևում Հայկական անունով փողոցի առկայությունը, եկեղեցիները: Հայկական կենտրոնների կազմավորմանը զուգընթաց հիմնվել են հայկական դպրոցներ և եկեղեցիներ:

Մոլդովայի մի շարք տարածքային վերակազմավորումների և մասնատումների արդյունքում (Առաջին համաշխարհայինից հետո Բեսարաբիայի անցումը Ռումինիային, որոշ մասի խորհրդայնացումը և այլն) Մոլդովայի հայերի ազգային և համայնքային կյանքը, ըստ էության, կանգ է առել: Հայերի թիվը որոշ չափով աճել է խորհրդային ժամանակներում՝ 1950-80թթ. ընթացքում, ինչպես նաև 80-ականներին, երբ հայերն այստեղ են տեղափոխվել Արցախից, Ադրբեջանից և Հայաստանից:

Մոլդովայի, մասնավորապես՝ Քիշնևի և Գրիգորիուպոլի հայ համայնքները վերստին աշխուժացել են 1990-ականների սկզբից:

Ներկայում Մոլդովայում բնակվող հայերի շրջանում կան պատմաբաններ, լեզվաբաններ և այլ ոլորտների գիտնականներ (որոնց թվում՝ ակադեմիկոսի աստիճան ստացած), ինչպես նաև գործարարներ, երաժիշտներ:

### ***Հայկական կառույցները***

Մոլդովայում հայերի համախմբման և կազմակերպման, ազգային կյանքի վերականգնման նոր փուլն սկսվել է 1991 թվականին, երբ համայնքի այն ժամանակվա ղեկավարներ Արմեն և Սիմոն Գուլբանյան եղբայրներն իրենց միջոցներով վերանորոգեցին Քիշնևի շուրջ 200-ամյա պատմություն ունեցող Սբ. Աստվածածին հայկական եկեղեցին, որը վերաբացվեց 1993թ.:

Համայնքի կազմավորման հարցում մեծ ներդրում է ունեցել պրոֆ. Արշո Փարսադանյանը, որը Մոլդովայի գիտամանկավարժական ոլորտում ճանաչված մասնագետ է, Քիշնևի համալսարանում վարել է մեխանիկայի ֆակուլտետի ղեկանի և էլեկտրատեխնիկայի ամբիոնի վարիչի պաշտոնները<sup>1</sup>:

Հայկական առաջին հասարակական կազմակերպությունը՝

---

<sup>1</sup><http://www.noev-kovcheg.ru/mag/2009-06/1665.html>,

[http://ru.hayazg.info/%D0%9F%D0%B0%D1%80%D1%81%D0%B0%D0%B4%D0%B0%D0%BD%D1%8F%D0%BD\\_%D0%90%D1%80%D1%88%D0%BE\\_%D0%A1%D0%BC%D0%B1%D0%B0%D1%82%D0%BE%D0%B2%D0%B8%D1%87](http://ru.hayazg.info/%D0%9F%D0%B0%D1%80%D1%81%D0%B0%D0%B4%D0%B0%D0%BD%D1%8F%D0%BD_%D0%90%D1%80%D1%88%D0%BE_%D0%A1%D0%BC%D0%B1%D0%B0%D1%82%D0%BE%D0%B2%D0%B8%D1%87)

---

«Մոլդովայի հայ համայնքը», հիմնվել է 1992թ., սակայն պաշտոնապես գրանցվել է 1997թ.<sup>1</sup> (Մոլդովայի հայկական կառույցների մասին տե՛ս *Աղյուսակ 3.8.1*): 2009թ. փետրվարին կազմակերպության նախագահ է ընտրվել Հայկ Գևորգյանը: Կազմակերպությանը կից գործում է կիրականօրյա դպրոց:

Ներկայում Մոլդովայի հայությանը ներկայացնում է ևս մեկ համայնքային կազմակերպություն՝ 2000-ին հիմնադրված «Մոլդովայի Հանրապետության հայկական սփյուռքը»: Այս կառույցի ղեկավար Վեներա Գասպարյանը միաժամանակ գլխավորում է «Մոլդովայի հայ կանանց «Տաթևիկ» ընկերակցություն» և «Մոլդովայի Հանրապետությունում քրիստոնեական առաքելական հայկական հոգևոր կուլտ» կազմակերպությունները, հանդիսանում է «Մոլդովայի կանայք» ֆորումի բյուրոյի անդամ և Մոլդովայի Հանրապետության միջէթնիկական հարաբերությունների դեպարտամենտի կոորդինացիոն խորհրդի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու է, հայտնի է որպես երգիչ-կոմպոզիտոր: Կազմակերպության ուժերով հայ համայնքին 25 տարով անհատույց օտագործման է վերադարձվել (2003-ից) Քիշնևի Սուրբ Հարություն հայկական եկեղեցին՝ կառուցված 19-րդ դարի վերջին Բորիս Բաղդասարովի կողմից: Եկեղեցու հարևանությամբ 2009թ. հոկտեմբերից գործում է «Արմենիա» հայկական մշակութային կենտրոնը և Մեսրոպ Մաշտոցի անվան հայկական կիրականօրյա դպրոցը: Կենտրոնում գործում են հայկական երգի, երաժշտության, պարի, թատրոնի խմբակներ, իսկ դպրոց են հաճախում մինչև 70-75

---

<sup>1</sup> <http://www.panorama.am/ru/culture/2009/10/23/qishnev/>

տարեկան հայեր, ովքեր ցանկանում են տիրապետել հայոց լեզվին<sup>1</sup>: Այս կազմակերպության ջանքերով պաշտպանվում է նաև Քիշնևի հայկական գերեզմանատունը:

Քիշնևում գործող երկու հայկական դպրոցների անհրաժեշտ գրականությամբ ապահովելու հարցում օժանդակել է ՀՀ Սփյուռքի նախարարությունը, որը տրամադրել է հայոց պատմությանը, գրականությանը և լեզվին առնչվող գրականություն, այդ թվում՝ այբբենարաններ: Հայկական կիրակնօրյա դպրոց է բացվել նաև Բենդերի քաղաքում՝ հայ գործարարի աջակցությամբ<sup>2</sup>:

Մոլդովայում գրանցված և գործող ազգային փոքրամասնությունների հասարակական միավորումների շարքում է նաև 2000թ. ստեղծված «Մայր Հայաստան» Մոլդովայի հայկական սփյուռք» կազմակերպությունը՝ Արտյոմ Նահրադյանի ղեկավարությամբ<sup>3</sup>: 2003թ. տվյալներով՝ գործել է Գրիգորիուպոլի «Վերածնունդ» բարեգործական միությունը, ինչպես նաև Քիշնևում հայկական մշակույթի «Անի» կենտրոնը, որի նպատակն է եղել մոլդովահայերի ավանդույթների վերականգնումը, պահպանված հայկական հուշարձանների մասին հոգալը<sup>4</sup>: Մոլդովայում գրանցված է նաև Մոլդովայի հայ բժիշկների և իրավաբանների «Ուրարտու» միջազգային մարդասիրական ընկերակցություն հասարակական կազմակերպությունը<sup>5</sup>:

---

<sup>1</sup> <http://hetq.am/am/society/hay-hamaynq>

<sup>2</sup> <http://www.armenianchurch.do.am/publ/2-1-0-20>

<sup>3</sup> <http://www.iatp.md/ladom/downloads/Mngo.doc>

<sup>4</sup> «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003 (գլխ. խմբ.՝ Հ.Այվազյան), «Հայերն աշխարհում», Երևան, 1995թ.:

<sup>5</sup> <http://igorpivovar.wordpress.com/ngo-minorities/>

---

Բացի Քիշնևում գործող Սուրբ Աստվածածին և Սուրբ Հարություն եկեղեցիներից, մեկ հայկական եկեղեցի էլ գործում է Բելցի քաղաքում:

### ***Հայկական լրատվամիջոցները***

1997-2000-ին Քիշնևում լույս է տեսել «*Ноев ковчег*» («Նոյյան տապան») ռուսերեն ամսաթերթը (հիմնադիր և գլխավոր խմբագիր՝ Գրիգորի Անիսոնյան), որը 2000-ից մինչև այժմ լույս է տեսնում Մոսկվայում: Այդուհետ հայկական լրատվամիջոցներ Մոլդովայում չեն գործել, սակայն «Մոլդովայի Հանրապետության հայկական սփյուռք» կազմակերպությունը նախատեսում է տեղի պարբերականներից մեկում հրատարակել հայ համայնքի խնդիրները և իրադարձությունները լուսաբանող հայալեզու ներդիր<sup>1</sup>:

Հեռախոսային և ինտերնետային կապի և հեռուստատեսային ծառայությունների ոլորտում հայտնի է Մոլդովայում գործող «Արաքս Թելեբրոմյունիքեյշն» ընկերությունը, որը հիմնադրվել է 1992թ., ղեկավարն է ազգությամբ հայ գործարար Արմեն Ցիցինովսկին (*arax.md*):

---

<sup>1</sup> <http://hetq.am/am/society/hay-hamaynq>

**Մուրովայի հայկական կառույցները**

**Աղյուսակ 3.8.1**

<b>Քաղաքը</b>	<b>Համայնքային կառույցի անվանումը</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Գոտտակառույցի տվյալները</b>
1. Քիշն	Մուրովայի հայ համայնք	Նախագահ՝ Հայկ Գևորգյան	<b>Հասցե՝</b> ք. Քիշն, Շտեֆան-Գոդե, Պրացյա վիլլեի փող. 8 <b>Հեռ./ֆաքս՝</b> (+373 22) 222329, (+373 79) 529499, (+373 22) 214147, (+373 22) 271503, (+373 79) 529994
2. Քիշն	Մուրովայի հայկական կազմակերպությունների վիություն	Նախագահ՝ Դավիթ Դավթյան	<b>Հասցե՝</b> ք. Քիշն, Վալյա Տրանդաֆիրիտր փող. 11 <b>Հեռ.</b> (00373 22) 271503, (+003736) 9949494
3. Քիշն	Մուրովայի հայկական սփյուռք «Մայր Հայաստան» հ/կ	Նախագահ՝ Վեներա Գասպարյան	<b>Հասցե՝</b> ք. Քիշն, Վալյա Տրանդաֆիրիտր փող. 11 <b>Հեռ.</b> (+ 373 22) 271503, (+ 3736) 9107353
4. Քիշն	Մուրովայի հայ կանանց «Տարևիկ» ընկերություն	Նախագահ՝ Տարևիկ Դավթյան	<b>Հասցե՝</b> ք. Քիշն, Դավթա փող. 26, բն. 99 <b>Հեռ./ֆաքս՝</b> (373 22) 271503,
5. Քիշն	Մուր Հայություն եկեղեցու ծխական խորհուրդ	Նախագահ՝ Կարեն Դավիթյան	<b>Հեռ./ֆաքս՝</b> (+373) 69107353, (+733) 69109134

---

### 3.9 ՌՌԻՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Դաշնությունում տարբեր հաշվարկներով 1 մլն-ից մինչև 2.5-3 մլն հայ է բնակվում: Հայերը ՌԴ ազգությունների շարքում պաշտոնական տվյալներով զբաղեցնում են 5-րդ, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ 4-րդ տեղը (ռուսներից, թաթարներից և ուկրաինացիներից հետո)<sup>1</sup>: Հարյուր հազարավոր հայեր սփռված են Ռուսաստանի տարբեր հատվածներում, սակայն առավել կենտրոնացված են մայրաքաղաք Մոսկվայում (շուրջ 500 հազար), Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում (համապատասխանաբար՝ 800 հազար և 400 հազար) և Ռոստովի մարզում (135 հազար)<sup>2</sup>:

#### *Պատմական ակնարկ*

Ռուսաստանի տարածքում հայերի բնակության մասին վկայություններ կան Կիևյան Ռուսիայի կազմավորման շրջանից (11-12-րդ դդ.) սկսած: Այստեղ հայերի հետագա ստվարացումը և հայկական բնակավայրերի ու համայնքների հիմնադրումը հիմնականում պայմանավորված է եղել պատմական տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանի դեմ արշավանքներով և հայերի տեղահանություններով (13-14-րդ, 19-20-րդ դդ.), ինչպես նաև Ռուսաստանի աշխարհաքաղաքական դերի աճով և հայ վաճառականության շերտի ձևավորմամբ ու զարգացմամբ (սկսած 17-րդ դ.):

---

<sup>1</sup> Մ.Մալխասյան, «Հայերն աշխարհում», Երևան, 2007թ., էջ 99:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 27:

Հայկական համայնքներ հիմնվել են Մոսկվայում (14-րդ դ.), Նովգորոդում, Կազանում (18-րդ դ.), Աստրախանում, Ղզլարում (18-րդ դ. սկիզբ), Մոզդոկում, Ռուսաստանի նախկին մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում, Կուբանի մարզում (19-րդ դ.) և այլուր: 1778թ. Ղրիմի խանության գրավումից հետո տեղի հայ բնակչությունը վերաբնակեցվել է Դոնի գետաբերանի տարածքում (1779թ.), ուր և հիմնել են այժմյան Ռոստովի մաս կազմող Նոր Նախիջևան քաղաքը և շրջակա 5 հայկական գյուղերը:

Այդ ժամանակներում հայ-ռուսական հարաբերությունները հիմնականում կրել են առևտրական և մշակութային բնույթ: Հայերն առաջին օտարերկրացիներն են եղել, որոնք ստացել են Ռուսաստանով տարանցիկ առևտուր անելու արտոնություն: Այսպես, 1667թ. ցար Ալեքսեյ Միխայլովիչը առևտրական պայմանագիր է կնքել Իրանի Նոր Ջուղայի (Սպահան) հայ վաճառականների ընկերության հետ, որով վերջիններիս տրվում էին Իրանի և Ռուսաստանի միջև, ինչպես նաև Ռուսաստանի տարածքով Արևմուտքի և Արևելքի երկրների հետ մետաքսի առևտրի աննախադեպ արտոնություններ և իրավունքներ:

Հետագայում էլ հայերը, Ռուսական կայսրության տնտեսական կյանքում նշանակալի դերակատարներ համարվելով, արտոնություններ են ստացել Պետրոս I-ի, Եկատերինա II-ի և Պավել I-ի օրոք:

Հայ համայնքներին Ռուսաստանի իշխանությունները շնորհել են ոչ միայն տնտեսական, այլև իրավական արտոնություններ: 18-րդ դարից սկսած՝ Աստրախան, Ղզլար, Մոզդոկ համայնքները ստացել են ինքնավարություն, որն իրականացվել է հայկական դատարանի կամ մագիստրատի միջոցով: Ինքնավարության այդ

---

մարմինները գոյություն են ունեցել մինչև 1840-ականները: Ռուսահայ շատ համայնքների ներքին կյանքը կարգավորվել է 1760-ականներից կազմված Աստրախանի հայոց դատաստանագրքով:

Ռուսաստանում հայկական համայնքների կազմավորումը շարունակվել է նաև 19-րդ դարի ընթացքում: Մասնավորապես, 19-րդ դարի առաջին կեսին է հիմնվել Արմավիր քաղաքը Հյուսիսային Կովկասում, հայերը հաստատվել են նաև այլ քաղաքներում: Իսկ 19-րդ դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում հայերի վիճակի կտրուկ վատթարացմամբ և 1894-96թթ. կոտորածներով պայմանավորված՝ բազմաթիվ արևմտահայ փախստականներ հաստատվել են Սև ծովի կովկասյան ափի քաղաքներում: Արևմտահայ փախստականների հաջորդ ալիքը Ռուսաստանի հարավում ապաստան է գտել 20-րդ դարի Ցեղասպանության հետևանքով:

Հայ Առաքելական եկեղեցին, ի դեմս Աստրախանի թեմի, այստեղ հիմնվել է 1717թ.՝ միավորելով տարբեր հայաշատ բնակավայրերի հայությանը: 18-րդ դարի վերջից հիմնվել են նաև հայկական կրթօջախներ բազմաթիվ քաղաքներում, որոնցից առավել հայտնի են Նոր Նախիջևանի Սբ. Խաչ վանքի դպրոցը, Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, Մոսկվայի Լազարյան ճեմարանը:

Առաջին հայկական տպարանը Ռուսաստանում հիմնադրվել է 1780-ական թթ. Սանկտ Պետերբուրգում: Այդ ժամանակվանից մինչև 1920-ականները ընդհանուր առմամբ գործել է 24 հայկական տպարան: Առաջին հայ պարբերականը՝ «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը, լույս է տեսել 1816-ին Աստրախանում: Տարբեր

տարիների հայերեն թերթեր ու ամսագրեր հրատարակվել են Մոսկվայում (ավելի քան 20 անուն), Նոր Նախիջևանում (20 անուն), Սանկտ Պետերբուրգում (5 անուն), Պյատիգորսկում (6 անուն) և այլն:

Խորհրդային շրջանում Ռուսաստանի տարածքում հայերը հիմնականում հաստատվել են Ալթայի երկրամաս արքորվելու հետևանքով կամ էլ մասնագիտության բերումով: Այս ընթացքում Ռուսաստանի հայերի ազգային կյանքի դրսևորման միակ ձևը ապրիլի 24-ին Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված արարողություններն էին: Ցանկացած այլ փորձեր (օրինակ՝ հայերենի ուսուցման խմբերի ձևավորման) շատ արագ հանգչում էին՝ բախվելով իշխանությունների ցավազին արձագանքին: Մինչև 1987թ. կեսերին գորբաչովյան վերակառուցումը խորհրդային քաղաքացիներին ազգային միավորումներ և համայնքային կառույցներ ձևավորելու հնարավորություն ընձեռված չէր:

Նորագույն ժամանակներում՝ 1988-ից, մոսկովյան հայությունը սկսեց ակտիվ և կազմակերպված մասնակցություն ցուցաբերել ՀՍՍՀ-ի և ԼՂԻՄ-ի շուրջ ընթացող քաղաքական կյանքին: 1988թ. ձևավորվեցին առաջին հայկական կազմակերպությունները՝ «Ղարաբաղ» կոմիտեն, «Բարև ձեզ», «Հյուսիսսփայլ», «Մաշտոց ՀՄՄԿ» մշակութային միությունները, «Վասպուրական» երիտասարդական միությունը: Իսկ արդեն 1991թ. հիմնվեց Մոսկովյան հայկական համայնքը:

Նույն շրջանում՝ 1988-1990թթ., դեպի Ռուսաստան հայերի մեծ հոսք տեղի ունեցավ Ադրբեջանից՝ Մումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում կազմակերպված ջարդերի և այլ հայաշատ բնակավայրերից հայերի բռնի տեղահանման հետևանքով: Այս նոր ալիքը

---

համալրվեց նաև 1990-ականներին Վրաստանից և Հայաստանից տնտեսական վիճակի վատթարացման պատճառով արտագաղթի ճամփան բռնաձ հայերով:

Այժմ էլ ՌԴ-ն Հայաստանի աշխատանքային միգրանտների թիվ 1 երկիրն է, որը նրանցից շատերի համար ժամանակի ընթացքում աշխատանքայինից վերածվում է մշտական բնակության վայրի:

Հայերը Ռուսաստանում մշտապես աչքի են ընկել բոլոր ոլորտներում՝ ակտիվորեն դրսևորվելով տնտեսական, ռազմական, քաղաքական, պետական կառավարման և սոցիալ-մշակութային ոլորտներում: Ռուսաստանյան հայերի շարքում են ակադեմիկոսներ, պրոֆեսորներ, դոկտորներ, հայտնի բժիշկներ, դերասաններ, նկարիչներ, մարզիկներ, քաղաքագետներ, պետպաշտոնյաներ, ռազմական գործիչներ, ովքեր նպաստել և շարունակում են նպաստել ռուսական պետության բարգավաճմանը:

### ***Հայկական կառույցները***

Հետխորհրդային տարածքում սփռված հայկական կազմակերպությունների շարքում ռուսաստանյան կառույցները գլխավոր նշանակություն ունեն, քանի որ առաջին հերթին ներկայացնում են միլիոնավոր հայերի: Բացի այդ, հայկական սփյուռքը ՌԴ-ում մեծ մտավոր և տնտեսական ներուժ ունի, որի կազմակերպումը և ի նպաստ Հայության ուղղորդումը կարևոր առաջնահերթություն է: Այժմ հայկական կազմակերպված կառույցներ գործում են ՌԴ

բազմաթիվ հայաշատ բնակավայրերում (ՌԴ հայկական կառույցների մասին տե՛ս *Աղյուսակ 3. 9.1-ում*):

Ներկայում ՌԴ-ում գործող հայկական կառույցների բազմանդամ ցանց ունի Ռուսաստանի հայերի միությունը (ՌՀՄ), որը ձևավորվել է 2000թ.՝ ռուսահայությանը ներկայացնող միասնական կազմակերպություն ստեղծելու նպատակով: Այն ընդգրկում է արդեն կայացած բազմաթիվ հայկական կազմակերպություններ ՌԴ տարբեր անկյուններից և շարունակում է ընդարձակվել նոր ձևավորվող մարմինների միջոցով: ՌՀՄ գլխամասային կառույցը և դրա մոսկովյան մասնաճյուղը ղեկավարում է հիմնադիր նախագահ, գործարար Արա Աբրահամյանը: ՌՀՄ-ն միավորում է 64 մասնաճյուղ (տե՛ս Հավելվածի *Աղյուսակ Դ*) ՌԴ հանրապետություններում, երկրամասերում և շրջաններում: Միայն Կրասնոդարի երկրամասում գործում են ՌՀՄ 40-ից ավելի տեղական մարմիններ: Ռուսաստանի հայերի միության և նրա բոլոր մասնաճյուղերի գործունեության հիմնական ուղղություններն են միջհամայնքային կապերի զարգացումը, հայկական եկեղեցիների նորոգումը կամ կառուցումը, խաչքարերի տեղադրումը, կիրակնօրյա դպրոցների և մշակութային կենտրոնների բացումը, պատմական օրերի և ազգային տոների, հիշատակի օրերի նշումը, մշակութային արժեքների և ազգային ավանդույթների պահպանումը: ՌՀՄ մոսկովյան մասնաճյուղին կից գործում են նաև Ռուսաստանի հայերի միության երիտասարդների ասոցիացիան, կիրակնօրյա դպրոց, մշակութային կենտրոն, կինոյի և սպորտի ակումբներ: ՌՀՄ մոսկովյան մասնաճյուղն իր հերթին ասոցիացիաներ է հիմնել նաև Հայաստանում («Լոռի-Վանաձոր» և «Շիրակ-Գյումրի»):

---

Բացի ՌՀՄ կազմում ընդգրկված կամ առանձին գործող հայկական կազմակերպություններից, ՌԴ-ում առկա են նաև հայկական ուսանողական միություններ (օրինակ՝ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի հայկական ընկերակցությունը (*Армянское Сообщество МГИМО (У) МИД РФ*), որոնց գործունեությունը հիմնականում մշակութային-լուսավորչական բնույթ ունի և ուղղված է հայկական ինքնության պահպանմանը, համայնքային կյանքի կազմակերպմանը, տեղի հայության ինքնադրսևորմանը, հայ-ռուսական կապերի ամրապնդմանը:

2010թ. փետրվարին ստեղծվեց Մոսկվայի հայկական կազմակերպությունների ֆորումը, որի նպատակն էր միավորել Մոսկվայում գործող հայկական կազմակերպությունները, համակարգել նրանց գործունեությունը: Ֆորումի առաջին նիստը տեղի ունեցավ փետրվարի 27-ին: Ֆորումն ընտրեց խորհուրդ, որի անդամներն են՝ «Ռուս-հայկական համագործակցություն» կազմակերպության նախագահ Յուրի Նավոյանը, «*Ноев Ковчег*» թերթի գլխավոր խմբագիր Գրիգոր Անիստնյանը, «Արևմտահայերի հայրենակցական միություն» կազմակերպության ներկայացուցիչ Իգոր Զարգարյանը, «Արցախի ընկերներ» ակումբի նախագահ Էդուարդ Ղուլյանը, «Հայ մշակույթի զարգացման հիմնադրամի» նախագահ Մեցո Իգիթյանը, «Արարատ» միության նախագահ Մանվել Դուրակյանը:

ՌԴ-ում գործում են նաև բազմաթիվ հայկական մշակութային օջախներ, ինչպես, օրինակ, Մոսկվայի հայկական թատրոնը, որը հիմնադրվել է ՌԴ-ում ՀՀ դեսպանության կողմից: Այն իր բազմազան խաղացանկով հաջողությամբ հանդես է գալիս ոչ

միայն հայկական և ռուսական, այլ և երրորդ երկրների բեմերում:

ՌԴ-ում բազմաթիվ են նաև հայերենի, հայոց պատմության և հայ մշակույթի ուսուցման կիրակնօրյա դպրոցները: Դրանց շարքում է նաև ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից կիրակնօրյա դպրոցը Մոսկվայում: Հայկական մշակութային դաստիարակության թեքում ունի Մոսկվայի №1110 միջնակարգ դպրոցը (տնօրեն՝ Սեդա Գալոյան): Հայոց լեզու, պատմություն և մշակույթ են ուսուցանում նաև Հայ Առաքելական եկեղեցու «Հայորդյաց տունը» Մոսկվայում և գործող եկեղեցիները ՌԴ մյուս քաղաքներում:

Հայ Առաքելական եկեղեցին ՌԴ-ում ներկայացված է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմով, որի կենտրոնը գտնվում է Մոսկվայում: Այն ընդգրկում է 40-ից ավելի համայնք, որոնցից 27-ը՝ ՌԴ տարածքում: Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի անդամ են նաև Ուկրաինայի, Մոլդովայի, Ուզբեկստանի, Լատվիայի, Բելառուսի Հայ առաքելական համայնքները: Հետխորհրդային շրջանում Հայ Առաքելական եկեղեցուն են վերադարձվել հայկական որոշ եկեղեցիներ: Այժմ հայ համայնքներում գործում են 30-ից ավելի եկեղեցիներ, մատուռներ, կառուցվում են նորերը: Մոսկվայում վեհաշուք հայկական եկեղեցու կառուցման շինարարական աշխատանքներ են ընթանում: Բացի այդ, կառուցվում են եկեղեցիներ ոչ ավանդական, բայց ներկայում հայաշատ ՌԴ շրջաններում՝ Սիբիրի Օմսկ, Տոմսկ, Կրասնոյարսկ, Նիժնի Նովգորոդ քաղաքներում և այլուր:

---

## **Հայկական լրատվամիջոցները**

Ներկայում հայաստանյան լրատվամիջոցներից ՌԴ-ում տարածվում են ռուսերեն «Հայաստանի Հանրապետությունը» և «Голос Армении»-ի դայջեսթը: Բացի այդ, ռուսաստանաբնակ հայերը ևս կարողանում են որոշակի տեղ գրավել ՌԴ մեդիա դաշտում՝ թեև ոչ միշտ համառուսաստանյան նշանակության, բայց տեղի հայության համար նշանակալի թերթեր և ամսագրեր հրատարակելով (ՌԴ հայկական լրատվամիջոցների մասին տե՛ս *Աղյուսակ 3.9.2*): Որոշ պարբերականներ առանձնանում են նրանով, որ ունեն ավելի լայն լսարան, ընդգրկում են ոչ միայն ռուսաստանյան, այլ նաև շատ հետխորհրդային երկրների լսարաններ:

Այս առումով առանձին տեղ է գրավում «*Ноев ковчег*» ռուսալեզու ամսաթերթը՝ իր *noev-kovcheg.ru* և *novostink.ru* կայքերով (վերջինս ներկայացնում է առօրյա թարմացվող լրատվական էջ): Տպագիր հանդեսն ավելի քան 500 հազ. մշտական ընթերցող ունի, իսկ կայքերը՝ օրական միջինը 5500 այցելու: Հիմնական թեմաներն առնչվում են ռուսաստանյան իրադարձություններին, հայ համայնքների կյանքին և հայաստանյան ներքին ու արտաքին քաղաքականությանը: «*Ноев ковчег*» ամսաթերթն այն սակավ ՁԼՄ-ից է, որոնք համագործակցում են ոչ միայն հայկական մեդիա դաշտի, այլև բնակության երկրի պարբերականների հետ:

Մեծ լսարանով և հետխորհրդային բոլոր երկրների հայության ճակատագրի մասին հետաքրքրությամբ առանձնանում է ևս մեկ ռուսալեզու ամսաթերթ՝ «*Еркрас*», իր *yerkras.org* կայքէջով:

Թերթի տպաքանակը 17.000 է: Կայքի օրական միջին այցելությունների թիվը կազմում է 1800-2000 հոգի: Երկրամասը հրատարակում է ն՝ հայերեն, ն՝ ռուսերեն հոդվածներ:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի Հայոց թեմը ՌԴ-ում հրատարակում է «Հայաստանյայց Եկեղեցի» (ք.Մոսկվա) և «Լուսավորիչ» (ք.Վոլգոգրադ) պարբերականները:

ՌԴ մեդիա դաշտում առկա են բազմաթիվ հայկական բարձրակարգ ժամանցային-մշակութային ամսագրեր: Դրանց շարքում իր ավանդական տեղն ունի «Անիվ» ամսագիրը: «Անիվը» լույս է տեսնում 2000 տպաքանակով, իսկ թեմատիկան տեղայնացված չէ, այլ ընդգրկուն է, համահայկական: Համապատասխանաբար՝ համագործակցության դաշտը և լսարանը շատ ավելի լայն են: Այն տարածվում է Հայաստանում և Արցախում, ՌԴ, Բելառուսի, Էստոնիայի, Լատվիայի և Ուզբեկստանի հայ համայնքների շրջանակներում: Ամսագրի փոքրաթիվ օրինակներ դուրս են գալիս հետխորհրդային տարածքի սահմաններից՝ ուղարկվելով Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան, Իտալիա, Լիբանան և այլուր: Ամսագիրը նաև տեղակայված է *aniv.ru* կայքում, գլխավոր խմբագիրը հրատապ թեմաները քննարկում է իր անձնական բլոգում (*karen-aghegian.livejournal.com*): Մոսկովյան մեկ այլ ամսագիր՝ «Ժամ»-ը, 10.000 մշտական ընթերցող ունի, 2.5 ամիսը մեկ անգամ հրատարակում է հայերեն և ռուսերեն լեզուներով հոդվածներ:

Մշակութային-ժամանցային ուղղվածության Կրասնոդարի առաջին գունավոր ամսագիրը «Խաչքար» հայկական մշակութային կրթական կենտրոնի կողմից հրատարակվող նույնանուն

---

ամսագիրն է: Մշտական լսարանը կազմում է 25 հազ. հոգի: Գործում է նաև *khachkar.ru* կայքը, որտեղից ռուսերենով և անգլերենով կարելի է տեղեկանալ թարմ համարի հիմնական բովանդակությանը, Կրասնոդարի հայության կյանքում տեղի ունեցած նշանակալի իրադարձություններին և այլն:

Առավել բազմազան են հայկական ինտերնետային էջերը ռուսական դոմեյնային տիրույթում: Նրանց բոլորի համար ընդհանուր է Հայաստանի և Հայության տեղեկատվական անվտանգությանն առնչվող հիմնախնդիրների նկատմամբ զգայունակությունը: Սակայն որքան էլ դրանք շատ են, ակնհայտ է, որ մեծ մասը կամավորական նախաձեռնությունների արդյունք է և հիմնականում որոշակի ակտիվության շրջանից հետո հայտնվում է սառեցված կարգավիճակում ու ժամանակ առ ժամանակ է թարմացվում: Այնուամենայնիվ, գործում են նաև ոչ սիրողական մակարդակի նախագծեր: Առավել նշանակալի հայկական լրատվական, տեղեկատվական-վերլուծական կայքերը ներկայացնում են Հայաստանին և Հայությանը, այդ թվում՝ հետխորհրդային երկրների հայությանն առնչվող հարցեր:

Դրանց շարքում կարևոր դիրք է զբաղեցնում *miasin.ru*-ն, որի նպատակն է աջակցությունը համայն Հայության համախմբմանը: Այն ոչ միայն ներկայացնում է լուրեր հայ համայնքների գործունեությունից, Հայաստանից և Արցախից, այլև ամփոփում է հայկական կառույցների և ԶԼՄ-ի մասին անընդհատ թարմացվող տեղեկատու: Այցելուների թիվը կազմում է ամսական 6000-7000 հոգի:

Կրկին համահայկական տեղեկատվական նշանակության կայք է արագ զարգացող *armenia.ru*-ն՝ իր ենթակայքերով (օրական

միջինը 2000 այցելու): Այն ունի տարբեր լրատվական աղբյուրներից մեջբերումներով կազմված նորությունների բաժին, հայկական մշակույթի բաժին, տեսադարան, հայ-ռուսերեն և ռուս-հայերեն *on-line* բառարան: Պարունակում է նաև հղում *genocide.ru* կայքին, որը Հայոց ցեղասպանության մասին ռուսալեզու հազեցած ինտերնետային ռեսուրս է (գրքեր, հոդվածներ, ելույթներ, վկայություններ, լուսանկարներ):

Հայության տեղեկատվական անվտանգության տեսանկյունից նշանակալի արխիվացման և վերլուծական աշխատանք է իրականացնում *karabah88.ru* կայքը՝ հավաքագրելով և ներկայացնելով Հայաստանի, Հայության և դարաբաղյան իրադարձությունների մասին լրահոսը և արձագանքելով հակահայկական տեղեկատվական հարձակումներին: Այս կայքում ամսական միջին այցելությունները կազմում են 4500, լսարանն ընդգրկում է այցելուներ ՌԴ-ից, Հայաստանից, Ադրբեջանից, Ուկրաինայից և ԱՄՆ-ից:

Հայության մասին ամփոփ շտեմարանի նախագիծ է իրականացնում «Հայազգ» հիմնադրամը, որն արխիվացնում և *hayazg.info* կայքում ներկայացնում է աշխարհի տարբեր անկյուններում հաստատված վաստակաշատ հայ գործիչների, հայկական կազմակերպությունների և Հայության բարեկամների մասին տեղեկատվություն:

2010թ. մարտի 1-ից ՌԴ-ում հեռարձակվում է հայկական ռուսալեզու *ТВ АРМЕНИЯ РУ* հեռուստաալիքը: Հեռուստաալիքի կազմակերպիչներն առաջնային խնդիր են համարում ինչպես Հայաստանի և Ռուսաստանի, այնպես էլ այլ երկրներում բնակվող հայերի հասարակական, մշակութային, քաղաքական և

---

տնտեսական կյանքի լուսաբանումը: *TB APMEHHA PY* հեռուստաալիքը հեռարձակվում է *HOTBIRD* արբանյակի միջոցով:

ՌԴ-ում հայկական ՁԼՄ-ը հիմնականում սերտ առնչություն ունեն հայ համայնքների և գործարարների հետ: Շատ հաճախ հայկական ՁԼՄ-ը և կառույցները հանդես են գալիս միասնական նախաձեռնություններով և միջոցառումներով: Դրանց մի մասը համագործակցում է նաև հայաստանյան կառույցների, ՁԼՄ-ի, վերլուծական կենտրոնների կայքերի հետ: Սակայն ՌԴ հայկական մեդիաներն ունեն նաև հիմնախնդիրներ: Դրանք կապված են Հայության տեղեկատվական անվտանգության համընդհանուր հայեցակարգի և Հայաստանում օպերատիվ արձագանքող ՁԼՄ-ի բացակայության հետ: Դրանք լուրջ խոչընդոտ են ՌԴ ակտիվ մեդիաների համար, քանի որ վերջիններս հաճախ կարիք են ունենում որևէ համահայկական նշանակության իրադարձության առնչությամբ հայաստանյան տեսակետների մասին օպերատիվ իրազեկման: Որոշակի խոչընդոտ է նաև Հայաստանից տարածվող պաշտոնական լրատվության նկատմամբ վստահության ոչ բարձր աստիճանը:

Հայաստանից սպասվող տեղեկատվությունը կապված է ՀՀ ներքին սոցիալ-քաղաքական կյանքի մասին անաչառ լրատվության, Հայաստանում հայրենադարձների կենսագործունեության, Հայաստանի մարզային խնդիրների և իրադարձությունների հետ և այլն:

Հայաստանի և հայ համայնքների մեդիաները փոխադարձաբար լավ չեն ճանաչում տեղական իրականությունները, որոնցում աշխատում են իրենց ազգակից գործընկերները, հետևաբար վիրտուալ կամ *on-line* հաղորդակցումը Հայաստանի և համայնքների միջև առաջնահերթություն է: Հայկական մեդիաների կապը, վիրտուալից

բացի, իրական հանդիպումներով ամրապնդվելու կարիք ունի՝ առնվազն ամենամյա այցելությունների, կոնֆերանսների միջոցով:

ՀՀ կառույցների և ՌԴ մեդիաների համագործակցությունը հնարավոր է Հայաստանի և Հայության շահերի ներկայացման, ինչպես նաև ազգային անվտանգության, մասնավորապես՝ տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների շուրջ, հայրենադարձության ակտիվացման, Հայաստանում ներդրումների խրախուսման և շատ այլ հարցերում:

ՌՂ հայկական կառույցները

Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
1. Մոսկվա	Մոսկվայի հայ համայնք <i>mosarm.ru</i>	Նախագահ՝ Ռոման Հարությունով	<b>Հասցե</b> ՝ ք. Մոսկվա, 123242, Կրամայա Պրեմյա փող., 9 շ., 4. <b>Հեռ.</b> ՝ (+7 495) 2559817, <b>Էլ. փոստ</b> ՝ info@mosarm.ru	Հիմնադրվել է 1991թ.: Տրու- հումանիտից և անվանա- փոխումներից հետո վե- րակազմավորվել է 2000թ.
2. Մոսկվա	«Ռուսաստանի հայերի միության» հասարա- կական կազմակեր- պության <i>sarinfo.org</i>	Նախագահ՝ Արա Աբրահամյան	<b>Հասցե</b> ՝ ք. Մոսկվա, 129272, Սո- վետական բանակի փող. 8 շ., 1 <b>Հեռ.</b> ՝ (+7 495) 7440817, 7440804, 7440824 <b>Ֆաքս</b> ՝ (+7 495) 7440805, 7440817 <b>Էլ. փոստ</b> ՝ sarinos@mail.ru	Հիմնադրման տարեթիվը՝ 2000թ.: Գործունեության ուղղվածությունը՝ ● Հայաստան ● Մշակույթ ● Կրթություն ● Սոցիալական ոլորտ ● Երիտասարդություն ● Մարդու ● Հրատարակչական գործունեություն
3. Մոսկվա	«Ռուսաստանի հայերի միություն» հասարակա- կան կազմակերպության Մոսկվայի մասնաճյուղ	Նախագահ՝ Գեորգի Խալաթյան	<b>Հասցե</b> ՝ ք. Մոսկվա, 129272, Սո- վետական բանակի փող. 8 շ., 1 <b>Հեռ.</b> ՝ (+8 495) 7440817, 7440824 <b>Էլ. փոստ</b> ՝ sarinos@mail.ru	
4. Մոսկվա	Ռուսաստանի հայերի միության երիտա- սարդների ասոցիացիա	Նախագահ՝ Լևոն Մուկանյան	<b>Էլ. փոստ</b> sar-molodezh@mail.ru	Հիմնադրման տարեթիվը՝ 2002թ.: Ռուսաստանի հա- լերի միության երիտա- սարդների ասոցիացիան ոչ միայն ամենաբազմա- մարդ, այլև ամենավտիկ և նախաձեռնող ՌՀՄ կառույցն է

	<b>Քաղաքը</b>	<b>Համայնքային կառույցի անվանումը</b>	<b>Ղեկավարը</b>	<b>Գոտակցության տվյալները</b>	<b>Այլ տեղեկություններ</b>
5.	Մոսկվա	«Ուրարտու» բարեգործական հիմնադրամ <i>urartund.ru</i>	Նախագահ՝ Արմեն Գյուլնազարով	<b>Հասցե՝</b> ք. Մոսկվա, 121835, Արքատի փող. 35 շ., 649 գրասենյակ <b>Հեռ.</b> (+7 495) 7614444 <b>Էլ. փոստ</b> info@urartund.ru	2009թ. մարտին «Ուրարտու» հիմնադրամը ջանքերով բացվեցին հայկական կիրառիկությունը
6.	Մոսկվա	Հայկական մշակութային-լուսավորչական «Արարատ» միություն	Նախագահ՝ Էմմանուել Դոլբակյան	<b>Հասցե՝</b> ք. Մոսկվա, 113519, Կիրովոգրադսկայա փող. 24 շ., 4 մասնաշենք, բն. 170 <b>Հեռ.</b> 9391255, 9380452, 3347201, 3132414, 3320186 <b>Էլ. փոստ</b> hna@mail.sitek.ru	Նպաստակն է Մոսկվայի և Ռուսաստանի հայերի շրջանում լեզվի, մշակութային, կրոնի, ավանդույթների պահպանումը
7.	Մոսկվա	Հայերի ազգային-մշակութային Մոսկվայի շրջանային ինքնավարություն	Նախագահ՝ Մանիլ Գրիգորյան	<b>Հասցե՝</b> ք. Մոսկվա, 119899, Միչուրինսկի պող., 1 <b>Հեռ.</b> 9391255, 9380452 4052420, 4277418, 93853 <b>Էլ. փոստ</b> Grigor@imneh.msu.su	Նպաստակն է Մոսկվայի հայ համայնքի համայնքային կյանքի կազմակերպումը
8.	Մոսկվա	«Հայ-ռուսական համագործակցություն» կազմակերպություն	Նախագահ՝ Յուրի Նախյան	<b>Հասցե՝</b> ք. Մոսկվա, Բ. Ջլատուստի պող. 8/7, 20 սենյակ <b>Հեռ.</b> 6060834	
9.	Մոսկվա	Հայկական միացյալ սպորտի միություն (Հ.Մ.Ը.Մ) համընդհանուր սպորտային միություն <i>homemen.ru</i>		<b>Հասցե՝</b> ք. Մոսկվա, Սովետսկայա փող., 80 շ., 1 <b>Հեռ.</b> (+7916) 2666393 <b>Էլ. փոստ</b> hmemo@mail.ru	Հիմնադրման տարեթիվը՝ 1918թ.: Հիմնադիրներն են Շավարշ Կրիսյանը, Գրիգոր Հավրյանը, Հովհաննես Հինայանը
10.	Մոսկվա	«Նոս» Հայ Առաքելական Եկեղեցու էրիտասարդական միություն <i>armenianchurch.ru</i>	Նախագահ՝ Յու. Բեկնազարյան	<b>Հասցե՝</b> ք. Մոսկվա, Մակենի փող., տուն 10 <b>Հեռ.</b> (+7 792) 66958850 <b>Էլ. փոստ</b> souz_mos_ru@mail.ru	

	Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
11.	Մոսկվա	Հայ երիտասարդների ինտելեկտուալ համագործակցության միություն <i>siv.am</i>		<b>Հասցե՝</b> ք. Մոսկվա, Վերնատսկու պող., սուն 82 <b>Հեռ.</b> (+7 495) 7962468 <b>Էլ. փոստ՝</b> <i>sivam@stv.am</i>	Միություն ունի 70 անդամ: Ընդհանուր առմամբ միության մասնակիցների թիվը 500 է: Կազմակերպվում են տարեկան մոտ 15 սեմինարներ, դասախոսություններ, վշակութատոններ, համագործակցում է 5 տարբեր կազմակերպությունների հետ: Հիմնադրման տարեթիվը՝ 2002թ.:
12.	Սանկտ Պետերբուրգ	«Սանկտ Պետերբուրգի հայկական հայրենակցական միություն» <i>armiane.spb.ru</i>	Նախագահ՝ Աննա Շարափխանյան	<b>Հեռ.</b> (+812) 9213933. <b>Էլ. փոստ՝</b> <i>info@armiane.spb.ru</i>	Կամավոր են ոչ կամերցիոն կառույց է, որը հիմնադրվել է հայ երիտասարդների նախաձեռնող խմբի կողմից. գործում է 1999թ.
13.	Սանկտ Պետերբուրգ	«Սանկտ Պետերբուրգի հայ համայնք» հասարակական կազմակերպություն	Նախագահ՝ Միլոն Պապյան	<b>Հասցե՝</b> ք. Սանկտ Պետերբուրգ, 191011, Նևսկու պող. 42 <b>Հեռ.</b> (+ 812) 2194108, (+ 812) 3505301 <b>Ֆաքս՝</b> (+ 812) 3502892	Հիմնադրվել է 1975թ., գրանցվել է 1988թ., վերագրանցվել՝ 2000թ.: Իրականացնում է կրթական-լուսավորչական գործունեություն: Կապեր է հաստատում ՍՊՀ երկրներում բնակվող հայերի հետ

	Քաղաքը	Համայնքային կառուցվածքները	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
